

813

814

612

D-80

2010

2002

Обращайтесь с книгой любовно и аккуратно.

она служит не вам одному, а многим:

- 1) Не пачкайте книгу надписями и рисунками, не подчеркивайте слов. То, что любите в книге записывайте в свою тетрадку.
- 2) Не портите переплета. При чтении заворачивайте его в бумагу.
- 3) Не загибайте углов у страниц, имейте лучше бумажную закладку.
- 4) Не перелистывайте страниц грязными и мокрыми руками.
- 5) Если у вас имеется в доме заразный больной, то заявите об этом в библиотеку при возврате книги.

149. КОГДА КНИГА ВЗЯТА

320 4/10

190 10/11

КОГДА КНИГА ВЗЯТА



Кауцера.
Ф. Кендровский

18

Обращайтесь с книгой любовно и аккуратно, —
НА СЛУЖИТ НЕ ВАМ ОДНОМУ, А МНОГИМ:

- 1) Не пачкайте книгу надписями и рисунками, не подчеркивайте слов. То, что полюбите в книге, записывайте в свою тетрадку.
- 2) Не портите переплета. При чтении заворачивайте его в бумагу.
- 3) Не загибайте углов у страниц; имейте лучше бумажную закладку.
- 4) Не перелистывайте страниц грязными и мокрыми руками.
- 5) Если у вас имеется в доме заразный больной, то заявите об этом в библиотеку при возврате книги.

Читайте книгу проникновенно, сосредоточенно. Всякая книга обладает скрытой, потенциальной силой — силой. Вскройте ее в книге — и книга даст вам знание, понимание и настроение
СОЛНЕЧНОЕ.

160 КОГДА КНИГА ВЗЯТА 5038

7/11				
-----------------	--	--	--	--

КОГДА КНИГА ВЗЯТА

--	--	--	--	--	--

612 4v
\$-80

e



ՓՕՄԲԲ

4v

ԲՆԱԽՍԱՈՒԹԻՒՆ

58
\$-81

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԳ

20 ՆԿԱՐՆԵՐՈՎ



ԹԱՐԳԱՆՆՑ

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԱՆՑ



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձե || Թիպ. Մ. Շարաձե.

1893

18

16107

Дозволено Ценз. Тифлисъ, 20 Февраля 1893 г.



3367
40



Печатано съ разрѣшенія Управленія Медицинскою частью
гражданскаго вѣдомства на Кавказѣ, 15 Февраля 1893 г.

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀՕՐՍ—

Յովհաննէս քահանայի և թագուհի մօրս

Անտոանայի յիշատակին

Երախտագէտ սրտով

Նուիրում է

Իրանց սրբին

Մ Ի Ք Ա Ն Ի Խ Օ Ս Ք:

Ըսյրել բնութեան մէջ, չիմանալ նորա, գոնեա՛, ամէնանշանաւոր երևոյթների պատճառները. չ՛ունենալ բնագիտական ամենաանհրաժեշտ տեղեկութիւններ, չ՛ճանաչել մարդուն իւր ներքին և արտաքին յատկութիւններով, — այդ միանգամայն աններելի պակասութիւն է: Մարդս բնութեան ծոցում ծնուելով, և ամեն անգամ նորա ազդեցութեան տակ լինելով, նորանից իւր բնածին յատկութիւններով շատ արտաքին տեղեկութիւններ է ստանում, որոնք նորան, իւր անզարգացմամբ, ինչպէս նիւթական, այնպէս և մտաւոր յարբերութեամբ քիչ արդիւնք են տալիս, որովհետև օգտուելու նպատակով նորան յայտնի չեն բնութեան ո՛չ ներքին կեանքը և ո՛չ էլ նորա օրէնքները: Թողովորդին և ածող սերնդին իւր նախնական դրութիւնից բնութեան ներքին կեանքի հետ ծանօթացնելու, հասկացնելու, բարեկարգելու և լրացնելու ա՛յն, ինչ որ նորան իւր անմիջական զննութիւններից և փորձերից յայտնի է, բնութիւնը չ՛ճանաչելու պատճառով շատ սնոտիապաշտութիւններ արմատահասն անելու և բնութիւնով օգտուելու բոլորովին բնական ուղիղ ճանապարհը ցոյց տալու գործը — միանգամայն ուսումնարանինն է: Սա բոլոր լուսաւորեալ երկիրներում նպատակայարմար ամենալաւ միջոցներից մէկն է համարուում. նոյն դերն է կատարում և՛ այժմ մեր մէջ, որի պատճառով ծխական դպրոցներում ներկայ ժամանակս աւանդում են բնական գիտութեան ամեն ճիւղերի վերաբերեալ ամենակարեւոր տեղեկութիւններ, որոնց մինն է կազմում և՛ բնախօսութիւնը: Սորա դասաւանդմանն աւելի կանոնաւորութիւն և գիւրութիւն տալու նպատակաւ առ այժմ ներկայացնում եմ սոյն դասագիրքը, յուսալով, որ սորանով ստացած արդիւնքն անհամեմատ մեծ կլինի:

Սա անգղիացի յայտնի դօքտօր Փօսթէրի կազմած դասագիրքն է — «Բնախօսութիւն» — ֆիզիօլոգիայ անունով, որը



ամենավերջին տպագրութիւնից ուսերէն թարգմանուեցաւ Ք. Н. УЧИТЕЛЬ ամսագրումն, որտեղից և՛ մենք հայերէն թարգմանեցինք, պարզութեան նպատակաւ մի բանի ոճովան փոփոխութիւններով հանդերձ: Սոյն գիրքը, որպէս հռչակուած դասագիրք, իբրև դասաւանդման բոլորովին նոր և ընական ուղղութիւն պահպանող, յատկապէս կազմուած է փոքրերի համար, ՚ի նկատի ունենալով նոցա մտաւոր շրջահայեցողութիւնը, մանաւանդ որ ընակասական երևոյթները նոցա միշտ շատ են հետաքրքրում, որոնց իմանալն էլ իւրաքանչիւր մարդու համար կարևոր է:

Մենք մեր դպրոցների համար ընտրեցինք սոյն դասագիրքը այն պատճառով, որ սա դրուած է բաւականին կենդանի, պարզ, ընդ սմին ամփոփ բովանդակութեամբ և ճիշտ: Հեղինակը մանրամասնութիւնների մէջ չէ մտնում, բայց ինչի մասին էլ, որ խօսում է, հանգամանօրէն է բացատրում: Նա, օրինակի համար, մարմնի մի բանի մկնակներն է յառաջ բերում, բայց ուշիմ կերպով բացատրում է նոցա թէ՛ նշանակութիւնը և թէ՛ գործողութեան եղանակը և այլն. պատմելին միշտ օրինակներով պարզելով, միևնոյնը գեղեցիկ կերպով և՛ ամփոփում է:

Այն ուսուցիչը, որը մեր այս առաջարկած գրքով կը ցանկանայ երեսնաներին մեր մարմնի կազմակերպութեան և կեանքի հետ ծանօթացնել, աւելի լաւ կ'անէ, որ ինքը նախապէս այս առարկան յիշած՝ կամ թէ դոցա նման՝ կենդանեաց վերայ ուսումնասիրէ, որպէս զի դասաւանդման ժամանակ սխալման մէջ չ'ընկնի:

Սոյն գիրքը, բացի վերև յիշած զուտ ուսումնարանական նպատակից, մի այլ նպատակ ևս ունի, այն է—սա ամենայն յաջողութեամբ կարող է, իւր պարզ և հանրամատչելի բացատրութիւններով, մեր հասարակութեան համար իբրև ընթերցանութեան գիրք ծառայել, օգտաւէտ տեղեկութիւններ տարածելու նպատակաւ:

1 Յունուարի 1893 թ.
Տփլիս:

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵԱՆՑ

I.

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

1). Աշնան ժամանակ, երբ հողը քարի նման պինդ է լինում, լճերը սառչում են և ամէն ինչ չորս կողմը սառն է և անշարժ, ճանապարհին վազելով ու խաղալով, կամ սառուցի վերայ սայթաքով սահելով՝ ձեզանից մէկը մի րոպէ չի՞ կանգնել արդեօք և, զարմացած, իրան այսպիսի հարցեր առաջարկել. «ես ինչո՞ւ համար այսպէս տաք եմ, մինչդեռ իմ շուրջս եղող բոլոր առարկաները այդպէս սառն են. ի՞նչիցն է, որ ես շարժւում եմ, վազում եմ, շրջում եմ, թռչում եմ, մինչդեռ այն բոլորը, ինչ որ ես դաշտի մէջ իմ շուրջս տեսնում եմ, բացի մի որ և է ճնճղուկից, բոլորովին անշարժ է»: Այս հարցերին ոչ ոք չի կարող լիովին պատասխան տալ, բայց մենք կարող ենք նոցա միայն մասամբ պատասխանել և մեզ էլ այդ պատասխաններ տուող գիտութիւնը կոչւում է Բնախօսութիւն-Ֆիզիոլոգիա:

2). Դուք կարող էք ձեր սեպհական կամքով շարժուիլ, չսպասելով, որ, ճիւղերի կամ տերևների նման, քամին ձեզ վերայ փչէր, կամ քարերի նման, որ մէկը ձեզ հըրէր: Թաչունները նոյնպէս կարող են սեպհական կամքով շարժուել, ինչպէս և՛ շունը ու իւրաքանչիւր ուրիշ կենդանի, քանի որ կեանք ունի: Եթէ դուք որ և է ձեզ յայտնի տեղ մի քար դնէք, այն ժամանակ հաւատացած էք, որ և՛ միւս օրը, և՛ թէ երկար ժամանակուայ միջոցում ևս նորան նորից մի և նոյն տեղը կ'գտնէք. եթէ չ'գտնէք էլ, այն ժամանակ հաւատացած կ'լինիք, որ նորան մի ուրիշն է տեղափոխել և ո՛չ թէ ինքն իրան շարժուիլ: Բայց եթէ դուք մտադրուէիք որ և է ճահճոտ տեղում մի ճնճղուկ կամ մի մուկը թողնել, այն ժամանակ իսկապէս գիտէք, որ նոքա,

Տէնց որ դուք շուռ դաք, իսկոյն կ'ըմագչին: Բոլոր կենդանիները իրանք իրանց են շարժուում, միայն մինչև այն ժամանակ, քանի որ կեանք ունին: Երբ որ դուք ճանապարհի վերայ մի օձի վէջ էք գտնում, այն ժամանակ ձեր առաջին գործն է լինում նորան փայտով խփել: Եթէ օձը միայն այն ժամանակն է շարժուում, երբ որ դուք նորան շօշափում էք և այն միջոցին էլ քանի որ նորան թոկի կտորի նման էք շարժում: ասում էք, թէ՛ օձը սատկած է: Բայց եթէ ձեր դիպչելով նա ինքը շարժուի, գալարուի և, գուցէ, հետու էլ սողայ, այն ժամանակ դուք կ'իմանաք, որ նա կենդանի է: Ամեն սեռի իւրաքանչիւր կենդանի անասուն, ձեզանից սկսած մինչև հազիւ տեսանելի ամենափոքր արարածը, որ փոքրիկ ջրափոսուած է ապրում, կարող է ինքնակամ կերպով շարժուել: Նորան ինքն իրան թողէք և նա կ'սկսէ շարժուիլ և հանգստանալ, հանգստանալ և կրկին շարժուիլ նորան որեւէ բանով դիպէք և նա կ'հետանայ կամ վազելով, կամ թռչելով, կամ սողալով, կամ լողալով: Սորա նմանը երբեմն և՛ կեանք չ'ունեցող առարկաների հետ է պատահում: Երբ մենք քարը պատի գլխին այնպէս դնենք, որ նա հազիւ հազ պահուի, այն ժամանակ հասարակ դիպչելն անգամ նորան կ'ստիպէ ցած ընկնել: Բայց՝ գետնին հասնելով՝ կ'կանգնի. և եթէ դուք ցանկանում էք, որ նա նորից վայր ընկնի, այն ժամանակ պէտք է նորան նորից պատի գլուխը բերէք: Դուք գիտէք, որ ժամացոյցը, եթէ ձօձանակը շարժէք, երկար ժամանակ է բանում՝ ինչպէս կեանք ունեցող առարկայ: Բայց նա մի քանի ժամանակից յետոյ կանգնում է. իսկ երբ որ կանգնում է, այն ժամանակ դուք նորան կարող էք շօշափել ինչքան որ ցանկանում էք — նա մինչև այն ժամանակ անշարժ կ'մնայ, մինչև որ դուք ինքներդ նորան չ'լարէք: Եւ եթէ ցանկանում էք, որ ժամացոյցը բանի, միշտ պէտք է նորան լարէք: Կենդանի անասունները կարող են նորից և՛ նորից շարժուիլ սկսել և նոցա հարկաւոր էլ չէ լարել, կարծես թէ՛ նոքա միշտ իրանք իրանց լարում են: Արդար և, մեր մարմնի ուսումնասիրութիւնը շարունակելով՝ մենք կ'տեսնենք, որ մեր սեպհահան մարմինը և թէ բոլոր կենդանեաց մարմիններն ևս

նման են ամեն տեսակ զսպանակներով լաւ կազմակերպուած մեքենաների, որոնք անդադար գործում են և միշտ էլ նորից իրանք իրանց լարում:

3). Դուք տաք էք. դուք շատ տաք էք լինում մինչև անգամ ձմեռուայ ամենացուրտ օրը, եթէ շատ էք վազում. շատ տաք էք լինում, եթէ լաւ էք փաթաթուում, որովհետև, ինչպէս ասում էք, հագուստը ձեզ ցրտից պաշտպանում է, (բայց իսկապէս այն պատճառով էք տաք, որ հագուստը ձեր մարմնի տաքութիւնն է պաշտպանում, այսինքն մարմնին պաշտպանում է տաքութեան կորցնելուց և ո՛չ թէ ձեր մէջ ցրտի գալուց): Անկողինը, երբ որ դուք նորա մէջն էք պարկուտ, գուցէ սառը լինի, բայց երբ որ առաւօտեան վեր էք կենում — տաք է լինում: Ձեր մարմինը ինքը կրակի նման տաք է, և տաքացնում էլ է այն բոլորը, ինչ որ իւր մօտն է գտնուում: Թռչունը նոյնպէս տաք է, ինչպէս և շունը, ձին և այն չորքոտանիներից իւրաքանչիւրը, որոնց դուք ճանաչում էք: Միայն մի քանի կենդանիներ կան, ինչպէս օր. օձերը, գորտերը, ձկները, խեղճները, միջատները և ուրիշ սոցա նմանները, որոնք տաքութեան տպաւորութիւն չեն անում, երբ որ դուք նոցա դիպչում էք: Բայց և այնպէս՝ նոցա մէջ ևս միշտ քիչ տաքութիւն կայ, իսկ երբեմն էլ նոքա բոլորովին տաք են լինում: Եթէ դուք ջերմաչափը մեղուի փեթակի մէջ դնէք, երբ մեղուները զբաղուած են, այն ժամանակ կ'տեսնէք, որ նոքա հէնց այդ միջոցին էլ շատ տաք են լինում: Բոլոր անասունները շատ թէ քիչ տաք են, քանի որ կեանք ունին. իսկ մի քանիսները, ինչպէս օր. թռչունները և չորքոտանիները՝ շատ տաք են միայն մինչև այն ժամանակ, քանի որ կենդանի են. մահից յետոյ նոքա արագութեամբ են սառչում: Երբ որ խոտի վերայ բոլորովին անշարժ ընկած մի թռչուն էք տեսնում, այն ժամանակ, նորա մահուան մասին բոլորովին համոզուելու համար, նորան շօշափում էք: — Եթէ նա բոլորովին սառն է, դուք իմանում էք, որ արդէն մի քանի ժամանակ սորանից առաջ է սատկած. եթէ նա դեռ ևս տաք է, այն ժամանակ ասում էք,

որ հէնց նոր է սատկել, գուցէ՛ բոլորովին դեռ չի սատկել և թէ նորան կարելի էլ կ'լինի կենդանացնել:

4). Դուք տաք էք եւ շարժուում էք: Դուք կարող էք շարժուիլ, որովհետև տաք էք. դուք տաք էք, որ կարողանաք շարժուիլ: Այդ ինչպէս է յառաջանում: Մենք մի այնպիսի առարկայ մտաբերենք, որ կենդանի չէ, բայց որը տաք է և շարժուում է, և այն էլ միայն այն ժամանակն է շարժուում, երբ տաք է լինում. իսկ նա տաք է լինում այն պատճառով, որ կարողանայ շարժուիլ: Ես չողեկառքն եմ երևակայում: Մեքենային ինչն է ստիպում շարժուիլ: — Փայտի կամ քարածուխի այրուիլը, որից տաքութիւն է դուրս գալիս, որը ջրին ամբողջ մեքենան շարժող շոգու է դարձնում. հէնց այդ ժամանակ էլ ամբողջ մարմինը տաքանում է: Արպէս զի մեքենան կարողանայ յայտնի քանակութեամբ գործ կատարել, որոշեալ թւով էլ վերստեր անցնել, պէտք է որոշեալ քանակութեամբ փայտ կամ ածուխ այրել. որպէս զի նա կարողանայ շարժուիլը շարունակել — պէտք է փայտի նոր «պաշար» գործ դնել, որի պատճառով և՛ աշխատանքի ամբողջ ընթացքում նա տաք կ'լինի. երբ փայտի ամբողջ պաշարը այրուում է, մեքենան կանգնում է և, մեռած կենդանու նման, սառչում: Այժմ — ձեր մարմինը նոյնպէս շարժուում է և շոգեմեքենայի նման տաք է, որպէս թէ ձեր մարմնի ներսը միշտ կրակ լինի այրուելիս: Այդ կրակը, մեքենայի միջի օջախի նման, ժամանակ առ ժամանակ վառելիքի նոր պաշարի կարիք է զգում, միայն այդ վառելիքը ածուխը չէ, այլ՝ կերակուրը: Մեր մարմինը շոգեմեքենայից երեք բանով է զանազանում: Նախ՝ մեր ներսի կրակը ո՛չ թէ նորա վերայ է մտնում, որ ջուրը գոլորշի դարձնէ, այլ բոլորովին ուրիշ կերպ, ինչպէս մենք յետոյ կ'տեսնենք: Երկրորդ՝ մեր կրակը պահպանում է ո՛չ թէ չոր ածուխով, այլ թաց կերակրով, որը և առանց լուսոյ երևոյթի (առանց բոցի) է կատարում: Երրորդ՝ մեր ընդունած կերակուրը՝ շոգեմեքենայի մէջ այդ նպատակի համար կառուցած վառարանի նրման՝ մեր մարմնի մի որևէ առանձին մասում չի այրուում: Կերակուրը մեր մարմնի մասերի և մասնիկների է փոխարկ-

ւում և ամբողջ մարմնում, կտորը կտորի յետևից, այրուում: Հետևապէս՝ այդ կերակուրը մեր մարմնի ներսը այրուելով (թթուելով), ինչպէս մեր մարմնի մի մասը, մեզ շարժուելու ընդունակութիւն է տալիս և մեր մէջ տաքութիւն պահպանում: Եթէ փորձէք առանց կերակրի մնալ, այն ժամանակ կ'մրսիք, կ'սառչիք, կ'թուլանաք, կ'գունատուիք և չէք կարող շարժուիլ: Եթէ բոլորովին այնքան կերակուր ընդունէք, որքան սննդառութեան համար է հարկաւոր, այն ժամանակ ամենամեծ գործ կարող էք կատարել, ինչպիսին միայն կարող է մեր մեքենան, այսինքն մեր մարմինը՝ կատարել և եթէ դուք ձեր մարմինը կանոնաւոր կերպով կերակրէք, այն ժամանակ նորա մէջ կարող էք ձմեռուայ ամենացուրտ օրերին անգամ տաքութիւն պահպանել, ո՛չ մի արհեստական կրակի կարիք չ'զգալով:

5). Միայն սորա ժամանակ մարմնի ներսը կերակրի այրուելու կամ թթուելու համար դուք օդի (իսկապէս նորա թթուածնի) կարիք էք զգում: Արակը մեքենայի մէջ կ'հանգչի, եթէ վառարանի մէջ թարմ օդ չ'մտնի, նոյնպէս և այն ժամանակ կ'հանգչի, երբ վառելիք չ'լինի: Նոյնը և՛ ձեր կրակի հետ է լինում: Եթէ ձեզ մի ամուր փակած սենեակ գցէին, նոյն վայրկեանից, երբ դուք սենեակը մտաք, օդը սենեակի մէջ կ'սկսէր փոքր առ փոքր փչանալ, նորա օդը սենեակի մէջ կ'սկսէր փոքր առ փոքր փչանալ, նորա միջի թթուածնի քանակութիւնը կ'պակասէր, որովհետև դուք նորան կ'ոչնչացնէիք. մի քանի ժամանակից յետոյ ձեր մարմնի մէջ թթուելը (այրուելը) կ'դժուարանար և դուք շուտով էլ կ'մեռնէիք թարմ օդի (այսինքն նորա թթուածնի) պակասութիւնից: Մեր ամբողջ կեանքի ընթացքում մենք պէտք է մեզ թարմ օդ մատակարարենք. պէտք է միշտ թարմ թթուածին շնչնք:

6). Երբ որ մոմը այրուում է, այն ժամանակ նա գազի, ածխածնածուխի և ջրի է փոխարկուում: Երբ որ փայտը կամ քարածուխն է այրուում, այն ժամանակ մտնիր է ստացուում: Եթէ մեր օրական բոլոր կերակուրը հաւաքէինք և չորացնէինք, այն ժամանակ նա նոյնպէս կարող էր այրուիլ և դառնալ մոխիր, ածխածնածուխ և ջուր, (և՛ դարձեալ մի քանի

նիւթեր ևս, որոնց մասին մենք յետոյ կ'իտասինք): Ձեր մարմինը շնչառութեան ժամանակ միշտ ածխածածկութեամբ և արտաթորում: Ձեր մարմինը թոքերի միջնորդութեամբ միշտ ջուր է արտարում, որը կ'նկատէք, եթէ ապակու վերայ շունչ քաշէք. ջուր է արտաթորում նոյնպէս կաշուի և երիկամուկներէ միջնորդութեամբ, և մենք կ'տեսնենք էլ, որ ջուրը կերակրի և եմբիքի միջոցով ընդունածից՝ միշտ առաւել է արտաթորում: Ձեր մարմինը նոյնպէս ամեն օր երիկամուկներով և աղիքներով այնպիսի նիւթեր է արտաթորում, որոնք շատ նման են մոխրին: Մենք կերակուրը թթուեցնում ենք ոչ թէ բոլորովին իբրև մոխիր, այլ նորան շատ մօտիկ նիւթեր. մենք նորան այնպիսի նիւթերի ենք այրում, որոնք մարմնի մէջ թթուելու համար արդէն անպէտք են, և որոնք, արդէն անօգուտ լինելով, նորանից դուրս են գցւում, (ինչպէս ծաղկամանի միջի ուժից ընկած հող): Այսպէս ուրեմն շնչառութեան ժամանակ ձեր ընդունած օդի թթուածնի օգնութեամբ դուք ձեր մարմնի մէջ տարած կերակուրը թթուեցնում էք (այրում էք): Գուր արտաբերում էք ջրից, ածխածածկութեամբ և թթուանալուց յետոյ մնացած միւս անպէտք նիւթերից, իսկ թթուելու պատճառով էլ ձեր տարութիւնն և զօրութիւնն էք պահպանում, որը ձեզ շարժուելու ընդունակ է դարձնում: Այդպիսով ձեր ամբողջ կեանքի ընթացքում դուք միշտ օդի (նորա թթուածնի) և կերակրի կարիք էք զգում: Գուր օդը ընդունում էք իւրաքանչիւր ներշնչելիս, իսկ կերակուրը — ամեն մի ուտելիս: Բայց թէ՛ անպէտք նիւթերից ինչպէս էք արտաբերում, մենք այդ մասին յետոյ կ'իտասինք: Եթէ դուք այնպէս ապրէիք, ինչպէս հին ժամանակներում մէկ փիլիսոփայ էր ապրում, այսինքն մեծ լաւ կը շեռքի վերայ, այն ժամանակ կ'տեսնէիք, որ այն թաթը, որի վերայ գտնուում էր, իւրաքանչիւր ուտելիս կ'ցածրանար (այսինքն ուտելուց յետոյ չ'ծանրանայիք), իսկ յետոյ ձեր քաղցածութեան համեմատ, աստիճանաբար կ'բարձրանար: Եթէ դուք կերակուրը ձեր կարիքից ավելի ընդունէք, այնպէս որ նորան ամբողջապէս չ'կարողանաք գործ դնել, այն ժամանակ նորա ավելորդը ձեր մարմնի մէջ կ'մնայ, նորա մասը դառ-

նալով, և դուք էլ օր ըստ օրէ ավելի կ'ծանրանաք. եթէ դուք կարիքից քիչ կերակուր ընդունէք, ավելի և ավելի կ'նիհարիք և կ'թեթեանաք: Եթէ նորան ճիշտ այնքան ընդունէք, որչափ ձեզ հարկաւոր է, այն ժամանակ ձեր կշիռը օրէց օր միւսնոյնը կ'մնայ:

Այս գրքոյկի մէջ մենք կ'իմանանք, թէ կերակուրը ինչպէս է մեր մարմնի մասը դառնում, ինչպէս է նա թթուում (մեր մէջ այրում), ինչ եղանակով է թթուացում մեզ շարժուելու զօրութիւն տալիս, ինչու մենք կարող ենք ամեն կերպ շարժուել, երբ ցանկանում ենք, կամ ինչպէս ցանկանում և որքան ցանկանում: Բայց նախ և առաջ մենք պէտք է փոքր 'ի շատէ մեր մարմնի կազմուածքը ընենք, պէտք է իմանանք, թէ նա ինչպիսի մասերից կազմուած և թէ այդ մասերն էլ միմեանց հետ ինչպէս են միացած:

II

ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԸ.


7). Երբ որ դուք ցանկանում էք ձիւնից մարտու պատկեր շինել, առաջ վերցնում էք ձիւնի մէկ մեծ գունդ և ապա նորանից բունն (իրանն) էք կազմում: Բունը՝ ոտների տեղ ծառայող՝ երկու ուրիշ գնդի կամ գլանակի վերայ է դրւում: Բնի գագաթից մօտիկ դուր՝ իւրաքանչիւր կողմից՝ փոքրիկ գնդեր էք կպցնում, որոնց ձեռքեր էք անուանում. վերջապէս ամենից վերև տեղաւորում էք մի կլոր գունդ — գլուխը: Գլուխը, բունը և անդամները, այսինքն ձեռները և ոտները, բոլորը միասին մարմինն են կազմում: Ձեր ձրնապատկերում այդ բոլոր մասերը միատեսակ ձիւնից են կազմուած, միմեանցից միայն չափով և ձևով զանազանուելով. բայց ձեր սեպհական մարմնի մէջ գլուխը, բունը և անդամները բոլորովին այլ կերպ են կազմուած, այնպէս որ դուք նոցա, իբրև տարբեր մասեր, կարող էք հեշտութեամբ զննել. Բայց և այնպէս՝ դուք մասերով լաւ չէք կարող ձեր

մարմնի կազմութիւնը հետազննել. այդ աւելի լաւ կարելի է սատկած ճագարի (իսկ եթէ գորանից չկայ) — ոչխարի, շան, կամ ուրիշ կենդանու մարմնի վերայ անել: Գործի սկզբնաւորութեան համար մենք այդ անդամներից մէկը հետազննենք, օր. ճագարի ոտը: Ամենից առաջ դուք նորա վերայ բրդով ծածկուած կաշի կ'տեսնէք: Եթէ դաշտով կամ մկրատով զգուշութեամբ կաշին կտրէք և ոտը բաց անէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ կաշին ներսի կողմից հարթ է և փայլուն: Կաշուի տակ այն է գտնուում, որին դուք միս էք անուանում, փոքր ինչ դժգոյն, ոչ այնպէս կարմիր, ինչպէս եզան կամ ոչխարի միսը, բայց բոլորովին նոցա նման: Միսը գուցէ փոքրիկ քանակութեամբ ճարպով ծածկուած լինի: Ոչխարի ոտի վերայ, շատ կարելի է դուք տեսնելու յարմար դէպք ունենաք, շատ ճարպ է գտնուում. ճագարի ոտի վերայ շատ բիչ է: Այդ կարմրագոյն միսը մկաններ կամ մկնակներ են կոչուում. մենք այսուհետեւ նորան այսպէս պէտք է անուանենք: Եթէ դուք մկնակը փոքր ինչ քրքրէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ նորան հեշտութեամբ կարելի է ոտի երկայնութեամբ գնացող մասնիկների կամ նրբաթելերի բաժանել. մկնակը իւր երկու ծայրերիցն աճուր կպած է ոտին, իսկ իւր միջին մասուամբ թոյլ է: Իւրաքանչիւր նրբաթել կոչուում է և՛ մկնակ: Գուք կ'տեսնէք, որ այդ մկնակներից շատերը միանում են. երբեմն մէկ, երբեմն երկու ծայրում մէկ զանգուածի, սպիտակ կամ կապտասպիտակ գոյնի փայլուն ժապաւենի տեսքով, որը պարզապէս մկնակի բաղադրութիւնից բոլորովին այլ կերպ բաղադրութիւն ունի: Այդ կապերը կոչուում են ջլեր: Զլերը ոչ փափուկ են և՛ ոչ մաշի, ինչպէս մկնակները, այլ պինդ են և կոշտ: Երբեմն նոքա լայն և երկար են լինում և երբեմն երկար ու բարակ: Երբ որ դուք մկնակները մէկը միւսից բաժանէք, այն ժամանակ նոցա մէջ ոտի երկայնութեամբ գնացող փոքրիկ, սպիտակ, փափուկ, շատ յաճախ ճիւղաւորուող և այնուհետեւ անտեսանելի դարձող թելեր կ'նշկատէք: Գոքա նեարդներն են: Մկնակների մէջ նոյնպէս կարմիր կամ կարմրասււ գոյնի ուրիշ թելեր ևս են գտնուում,

3367
40

որոնցից, եթէ դուք ծակէք, արեան կաթիլներ են դուրս գալիս: Գոքա նեարդներն են, որոնք իսկապէս թելեր կամ լարեր չեն, այլ ներսից սնամէջ, արիւնով լիբը, խողովակներ են: Երակների մօտ, շատ քիչ արիւն պարունակող, կամ բոլորովին չպարունակող, ուրիշ փոքրիկ խողովակներ են գտնուում: Գոքա զարկերակներն են: Թէ երակները և թէ զարկերակները կոչուում են արիւնատար անոթներ. դուք հեշտութեամբ կարող էք նոցանից աւելի հաստերի վերայ նկատել, որ նոքա իսկապէս սնամէջ խողովակներ են: Վերջապէս՝ մկնակների բաժանելը միշտ շարունակելով, մենք ոտի մէջ տեղը ամուր ոսկր կ'գտնենք, և, եթէ դուք լաւ զննէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ մկնակներից շատերը այդ ոսկրին են կպչում: Այժմ, եթէ փորձէք բոլորը առաջուայ տեղերում կրկին միասին գումարել, այն ժամանակ կ'նկատէք, որ դուք, թէև չպատուցիք, չկտրեցիք և չփչացրիք՝ ոչ անոթները, ոչ մկնակները, ոչ ոսկրը, այնուամենայնիւ չէք կամող բոլորը այնպէս գումարել, ինչպէս առաջ էր: Բոլորը խմնուած կ'երևայ: Այդ մասամբ նորանից է յառաջանում, որ, թէ և դուք չփչացրիք ոչ մկնակները, ոչ արիւնատար անոթները, միայն փչացրիք՝ կաշին, մկնակները, արիւնատար անոթները և ոսկրը միմեանց հետ միացնող՝ մի ուրիշ բան. — եթէ դուք զննէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ նոցա բոլորի մէջ բարակ նրբաթելային նիւթ է գտնուում, որը նոցա բոլորին միմեանց հետ կապում է և փաթաթում, ինչպէս բամբակը, ինչով որ զիւրարեկ իրերը, կամ խողովակները ու զարկելու ժամանակ փաթաթում են: Մեզանից փչացած և կտրուած այդ կապող նիւթին միացնող նիւթ են կոչում, որովհետև բոլոր մասերը միմեանց հետ նա է միացնում: Այսպէս ուրեմն՝ ոտի մէջ (այնպէս և ձեռքում) մենք գրտնում ենք՝ կաշի, ճարպ, մկնակներ, ջլեր, արիւնատար անոթներ, նեարդեր և ոսկրներ, որոնք միմեանց հետ միացնող նիւթով են կպած. կաշին վերեւից է գտնուում, իրմով բոլոր մնացած տեղը ծածկելով: Այդ ամենը ամուր ոտքն է կազմում. առանձին մասերը կոչուում են ոտքի մասեր:

8). Եթէ դորանից յետոյ ճագարի բունը շուտ տաք և



փորի վերայի կաշին ճղէք, ամենից առաջ կրկին մկնակներ կ'տեսնէք՝ նեարդերով և արիւնատար անօթներով միասին, ինչպէս և ոտքի մէջ: Բայց եթէ դուք զգուշութեամբ մրկնակները կտրէք — (որովհետեւ այստեղ չէք կարող հեշտութեամբ նոցա միմեանցից բաժանել), այն ժամանակ կ'պատահէք մի այնպիսի բանի, այսինքն մեծ խոռոչի, ինչպիսին ոտի մէջ չէք տեսել: Դա բոլորովին նոր բան է և դորա նմանը ոտի մէջ չ'կայ: Այդ մեծ խոռոչ է, ամբողջապէս ինչ մի բանով լիբը, բայց և այնպէս խոռոչ է. և եթէ դուք ճագարի բունը առջևի կողմից — վերեւից մինչև ներքև ճեղքէք և բաց անէք, կամ կողքերն այնպէս հանէք, ինչպէս ցոյց է տուած I նկարի մէջ, այն ժամանակ կ'տեսնէք, որ ամբողջ բունը վերեւից մինչև ներքև, վզից մինչև ոտները, ներսից խոռոչ ունի: Նորան ուշագրութեամբ հետազննելով, դուք կ'տեսնէք, որ այդ խոռոչը Ստոծանի կոչուած տրամագծային միջնորմով (նկար I Ս.) երկու մասերի է բաժանուած: Ստոծանուց ցած գտնուած խոռոչի մասը վերեւից մեծ է և կոչուում է որովայնի խոռոչ, կամ որովայն. նորա մէջ դուք կ'տեսնէք լայն մուգ-կարմրագոյն մի զանգուած, որը լեարդըն է (L): Նորանից ներքև գտնուում է հարթ-գծագոյն ստամոքսը (Ստ.). իսկ մնացած տարածութիւնը բռնում են աղիքային խողովակի, կամ, մի բանի տեղերում շատ նեղ (O), միւսերում շատ լայն (ն. ա), մինչև անգամ ստամոքսից լայն՝ աղիքների գալարուածքները: Աղիքները բարձրացնելով, որը հեշտ է անել, դուք նոցա յետևը երկու մուգ-կարմրագոյն գեղձեր կ'գտնէք, իւրաքանչիւր կողմից մէկ-մէկ հաս: Գորա երկկամուներն են: Ստոծանու վերև գրտնուած կրծքի խոռոչ, կամ կրծքի վանդակ անուանուած՝ փոքրիկ խոռոչի մէջ տեղ դուք սիրտը (ս) կ'տեսնէք, իսկ նորա իւրաքանչիւր կողմից երկու վարդագոյն-կարմիր մարմին, որոնց եթէ սեղմենք, սպնգանման են երևում: Գորա աջակողմեան և ձախակողմեան թորերն են (Թ): Գուք կարող էք նկատել, որ սիրտը և թոքերը ամբողջ կրծքի խոռոչը չեն բռնում, ինչպէս որ որովայնի խոռոչը բռնում են լեարդը, ստամոքսը, աղիքները և ուրիշները: Մեզ թւում

է, որ կրծքի մէջ շատ դատարկ տեղ կայ: Բայց, ինչպէս յետոյ կ'տեսնենք, թոքերը բոլորովին կրծքի խոռոչը մեր բանալուց առաջ են բռնել. միայն երբ որ մենք նորան կտրատեցինք, իսկոյն նորանից յետոյ շատ սեղմուեցան և այդ պատճառով էլ ներսը մեծ դատարկ տեղ երևեցաւ:

9). Այսպէս ուրեմն՝ բունը իսկապէս մէկ մեծ խոռոչ-թիւն է ներկայացնում, որը իւր մէջ, այսպէս կոչուած, փորոտիքն է պարունակում և բաժանուում վերին և ստորին մասերի. վերջինում են գտնուում՝ լեարդը, ստամոքսը, աղիքները և մի բանի ուրիշ գործարաններ, իսկ առաջինում են սիրտը և թոքերը: Առջևի կողմից որովայնի խոռոչը միայն կաշուով և մկնակներով է ծածկուած: Բայց եթէ բնի բոլոր կողմերը կազմուած լինէին այդպիսի փափուկ մաշկերից, այն ժամանակ նա հասարակ պարկ կ'լինէր, որը երբէք չէր կարող իւր ձևը պահպանել բացի այն դէպքից, եթէ նա բոլորովին լցրած լինէր: Իսկապէս բունը բոլորովին պարկ չէ՝ փափուկ և անհաստատ փոքրիկ պատերով, այլ արկղիկ է իւր, մի քանի մասերում, ամուր և կոշտ փոքրիկ պատերով: Արկղը երբ առջևից կտրատում էինք, դուք նկատեցիք, որ մեզ շատ ամուր մասեր էին պատահում — դորա կողերն էին (նկար I կ.կ.). իւրաքանչիւր կող կազմուած է ամուր ոսկրից և փոքր ինչ աւելի փափուկ կոճիկ կոչուած նիւթից: Իսկ եթէ դուք որովայնի կամ կրծքի խոռոչներից բոլոր փորոտիքը հանէք և մատը այդ խոռոչների յետին մասի երկայնութեամբ տանէք, այն ժամանակ՝ բնի ամբողջ երկայնութեան վերայ, վզից մինչև ոտները, մի կարծր մաս կ'շոշափէք: Դա մէջքի ողնաշարն է: Երբ որ ձեզ հարկաւոր է լինում յարգով լցրած խոռոչիակը ուղղել, դուք նորա երկայնութեամբ ձող էք անցկացնում, որպէս զի նորան նեցուկ լինի և ուղիղ կանգնի: Մէջքի ողնաշարը ձեր սեպհական մարմնի համար այդպիսի նեցուկի տեղ է ծառայում և նորան հաստատութիւն տալիս: Որովայնի խոռոչին նեցուկ տալու համար ողնաշարը բոլորովին բաւական է. նորա կողքերի կողմերը և առաջը միայն կաշուով և մկնակներով են ծածկուած. կրծքի խոռոչի կողքերի կողմերը ամրացած են

կողերով՝ այսինքն երկար կիսաբոլորակ ոսկրներով, որոնք յետևից ողնաշարին են կպած, իսկ առջևից — մեր մարմնի պինդ մասին, որը մասամբ կազմուած է կռճիկից և կոչուում է կլործոսկր: Բայց ողնաշարը միայն մէկ միակտուր ոսկրից չէ շինուած: Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ դուք երբէք չէիք կարող ձեր մարմինը կռացնել: Որպէս զի մենք կարողանանք կռանալ, դորա համար մեր ողնաշարը կազմուած է շատ փոքրիկ, տափակ, կլոր ոսկրներից, որոնք միմեանց հետ այնպէս են դասաւորուած, որ նոքա, դրամների շրջանակների նման, մէկը միւսին տափակ կողմերով ամուր կպչում են: Ողնաշարի այդ փոքրիկ կլոր և տափակ ոսկրներից իւրաքանչիւրը կոչուում է ող և ունի բոլորովին առանձին ձև: Դուք ձեզ մի ոսկրեայ խցան պատկերացրէք, նորա դրսի կողմերից մէկին ոսկրէ օղակ կպած: Այդպիսի ձև էլ կ'ուսենայ ողը: Խցանի ձև ունեցող կարծր մասը կոչուում է մարմին, իսկ մէջը անցք ունեցող օղակը — ողնաղեղ: Եթէ դուք որոշեալ քանակութեամբ այդ մարմինները գումարէք միմեանց հետ, նոցա մէկը միւսին տափակ կողմերով դասաւորելով, այնպէս որ ողերի բոլոր մարմինները մէկը միւսի վրայ գան և բոլոր օղակներն էլ իրանց հերթով, մէկը միւսի վրայ պարկեն, այն ժամանակ դուք ողնաշարին շատ նրման մի բան կ'ստանաք. (տե՛ս նկար 2): Խցանները կամ ողերի մարմինները ամուր միացած սիւն են կազմում, իսկ օղակները կամ աղեղները — խողովակ: Այդպիսի խողովակ է գտնուում և՛ ողնաշարի մէջ: Բայց և այնպէս իւրաքանչիւր ող բոլորովին նման չէ խցանին. նորա օղակը ատամնաւոր արտաքին կողմեր ունի, իսկ մարմինները մէկը միւսի հետ միացած են առանձին կերպով, այնպէս որ ողերի մարմինները բոլորը միասին բունը պահպանող պինդ սիւնն են կազմում, իսկ բոլոր աղեղները՝ ողնային խողովակ անուանուած խողովակն են ձևացնում (նկար 2 Ն), որի նշանակութիւնը մենք իսկոյն կ'տեսնենք: Ողերի կլոր, տափակ մարմինները բնի խոռոչի ուղղութեամբ դէպի առաջ են դարձած. ամբողջ ողնաշարի երկայնութեամբ դուք ողնային մարմինների հէնց այդ շարքն էք որովայնի խոռոչի ներսի մասում մատնելով շօշափում: Ողն-աղեղները մարմինների յետևն են գտնուում, այդ պատճառով դուք նոցա չէք կարող որովայնի խոռոչի ներսի կողմը շօշափել. բայց եթէ ճագարին մէջքով դէպի վերև շուռ տաք և մատը նորա երկայնութեամբ տանէք, այն ժամանակ կաշուի տակով՝ ամբողջ մէջքի երկայնութեամբ անցկենող՝ մի սրածայր շարք կ'շօշափէք, (նոյնը կարող էք շօշափել և՛ ձեր սեպհական մարմնի վերայ), որը կազմուած է, այսպէս կոչուած, ուսերով, այսինքն ողն-աղեղների անհաւասար ծայրերով (նկար 2):

Այսպէս ուրեմն՝ ահա թէ ինչպիսի՞ մասերից է բաղկացած մեր բունը: Առջևի կողմը մեծ խոռոչն է գտնուում, որը փորտափէքն է պարունակում և շրջապատուած է իւր վերին մասում, կամ կրծքի արկղում, ոսկրային գօտիներով, իսկ ներքին մասում, կամ որովայնի խոռոչում, այդպիսի գօտիներով չէ շրջապատուած, կամ թէ՛ այդ մասամբ է միայն. ողերի մարմինների յետևը, ողն-աղեղներով, կազմուած, մի փոքրիկ երկար նեղ խորշ կամ խողովակ է գնում, որը իւր բոլոր տարածութեամբ բոլորովին շրջապատուած է ոսկրներով. թէ նա ի՞նչ է պարունակում, մենք այդ շուտով կ'իմանանք. մէկը միւսից բոլորովին բաժանուած այդ երկու խոռոչների միջով է անցնում ողերի մարմիններով կազմուած պինդ սիւնը: Այնպէս որ՝ եթէ դուք ճագարը վերցնէք և նորա բունի այն տեղը կտրէք, ուր կրծքի խոռոչն է գտնուում, կամ եթէ՛ նորա մարմինը, այսպէս ասած, տրամագծօրէն կտրէք, այն ժամանակ մի այնպիսի բան կ'տեսնէք, որը 2 նկարի վերայ է պատկերացրած, ուր ՆՍ-ն ողնաղեղներով կազմուած նեղ խողովակն է ներկայացնում և որտեղ իւր մէջ Ս — սիրտը պարունակող լայն կրծքի խոռոչը սկզբում շրջապատուած է ողերի յետևը սկսող և կրծոսկրի առաջը վերջացող կողերով: Երկու խոռոչները ծածկուած են մկնակներով, արիւնատար անօթներով, ներարգրով, միացնող անկուածով և կաշուով, բոլորովին այնպէս, ինչպէս և՛ ուր:

10). Այժմ հետազննենք զլուխը եւ՛ պարանոցը: Եթէ դուք ճագարի պարանոցի վրայի կաշին կտրէք, ամենից առաջ կ'տեսնէք մկնակներ, ներարգր և մի քանի հատ էլ

արիւնատար անօթներ, բայց մեծ խոռոչ բոլորովին չէք գըտնել, ինչպէս բնի մէջ, ձեզ կ'թուի, որ պարանոցը իւր կազմակերպութեամբ ոտքին է նման: Բայց եթէ ուշադրութեամբ զննէք, այն ժամանակ երկու խողովակ կ'տեսնէք, որոնք արիւնատար անօթներին են նման և որոնց նմանը դուք ոտի մէջ չէք տեսել: Այդ խողովակներից մէկը պինդ է, ներսից կոշտ օղակներով — դա՛ շնչափողն է. միւս խողովակը փափուկ է և կողմերն էլ միմեանց հետ միանում են. այդ — բերանից մինչև ստամոքսը գնացող՝ որկորն է:

Այդ խողովակների և մկանների յետևը, որոնց միջով նոքա անց են կենում, դարձեալ մի այնպիսի ողնաշար է գըտնւում, ինչպէս և բնի մէջ, որը առանց կողերի է, միայն թէ հէնց այդպիսի ողերից, նոյնպէս և ողնային խողովակ կազմողներից բաղկացած: Այդ սիւնը և այդ խողովակը միայն բնի մէջ անցկացող ողնային սիւնի և խողովակի շարունակութիւնն են: Աւստի և պարանոցը ոտից նորանով է զանազանում, որ նորա ներսի կողմից, բացի ողնային սիւնից եւ խողովակից, անցնում են նաեւ շնչափողը եւ որկորը. ընից նա նորանով է զանազանում, որ չ'ունի ո՛չ խոռոչներ եւ ո՛չ կողեր: Գլուխը մարմնի նկարագրուած մասերից ո՛չ մէկին ոչնչով չի նմանուում: Իսկապէս դուք գլխի կազմուածքը չէք հասկանալ, մինչև որ նորա կողքին ձագարի գանգը չ'գնէք: Այդ անելով՝ դուք իսկոյն կ'տեսնէք, թէ՛ բերանը և կոկորդը ինչպէս են կազմուած: Գուր կ'նկատէք, որ բոլոր գանգը մէկ ամբողջութիւն է կազմում, բացի մէկ ոսկրից, որին իսկոյն ծնօտի, կամ աւելի լաւ է ասել, ստորին ծնօտի տեղ կ'ընդունէք, որովհետև ծնօտներն երկուսն են:

Երկու ծնօտներում շարուած են ատամներ, միայն վերին ծնօտը գանգի մասն է կազմում և անշարժ է, իսկ ներքևինը շարժական. նորան կարելի է ամուր կերպով վերին ծնօտին հուպ տալ և հեշտ էլ է վերջինից հեռացնել: Երկու ծնօտների միջի անցքը դէպի բերանն է տանում, որը, ինչպէս դուք գիտէք, կարելի է ցանկութեան համեմատ բանալ և՛ փակել: Եթէ դուք ձեր բերանը փորձէք բաց անել, այն

ժամանակ կ'նկատէք, որ ձեր, ինչպէս և ձագարի, միայն ստորին ծնօտն է շարժուում: Վերին ծնօտը բոլորովին չի շարժուում. իսկ եթէ շարժուում է, այն էլ միայն ամբողջ գլխի հետ: Գանգի տակ, պարանոցի վերին մասի մէջ, բերանը դէպի կոկորդը նեղանում է, որի վերին մասումն է բացուում քթախորշը: Այդպիսով՝ դէպի կոկորդը երկու ճանապարհ է գընում, մէկը բերանով, իսկ միւսը՝ քթով (նկար 2): Գանգի յետին մասում դուք մի կլոր անց կ'տեսնէք, և եթէ նորա մէջ երկաթէ թել մղէք, այն ժամանակ կ'հասկանաք, որ նա դէպի գանգի ներսն եղած ընդարձակ եւ ըն է տանում: ձագարի կենդանութեան ժամանակ այդ խորշը լիքն է լինում ուղեղով: Գանգն է ուղեղը պահպանող ոսկրէ սնդուկ, ոսկրէ արկղիկ ուղեղի համար: Այդ արկղիկը այնպէս է տեղաւորուած պարանոցի ողերի գլխին, որ կլոր անցքը, որի մասին մենք այս բոպէիս յիշեցինք, ուղղակի՝ օղակներով, կամ ողնաղեղներով կազմուած խողովակի գագաթի վրայ է դալիս: Եթէ դուք ամենաներքին ողնաղեղի միջով երկաթէ թել մղէք, այն ժամանակ նորան կարող էք բոլոր ողնաղեղներով կազմուած ամբողջ խողովակի միջով ուղղակի ուղեղի խորշը մտցնել: Իսկապէս ուղեղի արկղիկը և ողնաղեղների շարքը մէկ խողովակ են գոյացնում, որը մէջքում և պարանոցի մէջ նեղ է, բայց գլխի մէջ լայնանում է և կլոր ձև ընդունում (նկար 2, A. B. C. D. E.):

Կենդանու կեանք ունեցած ժամանակ այդ խողովակը լցուած է լինում սպիտակ, նուրբ և մի ուրիշ առանձին նիւթով, որը նեարդային նիւթ է կոչուում: Գանգի խորշը լցնող այդ նիւթի կլոր զանգուածը գլխի ուղեղ է կոչուում. աւելի բարակ զանգուածը, որը ճիպոտին կամ ժապաւէնին է նման և գտնուում է մէջքի ու պարանոցի ողնային խողովակում, ողն-ուղեղ (կամ մէջքի ուղեղ) է անուանուում: Նոքա զանազան անուններ են կրում, բայց անբաժան կերպով միացած են մէկը միւսի հետ և մինչև անգամ դժուար է ասել, թէ՛ որտե՞ղ է սկսւում մէկը և որտե՞ղ է վերջանում միւսը:

11). Գանգի մէջ, մեծ անցքին կից, որի մասին մենք

խօսեցինք, դուք ոսկրէ արկղիկի ներսը գնացող շատ փոքրիկ ծակոտիքներ էք տեսնում. այդ ծակոտիքներից մի քանիսնորի միջով անասունի կենդանութեան ժամանակ արիւնատար անօթներ էին անցկենում, իսկ միւսներով անցնում էին նուրբ սպիտակ թելեր, որոնք նետարդեր են կոչւում: Նետարդերը իսկապէս գլխի և մէջքի ուղեղից դուրս եկող նետարգային նիւթի ձիւղաւորութիւններն են: Գլխի ուղեղից դուրս եկող նետարգերը գանգի միջի ծակոտիքներով են անցնում և թեթեւ հայեացքից երևում է, որ նոքա մարմնի մէջ շատ անկանոն կերպով են տարածւում: Նոքա, որոնք ողն-ուղեղից են դուրս գալիս, աւելի կանոնաւոր կերպով են բաժանւում: Նետարգերը դուրս են գալիս ողնաշարի իւրաքանչիւր կողմից — երկու ողերի միացման բոլոր տեղերից, որի համար են ծառայում այդ տեղերում գտնուած փոքրիկ անցքերը, այնպէս որ երբ նետարգերի կտորները ողնաշարից դուրս տանող անցքերի մօտ դեռ ևս ամբողջ են լինում, մէջքի շարքը իւրաքանչիւր կողմի ատամնաւոր սանրի ձև է ընդունում: Ողն-ուղեղից դուրս եկող նետարգերը մէջքի նետարդեր են կոչւում և շուտով ողնաշարից դուրս գալուն պէս ձիւղաւորւում են և այդպիսով գրեթէ՝ ամբողջ մարմնի մէջ տարածւում: Կաշուի կամ մսի ինչ մասն էլ որ հետազննէք, մարմնի ինչ մասում էլ որ լինի, դուք ամենայն տեղ նետարգերի և արիւնատար անօթների կ'պատահէք: Եթէ դուք նետարգերը մի որևէ ուղղութեամբ հետազննէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ նոքա միանում են աւելի հաստ թելերի, իսկ սոքա էլ իրանց հերթով, աւելի հաստ նետարգերի, մինչև որ գլխի կամ մէջքի ուղեղը կ'մտնեն: Եթէ դուք սկսէք նոցա հակառակ ուղղութեամբ հետևել, այն ժամանակ կը տեսնէք, որ նոքա աւելի և աւելի բարակ նետարգերի են ձիւղաւորւում, որոնք, վերջապէս, այնպէս բարականում են, որ նոցա արդէն հասարակ աչքով չի կարելի տեսնել: Եթէ դուք խոշորացողը վերցնէք, կ'տեսնէք, որ նոքա միշտ շարունակ ձիւղաւորւում են և մինչև անբնական նուրբ թելերի հասնում: Արիւնատար անօթները նոյն կերպ աւելի հաստ խողովակների են միանում, որոնք բոլորն էլ սրտի

մէջ են վերջանում, ինչպէս մենք ներքեւ կ'տեսնենք: Մարմնի իւրաքանչիւր մասը (քիչ բացառութիւններով) նետարգերով և արիւնատար անօթներով է լցուած: Բոլոր նետարդերը դուրս են գալիս գլխի կամ մէջքի ուղեղից, իսկ բոլոր անօթները — սրտից: Այսպէս ուրեմն՝ մարմնի իւրաքանչիւր մասը կառավարւում է երկու կենտրոններով — սրտով և գլխի կամ մէջքի ուղեղով: Երբ որ մենք մեր առարկայի ուսումնասիրութեան մէջ փոքր ինչ առաջ գնանք, դուք կ'տեսնէք, թէ՛ այդ իմանալը ինչքան կարևոր է:

12). Այսպէս ուրեմն՝ մարմնը հետևեալ կերպով է կազմուած: Սկսենք գլխից: Նա բաղկացած է կաշուի և մտով ծածկուած գանգից, իսկ գանգի ներսն է գտնուում գլխի ուղեղը: Գանգը գտնուում է ողնաշարի վերև, ուր գլուխը պարանոցի հետ է միացած: Պարանոցի վերին մասում կոկորդը երկու խողովակների կամ անցքերի է բաժանւում, որոնցից մէկը որկորն է, իսկ միւսը շնչափողը: Այդ խողովակները ողնաշարի առջևի կողմից պարանոցի երկայնութեամբ են գնում և ծածկուած են շատ մկնակներով, ուսերից մի քիչ ներքև գնալով՝ նոքա բնի մեծ խոռոչն են մտնում, ամենից առաջ կրծքի խոռոչն անցնելով: Այստեղ շնչափողը թոքերի մէջն է վերջանում, բայց որկորը՝ ողնաշարի մօտով՝ կրծքի խոռոչի միջից ստոծանու մէջ եղած անցքով որովայնի խոռոչն է գնում: Որովայնի խոռոչի մէջ ընդարձակուելով՝ նա ստամոքսն է կազմում: Յետոյ որկորը կրկին սեղմւում է, աղիքներ գոյացնելով, և, որովայնի խոռոչի մէջ շատ գալարմունքներ անելուց յետ, նոցանով վերջանում: Գուք տեսնում էք, որ մարտողութեան խողովակը (այդպէս է կոչւում որկորից, ստամոքսից և աղիքներից կազմուած այդ երկար խողովակը) բնի ամբողջ խոռոչով է անցնում, որի ժամանակ նորանից դէպի նոյն իսկ խոռոչը ոչ մի խողովակ չի բացւում, այնպէս որ նորանից այդ խոռոչի մէջ ոչինչ չի կարող ընկնել և, ընդհակառակն, խոռոչից էլ ոչինչ չի ընկնիլ որկորի մէջ: Բացի մարտողութեան խողովակից՝ կրծքի խոռոչի մէջ է գտնուում շնչափողը թոքերի հետ միասին և՛ սիրտը իւր մեծ արիւնատար անօթներով, իսկ որովայնի խոռոչում են լետարգը,

երկամունքները և միւս գործարանները: Այդ երկու մեծ
 խոռոչները բոլոր փորոտիքներով՝ մսից և կաշուից կազմուած
 ծածկոցների հետ միասին, որոնք խոռոչների պատերն են կազ-
 մում, բունն են գոյացնում, որին զոյգ-զոյգ կպած են ոտնե-
 ները և ձեռները: Աերջններում մեծ խոռոչներ չկան և մար-
 սողութեան գործարաններն էլ նոցանից հեռու են կանգնած:
 Գարձեալ պէտք է նկատել, որ մարմնի մէջ գտնուում է միայն
 մէկ լեարդ, միայն մէկ մարսողութեան խողովակ, մէկ սիրտ,
 բայց երկու երկկամունք, երկու թոք—այնպէս որ մարմնի
 իւրաքանչիւր կողմին ընկնում է մէկ-մէկ երկկամունք և մէկ-
 մէկ թոք. ինչպէս երկու թոքերը, այնպէս և երկու երկկա-
 մունքները բոլորովին միմեանց նման են: Ձեռները և ոտները
 նոյնպէս զոյգ-զոյգ են, դորա հետ և՛ երկու ձեռները միա-
 տեսակ են, նոյնպէս և ոտները: Գլուխը մէկ է, բայց նորա
 երկու կէսերը բոլորովին մէկը միւսին նման են: Ողնաշարի
 մէկ կէսը նոյնպէս բոլորովին նման է միւսին, ինչպէս
 գլխի և մէջքի ուղեղի մէկ կէսը նման է միւս կիսին: Իսկա-
 պէս՝ եթէ դուք ճագարին քթից մինչև ազին կէս անէք, այն
 ժամանակ կ'նկատէք, որ բացի մարսողութեան խողովակից,
 սրտից և լեարդից, մարմնի մէկ կէսը միւսին բոլորովին նման
 է: Այսպէս է ճագարի կազմուածքը, նոյնպէս և ձեր մարմ-
 նունը. իմ նկարագրած բոլոր յարաբերութիւններով սա ճա-
 գարի մարմնուն է նման:

III

ԵՐԻ ՈՐ ԳՈՒՔ ՉԵՐԺՈՒՄ ԷՔ ԻՆՉ Է ՅԱՌԱՋԱՆՈՒՄ:

13). Այժմ դառնանք այն հարցին, թէ՛ մենք ի՞նչպէս
 ենք շարժուում: Ամենից առաջ քննենք մի որևէ շարժողու-
 թիւն և աշխատենք հասկանալ թէ՛ նա ի՞նչպէս է կատար-
 ւում: Օրինակ, դուք կարող էք ձեր ձեռքը կռացնել: Գուք
 գիտէք, որ, երբ ձեր ձեռքը սեղանի վերայ հանգիստ դրած
 է լինում, եթէ ցանկանաք, կարող էք նորա ներքին մասը (ո-

րին կանգուն են անուանում և որը թաթից մինչև ար-
 մունկն է տարածուում) վերին մասին այնպէս կպցնել, որ
 մասները ուսին կպչին: Այդ ի՞նչպէս էք անում: Նայեցէք.
 կմտիքի ձեռքի ոսկրներին (տես նկար 3): Գուք կ'տեսնէք,
 որ ձեռքի վերին մասում միայն մէկ, բաւականին հաստ ոսկր
 կայ (β), որը ուսից մինչև արմունկն է տարածուում, այն
 ինչ կանգունի մէջ երկուսն է գտնուում. նոցանից մէկը (Ա)
 միւսից (Ժղ.) արմունկի մօտ լայն է և մեծ, իսկ դաստակի մօտ
 փոքր և բարակ: Ձեռքի վերին մասի ոսկրը կոչուում է ըս-
 զուկ (կամ ուսոսկր). կանգունի այն ոսկրը, որը արմունկի
 մօտ հաստ է՝ անուանուում է արմունկի ոսկր, իսկ այն, որը
 հաստ է դաստակի մօտ—ծղիկ: Ուշադրութեամբ գննելով կը
 տեսնենք, որ արմունկի մօտ բազկի ծայրը կլոր է, իսկ նորան
 կից եղող արմունկի ծայրը փոսընկած. առաջին ոսկրի ծայ-
 րը մասամբ այդ փոսի մէջն է մտնում: Եթէ փորձէք կմտիքի
 ձեռքի մէկ ոսկրը միւսի շուրջ շարժել և արմունկի ոսկրն
 էլ ուսին շատ մօտիկ կպցնէք, այնուամենայնիւ ոսկրների ծայ-
 րերը այդ ժամանակ չեն բաժանուիլ և դուք էլ կ'նկատէք,
 որ արմունկի ոսկրի վերև և ներքև կատարած այդ շարժո-
 ղութեան միջոցին նորա ծայրը ազատօրէն կարող է բազկի
 ծայրի վրայով սահել: Բայց նոքա մէկը միւսի վերայ սա-
 հում են միայն մէկ ուղղութեամբ՝ դէպի վերև և ներքև:
 Գուք եթէ փորձէք արմունկի ոսկրը դէպի արտաքին կողմը
 շարժել այն ժամանակ կ'տեսնէք, որ այդ ուղղութեամբ նա
 չի կարող շարժուիլ: Այսպէս ուրեմն՝ ձեռքի ոսկրների հա-
 մար միայն մէկ շարժողութիւն է հնարաւոր, որը նման է
 դռան կրունկների վերայ կատարած շարժողութեանը. (դէպի
 բազուկ՝ արմունկի ոսկրի ծալուիլը): Բացի դորանից, լաւ զըն-
 նելով, դուք կ'նկատէք, որ արմունկի ոսկրը դէպի բազկի ա-
 ռաջին մասը կարելի է հեշտութեամբ կռացնել և թէ՛ յետ
 դարձնել մինչև որ երկուսը մէկ ուղիղ գիծ կ'կազմեն, միայն
 թէ՛ դուք չէք կարող արմունկի ոսկրը բազկի յետին մասին
 կպցնել: Չննելով արմունկի ոսկրի ծայրը, մենք նորա յետևը
 կտցած և ոստ կ'գտնենք (նկար 3), որը բազկի ծայրին է յե-
 ւում, երբ երկու ոսկրները ուղիղ գծով են ձգուում և այդ-

պիսով բոլորովին թոյլ չի տալիս արմուճնկի ոսկրին շատ յետ ծալուիլ, այդ պատճառով ձեր ձեռքը միայն մէկ ուղղութեամբ կարող էք ծալել: Գուք շատ լաւ գիտէք, որ ձեռքը կարելի է առջևի կողմից կռացնել և մատներով ուսին դիպցնել, միայն սորան յետ չի կարելի կռացնել. դուք կարող էք ձեր ձեռքը յետ ծալել միայն այնքան, որ նորա երկու մասերը ուղիղ դիժ կազմեն:

14). Այսպէս ուրեմն՝ արմուճնկի մօտ եղած երկու ոսկրները—բազուկը և արմուճնկը, այնպիսի ձև ունին և այնպէս են դրած մէկը միւսի մօտ, որ մեր ձեռքը կարող է պարզուիլ կամ ծալուիլ: Ամախքի մէջ երկու ոսկրները մէկը միւսից բաժանուում են, նոցա պէտք է միմեանց հետ ինչ մի կողմնակի բանով կպցնել, որպէս զի նոքա չ'անջատուին: Եթէ դուք երբ և իցէ ժամանակ կամախք տեսած էք, շատ կարելի է նկատած էլ լինիք, որ այդ ոսկրները երկաթեայ թելով կամ պղնձեայ բեւեռներով լինէին կպած: Բայց նոքա միասին կ'պահպանուին և՛ այն ժամանակ, եթէ դուք երկաթեայ թելը կամ պղնձեայ բեւեռները հանէք և, երկու ծայրերը մէկը միւսին կպցրած բռնելով, նոցա մի որ և է երիզով բաւականին ամուր կապէք, միայն այնքան ազատ, որ նոքա կարողանան մէկը միւսի շուրջ շարժուիլ: Գուք այդ հեշտութեամբ կարող էք անել, եթէ երիզի, կամ, աւելի լաւ է, ռետինի կարճ շերտեր վերցնէք և նոցա արմուճնկի մօտ ամրացնէք—յետևից, առջևից և կողքերից, իւրաքանչիւր շերտի մէկ ծայրը բազկի, իսկ միւսը՝ արմուճնկի ոսկրի մօտ: Ոսկրների այդպիսի ամրացնելը շատ նման է այն բանին, որի շնորհիւ, արմուճնկի մօտ, ոսկրները ձեր սեպհական ձեռքերի մէջ միացած են: Միայն ձեր ոսկրներին կապող շերտերը ռետինից չեն, այլ տափակ նրբաթելեր են, այն նիւթից կազմուած, որը բնաթելային (fibra) նիւթ է կոչուում և որին մենք նախընթաց դասերում միացնող անկուած անուանեցինք: Այդ տափակ նրբաթելերին կապեր են ասում: Նկատեցէք, որ արմուճնկի մէջ երկու ոսկրների (արմուճնկի և բազկի) ծայրերը միմեանց հետ կապերով—այսինքն միացնող անկուածի տափակ նրբաթելերով են պահպանուում:

Արմուճնկի մէջ՝ կամախքի մէկը միւսին քսուող՝ երկու ոսկրների մակերևոյթները բաւականին հարթ են, բայց չոր: Եթէ դուք երբ և իցէ ժամանակ ոչխարի հում ոտի մէջ յօդ էք տեսած, անպատճառ նկատած կ'լինիք, որ նորանում երկու ոսկրները մէկը միւսի շուրջ համարեալ այնպէս են սահում, ինչպէս որ ոսկրները սահում են մեր արմուճնկի մէջ, և գուցէ նոյնպէս յիշէք, որ այդ ոսկրների կպչող ծայրերը զարմանալի կերպով հարթ են ու շատ խոնաւ, և՛ այդ պատճառով էլ՝ չափազանց սահուն: Նոյնը լինում է և՛ մեր արմուճնկի մէջ՝ արմուճնկի և բազկի ոսկրների ծայրերը վերին աստիճանի փափուկ են և բոլորովին խոնաւ, այդ պատճառով էլ զարմանալի հեշտ կերպով են սահում մէկը միւսի շուրջ:

Գուք գիտէք, որ ձեր աչքերը նոյնպէս միշտ խոնաւ են. նոցա մէջ մշտական արտասուք կայ, թէ և միայն այն ժամանակն էք ասում, թէ լաց էք լինում, երբ ձեր աչքերը հիւթով են լցուում և նա էլ դէմքի վրայ է թափուում, բայց և այնպէս դուք իսկապէս միշտ քիչ էք լաց լինում: Եւ ահա՛ արմուճնկի ներսը, ոսկրների ծայրերը շրջապատող կապերից կազմուած ծածկոյթների տակ, որպէս թէ՛ միշտ արտասուք է թափուում և երկու ոսկրների ծայրերի մակերևոյթներն էլ միշտ թացանում: Ոսկրների ծայրերը այն տեղում, որտեղ կպչում են, շատ հարթ են—նոքա կռծիկով են ծածկուած: Ոսկրը շատ պինդ է և շատ կոշտ. նորա մէջ քիչ ջուր կայ, ուստի և նոքա կամախքի մէջ շատ քիչ են ցամաքում: Առձիկը այնպէս պինդ չէ, ինչպէս ոսկրը. նորանում անհամեմատ շատ ջուր կայ: Երբ կռձիկը բոլորովին թարմ է, այն ժամանակ շատ հարթ է. բայց որովհետև նորանում շատ ջուր կայ, այդ պատճառով նա ծալում է. երբ որ չորանում է, այնպէս հարթ չէ լինում, ինչպէս առաջ էր կեանք ունեցող մարմնի մէջ: Գուք կարող էք կամախքի ոսկրների ծայրերի վրայ ցամաքած կռձիկ տեսնել. նա դեռ ևս բաւականին հարթ է, բայց բոլորովին այն չէ, ինչ որ կեանք ունեցող կամ նոր սպանուած կենդանու մարմնի մէջ, որը, գուցէ, դուք նկատած կ'լինիք: Այսպէս ուրեմն՝ ար-

մունկի մէջ են միանում երկու ոսկրների ծայրերը, որոնք դրուած են մէկը միւսի մէջ այնպէս, որ մէկ ոսկրը կարող է մէկ որոշ ուղղութեամբ միւսի շուրջը շարժուիլ: այդ ծայրերը ծածկուած են կոճիկներով, որոնց շնորհիւ շատ հարթ են լինում, կապերով միմեանց հետ պահպանւում են եւ հեղանիւթով էլ թաց լինում: Այդ բոլորը, միասին վերցրած, յօդ (խաղ) է կոչւում:

15). Բացի արմունկի յօդից՝ մենք մեր մարմնի մէջ շատ ուրիշ յօդեր ևս ունինք, օր. ուսի, ծնկան, ազդրի և այլն: Այդ յօդերը արմունկի յօդից զանազանւում են ոսկրների ծայրերի ձևով, եղանակով, որով ոսկրները մէկը միւսի շուրջը շարժուում են և էլ շատ ուրիշ երկրորդական հանգամանքներով, բայց մենք նոցա կազմակերպութեան մանրամասնութիւնների մէջ չենք մտնել: Նորա բոլորը արմունկի յօդին են նման—իւրաքանչիւր յօդում մէկ ոսկրը դրուած է լինում միւսի մէջ, նոցա մակերևոյթները միշտ կոճիկով են ծածկուած, իրանց թաց անող հեղանիւթի պատճառով խոնաւ են լինում և միմեանց հետ էլ կապերով են պահպանւում: Թէև ես միայն բազկի և արմունկի ոսկրների մասին աօացի, միայն յոյս ունիմ, որ դուք կ'սիշէք, թէ՛ կանգունի մի ուրիշ ոսկր ևս կայ ծղիկ: Ես նորա մասին չ'սիշեցի այն պատճառով, որ հեշտ հասկանալի լինէր, թէ՛ գործն ինչու՞ն է, բայց և այնպէս բազկ-ոսկրի ծայրը ո՛չ թէ միայն արմունկի ոսկրի, այլ և ծղոսկրի ծայրի վերայով է սահում, իսկ ծղոսկրի ծայրն էլ նոյնպէս ծածկուած է կոճիկով և շրջապատուած է կապերից կազմուած ծածկոյթներով: Բայց ես այժմ ձեզ ծղոսկրի մասին չեմ պատմել, այլ միայն կըցանկամ բացատրել, թէ՛ ի՞նչպէս է կազմուած արմունկի այն յօդը, որը թոյլ է տալիս կանգունին ձեռքի վերին մասին կպչել:

16). Ձեռքը ծալելու համար պէտք է մի որեւէ զօրութիւն գործ դնել: Արմունկի և ծղիկի ոսկրները բարձրացնելու համար (նոքա երկուսը միմեանց հետ են շարժուում) պէտք է նոցա դէպի բազուկը հրել կամ քաշել կամ թէ չէ՛ բազուկը պէտք է դէպի նոցա հրել կամ ձգել: Ձեռք

ձեռքի մէջ այդ ի՞նչպէս է կատարուում: Ամախքից վերցնենք ձեռքի ոսկրները, (նոյնը կարելի է անել և մի որ և է կենդանու օտի ոսկրների հետ) և բազկի վերին ծայրը ինչ մի բանով բոլորովին անշարժ կապենք: Արմունկի կամ ծղիկի ոսկրին մի ժապաւէնի կտոր կապեցէք, (որին էլ լինի — միւսնոյն է), արմունկին բաւականին մօտիկ, բազկի վերեւի ծայրում մի անցք բացարէք և նորա միջով ժապաւէնը անցկացրէք: Ժապաւէնը պէտք է այնքան երկար լինի, որ, իրան չ'ձգելով, ձեռքը կարելի լինի բոլորովին պարզել Այժմ ժապաւէնից քաշենք, հենց այնտեղ բռնելով, որտեղ նա բազկ-ոսկրի անցքից է դուրս գալիս: Կանգունը վերեւի ձեռքին կ'կպչի: Այս միջոցին մենք գորանով իբրև լծակ ¹⁾ ենք գործում (լծակ երկրորդ սեռի ²⁾: Արմունկի և ծղիկի ոսկրները այնպիսի լծակ են կազմում, որի յենման կէտը բազկ-ոսկրի արմունկի ծայրի վերայ է գտնուում (նկար 3 A). Ծանրութիւնը, որը մենք բարձրացնում ենք, արմունկի և ծղիկի ոսկրն է կազմում, իսկ թէ կենդանի մարդու ձեռքը մի որ և է բան բռնէ, այն ժամանակ և՛ այս մարմնի կշիւը, շարժող զօրութիւնը — ձեր ձեռքի այն զօրութիւնն է ներկայացնում, որը ժապաւէնին ձգում է. նա լծակի վրայ ներգործում է այն կէտում, ուր ժապաւէնը կպած է ծղոսկրին, այսինքն աւելի մօտ լծակի յենման կէտին, քան թէ ծան-

¹⁾ Լծակ այն ձողին են անուանում, ինչով որ ծանրութիւն են բարձրացնում. Ծանրութիւն բարձրացնելու համար ձողի մէկ ծայրը ամրացնում են մի որ եւ է առարկայի մէջ կամ գետնում, իսկ իրան էլ այնպէս են բռնում, որպէս զի ծանրութիւն շարժող մասը կարճ լինի, իսկ ձեռքում բռնած մասը բաւականին երկար: Չողով այդպէս բարձրացնում են՝ գերաններ եւ քարեր. երկաթէ լինկը (լօմ) նոյնպէս մի լծակ է ներկայացնում, որին որեւէ մարմնու մէջ են մտցնում, օր. պատի մէջ, յետոյ, երկար ծայրը շարժելով, կարճ ծայրով ջարդած մարմնի մասերը տեղահան են անում:

²⁾ Երկրորդ սեռի լծակ կոչում են այնպիսի լծակին, որի մէջ ե՛ւ ծանրութիւնը ե՛ւ շարժող զօրութիւնը լծակի յենման կէտի մէկ կողմն են գտնուում, այսինքն այն կէտի, որով նա գետնին կամ ուրիշ առարկային է յենւում:

րութեանը: Այժմ աւելի պարզ ցոյց տալու համար, թէ՛ ձեր սեպհական մարմնի մէջ գործը ինչպէս է կատարուում, մենք ժապաւէնը անցկացնենք այն նաւաձև խողովակով, որը դուք բազկոսկրի վերին մասումն էք տեսնում, նորա մէջ անցք բանալու փոխարէն, և կպցնենք ծայրը թիակին, կամ բազկոսկրի ծայրի վերև գտնուած մի ուրիշ բանին. ժապաւէնը կրկին այնքան բաց թողնենք, որ ձեռքը կարողանայ բոլորովին ազատ կերպով պարզուել, միայն ո՛չ աւելի, այսինքն այնչափ արձակենք, որ ժապաւէնը ձեռքին պինդ նստի, երբոր ձգուի, միայն թէ կախ ընկած չ'մնայ: Այժմ ժապաւէնը կարճացնենք, նորա վերայ հանգոյց անելով: Հէնց որ այդ անէք, իսկոյն կանգունը դէպի բազուկը կ'կոսացնէք: Ենթադրենք, որ դուք մի այդպիսի ժապաւէն ունիք, որին հանգոյց չ'պէտք է անէք, բայց և՛ որը, ձեր ցանկութեամբ, կարող է կարճանալ: Ամէն անգամ, երբ նա կարճանայ, կանգունին կ'քաշէ եւ ձեռքը կ'ծալէ, եւ ամեն անգամ էլ, երբ ժապաւէնը նորից ձգուի, ձեռքը իւր ծանրութեամբ կրկին ուղիղ գծով յետ կ'պարզուի: Մեր ձեռքում ժապաւէն չ'կայ, այլ մկնակ (տես նկարը), որը համարեա՛ւ այնպէս է դասաւորուած, ինչպէս որ մենք այժմ ժապաւէնն էինք ամրացրել և ինքն իրան էլ կարճանալու յատկութիւն ունի, երբ այդ պահանջուում է: Վարձանալով, նա ձեռքը ծալում է, իսկ երբ նորից յետ է բացուում — ձեռքը կրկին պարզուում է: Իրանք իրանց այդպէս կարճացող և երկարացող մկնակները ուրիշ կերպ դարձեալ մկաններ են կոչուում: Եթէ դուք մէկ ձեռքի ափը առջևի կողմից միւս ձեռքի վերին մասի վերայ դնէք, համարեալթէ ուսի և արմունկի մէջտեղը, և յետոյ այդ երկրորդ ձեռքը ծալէք, այն ժամանակ ձեր ձեռքի ափի տակ մի որ և է բարձրացող բան կ'զգաք: Այդ — ձեռքը ծալող մկանն է բարձրանում, երբ որ նա կարճանում է, կամ, ինչպէս ասում են, կուչ է գալիս: Ձեր ձեռքի, ինչպէս և ճագարի անդամի վրայ, որը մենք անցեալ դասին զննեցինք, միւր զանազան մեծութեան և ձևի խմբերով կամ փոշերով է դասաւորուած և իւրաքանչիւր փունջ կամ խումբ էլ մրկան կամ մկնակ է անուանում: Ձեռքում շատ մկնակներ

կան, միայն նոցա մէջ մէկը աւելի մեծ է, հէնց այն, որը մենք այս բոլորիս շոշափեցինք ձեռքի վերին մասի առջևի կողմի վերայ, և կոչուում է երկզլխեան մկան: Այդ մկանը կարմիր մտի բոլորակաձև զանգուած է, որը աւելի երկար է, քան թէ լայն, մէջ տեղը հաստ և ծայրերին նեղ: Նա ներկայացրած է 3 նկարում: Գուր գուցէ յիշում էք, որ, ճագարի ոտը զննելով մենք նկատեցինք, ինչպէս և շատ մկնակների մէջ, որ մկնակի մեծ մասը կազմող փափուկ միւր իւր մէկ կամ երկու ծայրին յանկարծ վերջանում է և սպիտակ գոյնի աւելի ամուր և շատ փայլուն նիւթ դառնում: Ես ձեզ արդէն ասացի, որ այդ, համարեա՛ւ կարծր, սպիտակ գոյնի մկնակի մասը կոչուում է մկնակի կոճիկ: Մրկանակի այն մնացած մասը, որը սովորաբար «փոր» է կոչուում, այն նիւթից է կազմուում, որպիսին դուք սովորութիւն արիք միս անուանել, միս առանց գիրուցի, բայց և՛ որին այժմ մենք պէտք է մկնակային նիւթ անուանենք: Իսկպպէս իւրաքանչիւր մկնակ ամենից առաջ մկնակային նիւթի զանգուածից է կազմուած: Այդ մկնակային նիւթը ահագին քանակութեամբ փափուկ նրբաթելերից կամ բնաթելերից է բաղկացած, որոնք բոլորը մէկ ուղղութեամբ են դասաւորուած և մեծ ու փոքր փոշերի հաւաքուած: Մկնակի իւրաքանչիւր ծայրի վերայ այդ փափուկ մկնակային բնաթելերը միանում են միացնող կամ բնաթելային անկուածի աւելի ամուր և աւելի բարակ բնաթելերի: Իսկ այդ պինդ և բարակ բնաթելերից են կազմուում ջլերը, որոնցով երկու կողմից մկնակները վերջանում են: Այդ ջլերով փափուկ մկնակները ամուր ոսկրների, կամ մարմնի մի քանի ուրիշ պինդ անկուածների հետ են միանում: Ջլերը երբեմն կլոր են լինում և ժապաւէնների նման, երբեմն էլ հարթ և տափակ: Երբեմն նոքա շատ երկար են լինում, երբեմն էլ շատ կարճ, մինչև անգամ հազիւ նկատելի: Բայց միշտ մկնակների մէջ միորևէ քանակութեամբ պինդ բնաթելեր կան, որոնք փափուկ մկնակային բնաթելերը միացնում են ոսկրների հետ, և սովորաբար այդ ջլերն էլ ո՛չ թէ միայն պինդ են, այլ աւելի բարակ, քան թէ մկնակի փորը: Երկզլխեան մկանի

փորը ձեռքի վերին մասի առջևի կողմից է գտնուում: Արմունկի յօդից փոքր ինչ վերև՝ նա վերջանում է փոքրիկ, կըլըր, պինդ, արմունկի ներսի կողմից անցնող և փոքր ինչ յօդից ցածր ծղոսկրին կցւող կամ միանող ջլով (նկար 3): Մկնակի վերին մասը վերջանում է ուսից փոքր ինչ ցած ոչ թէ մէկ, այլ երկու *) ջլով, որոնք բաղկոսկրի ծայրով սահում են և կպչում այն թիակին, որը յօդով է միացած բաղկոսկրի հետ: Այսպէս ուրեմն՝ մեր երկգլխեան մկանի մէջ մկնակային փորը ձեռքի վերին մասի առջևի կողմից է գտնուում և ջլերով էլ կպած է մէկ ծայրով թիակին, իսկ միւսով—կանգունին: Այն ժամանակ, երբ ձեռքը ձգուած լինէր, իսկ ուսը անշարժ, ի՞նչ կ'պատահէր, եթէ երկգլխեան մկանը յանկարծ առաջուանից աւելի կարճանար: Դ հարկէ—նոյնը, ինչ որ պատահեցաւ այն ժամանակ, երբ մենք ժապաւէնի վերայ հանգոյց արեցինք, որը, ինչպէս դուք գուցէ յիշէք, հէնց այնպէս էր տեղաւորուած, ինչպէս որ ձեռքի վերայ տեղաւորուած էին երկգլխեան մկանը իւր ջլերով միասին.— ծղիկի և արմունկի ոսկրները կ'բարձրանան և կանգունը ձեռքի վերին մասին կ'կպչէ:

Չլերը կարճանալու ընդունակ չեն, միայն մկնակային նիւթը արագ կարճանալու երեւելի յատկութիւն ունի: Յայտնի հանգամանքներում իւրաքանչիւր փափուկ մկնակային բնաթել, որոնցից մկանները կազմուած են, յանկարծ առաջուանից աւելի է կարճանում, ուստի և՛ ամբողջ մկանը, իւր ջլային ծայրերը մօտեցնելով, կարճանում է. եթէ մէկ ծայրը ամբարջած է մի որ և է անշարժ բանի, իսկ միւսը շարժականի, այն ժամանակ վերջինը կ'շարժուի: Այս երեւոյթը, թէ՛ մկնակը կամ մկնակային բնաթելը ինքն իրան յանկարծակի կարճանում է՝ մկնակի կուչ-զալ (կծկումն) է կուչում:

Բոլոր մկնակները, բոլոր մկնակային բնաթելերը կուչ գալու ընդունակութիւն ունին:

*) Մոլորաբար մկնակները իւրաքանչիւր ծայրին մէկ ջլով են վերջանում. այդ պատճառով էլ բացառութիւն կազմող մեր հետազննած մկանը երկգլխեան է կուչում:

Բայց երկգլխեան մկանի մէջ պարունակւող նիւթի նըման զանգուածը կարող է երկու կերպ կուչ-գալ: Նա կարող է իւր բոլոր ծաւալով սեղմուելով փոքրանալ, այնպէս, ինչպէս որ սպունգը կարող է մեր ձեռքի մէջ սեղմուել: Այս թէ՛ մկանը սեղմուելով, միայն ձեն է փոխում, և ոչ թէ իւր ծաւալը, որի պատճառով կարճանում է, բայց և նորա հետ էլ հէնց այնպէս հաստանում, ինչպէս որ կարճանում և հաստանում է այն փափուկ մեղրամոմի երկար և բարակ կտորը, որը դուք ծայրերից էք սեղմում:

Ահա թէ՛ ինչո՞ւ համար երբ որ դուք մէկ ձեռքի ափը այն ձեռքի մկնակի վերայ էք դնում, որը այդ ժամանակ ծալւում է, դուք զգում էք, թէ՛ ինչպէս ձեռքի ափի տակ ինչ մի բան է բարձրանում: Դուք այն ժամանակ ձեր ձեռքը ծալելիս երկգլխեան մկանի հաստանալն էք շոշափում—նորա կուչ գալու միջոցին: Մկնակները միշտ կուչ եկած չեն մնում: Շատ կամ փոքր ժամանակամիջոցից յետ մկնակը կրկին պարզւում է և՛ միւսնոյն ժամանակ կրկին բարականալով, իւր առաջուայ դրութիւնը ընդունում: Մկնակի պարզուած դրութիւնը իւր հանգստութեան բնական դրութիւնն է: Մկնակի կարճանալը կամ կուչ գալը մի աշխատութիւն է, որը միայն յայտնի ժամանակում կարող է շարունակուիլ: Մկնակի կուչ գալը ձեռքը ծալում է և, քանի որ մկնակը կուչ եկած է մնում, ձեռքը ծալուած դրութիւն է պահպանում, բայց հէնց որ մկնակը պարզւում է, կանգունի ծանրութիւնը, եթէ դրսից ոչինչ բան արգելք չէ լինում, ձեռքին ստիպում է նորից պարզուիլ: Դուք դիտէք, որ մենք չենք կարող ձեռքը ծալած շատ երկար ժամանակ պահել: Արձանալը միայն մէկ մկնակումն է լինում, այն է՝ մկնակային փորի մէջ, որը մկնակային բնաթելերից է կազմուած: Զլերը բոլորովին չեն կարճանում: Ընդ հակառակը՝ նոքա փոքր ինչ երկարում են, թէև շատ քիչ, երբ մկնակը նոցա բաշում է: Նոցա նշանակութիւնը ոսկրներին մկնակի շարժողութիւն տալու մէջ է կայանում: Նոքա անհրաժեշտ չեն, միայն յարմարութիւն են տալիս: Արեւելի էր և՛ առանց նոցա լինելը, բայց շատ անյարմար է: Խնթադրենք, որ

երկզկլսեան մկանի մսոտ բնութելերը ուսից մինչև կանգունն են գնում. դուր կարող էիք ձեր ձեռքը ծալել ինչպէս և առաջ, բայց ձեզ խիստ անյաջող կ'լինէր, եթէ մկնակը արմունկի ծարուածքում, կամ ուսի վերեւ լայնանար— ծալուածքի վերայ լինելով, մկնակի հաստանալը ծալուելուն, այսինքն առ հասարակ շարժողութեանն արգելք կ'լինէր: Ձեզ համար ձեռքով գործելը աւելի հեշտ է և յարմար հէնց այն պատճառով, որ մկնակի միայն մէկ կուշեկող մսոտ մասը, ուսին և կանգունին բարակ ջլերով կպած լինելով, ձեռքի վերին մասի մէջ տեղն է տեղաւորուում. (ծալուածքը հաստ մկնակով չի լցուում):

Մենք մանրամասն հետազննեցինք, թէ ձեռքը ի՞նչպէս է ծալուում: Երկզկլսեան մկանը կուշ է գալիս և ձգտում է իւր ջլային ծայրերը իրար մօտեցնել: Աերին ջլերը, որոնք անշարժ կերպով ուսին կպած են, չեն կարող շարժուիլ, բայց ներքին ջիւր կպած է ծղոսկրին, որը արմունկի հետ միասին, որին նա կպած է, արմունկի յօդի մէջ ազատ դէպի ներքև և վերև է շարժուում, որովհետև վերջինում ոսկրների ձևը և նորա բոլոր կազմակերպութիւնը, ինչպէս մենք տեսանք, թոյլ են տալիս այդպիսի շարժողութիւն անել: Երբ մկնակը իւր ներքին ջիւր քաշում է, վերջինը ծղոսկրին այն կէտուան է քաշում, ուր ջիւր ոսկրին է կպած: Շարժուելով՝ ծղիկոսկրը արմունկի ոսկրի հետ միասին երկուորդ սեռի լծակ են կազմում, որի յենման կէտը բազկոսկրի ծայրն է (արմունկի մէջ):

17). Բայց դառնանք այն հարցին, թէ մկնակին ի՞նչն է ստիպում կարճանալ կամ կուշ-գալ: Դուր ցանկանում էք ձեր ձեռքը շարժել— և նա շարժուում է, ինչպէս մենք տեսանք, երկզկլսեան մկնակին կուշ-գալ ստիպելով. միայն ձեր ցանկութիւնը երկզկլսեան մկանին ի՞նչպէս է ստիպում կուշ-գալ: Եթէ դուք կարողանայիք ձեր ձեռքը ուսուանասիրել, ինչպէս ճագարի ոտը ուսուանասիրեցիք, այն ժամանակ երկզկլսեան մկանի մէջ մէկ կամ մի քանի փափուկ սպիտակ թելեր կ'գտնէիք, որոնք, ինչպէս դուք արդէն գիտէք, նեարդեր են կուշուում: Այդ նեարդերը մեզ թւում

են, որ երկզկլսեան մկանի մէջ են անյայտանում: Մենք կարիք չունինք նոցա աւելի մանր թելերի ճիւղաւորուելուն հետեւել, բայց եթէ նոցա ուրիշ ուղղութեամբ հետեւէինք, ձեռքի վերայով դէպի վերև, այն ժամանակ կ'ըրտնէինք, որ նոքա շուտով իրանց նման ուրիշ նեարդերի են պատահում, ուր, մի քանի նեարդեր էլ միմեանց հետ միանալով, աւելի ամուր և հաստ նեարդեր են կազմում: Այդ վերջինների հետ կրկին ուրիշներն են միանում և այդպէս շարունակուում, մինչև որ նեարդերը այն շատ հաստ նեարդային բներին չ'հասնին, ինչպէս որ նոցա անուանում են, որոնք, պարանոցի միջի ողերով, ողնային խողովակի ներսն են մտնում, իսկ այնտեղ էլ նոքա մէջքի ուղեղի նեարդային նիւթի հետ են խառնուում, որի մասին մենք վերևը խօսեցինք: Այդ նեարդերը ձեռքի ծայրուելու հետ ի՞նչպիսի յարաբերութիւն ունին: Ահա թէ՛ ինչպիսի: Ենթադրեցէք, որ դուք առանց մեծ դժուարութեան կարողացաք ձեր ձեռքի դէպի երկզկլսեան մկանը գնացող նուրբ նեարդերը կտրել, և կտրեցիք էլ, այն ժամանակ ի՞նչ կ'լինէր: Այն ժամանակ դուք այդ ձեռքը ծալելու ամեն հնարաւորութիւն կորցրած կ'լինէիք: Ինչ կերպ էլ որ դուք նորան ցանկանայիք ծալել, այնուամենայնիւ մկնակի բարձրանալը չէր յառաջանալ: Երկզկլսեան մկանը բոլորովին անշարժ կ'մնար, թէև կարող էր կուշ-գալ: Այդ ի՞նչ է ցոյց տալիս: Այդ ցոյց է տալիս, որ, երբ դուք ձեր ձեռքը ցանկանում էք ծալել, մի բան ձեր մկնակներով երկզկլսեան մկանն է գնում, և նորան կուշ-գալ է ստիպում: Նեարդը ինչպէս կամուրջ է ծառայում կամքի և մկնակի մէջ, և երբ կամուրջը քանդուած է, կամ կտրուած, այն ժամանակ կամքը չի կարող մկնակին հասնել: Եթէ մկնակի և ողնուղեղի մէջ միջանկեալ նեարդերից մէկը դուք կտրէք, այն ժամանակ դորանով կամքի և մկնակի միջի հաղորդակցութիւնը կ'կտրէք: Ողնուղեղը, ինչպէս մենք տեսանք, գլխի ուղեղի հետ միասին նեարդային նիւթի մէկ անընդհատալի զանգուած է ներկայացնում. ողնուղեղից են դուրս գալիս մարմնի համարնա բոլոր նեարդերը. այն նեարդերը, որոնց ճիւղաւորու-

Թիւնները դէպի ձեռքի երկգլխեան մկանն են գնում, պարանոցային ողն-ուղեղից են դուրս գալիս: Եթէ դուք դժբաղատութիւն ունենայիք ձեր պարանոցի ողն-ուղեղը կտրել կամ վնասել, այն ժամանակ կարող էիք կենդանի մնալ, միայն շարժուելու ընդունակութիւնից կ'զրկուէիք: Գուր կ'ցանկանայիք ձեր ձեռքը ծալել, բայց չէիք կարող այդ անել: Գուր կ'հասկանայիք, որ ցանկանում էք, կ'զգայիք, որ ջանք էք գործ դնում, բայց ջանքերը ոչ մի յաջողութիւն չէին ունենալ: Աղն-ուղեղը կամքի և մկանկի մէջ եղած կամքի մասն է: Այսպէս ուրեմն՝ երբ որ դուք ձեռքը ծալում էք, ձեր կամքի գործունէութեան պատճառով ձեր գլխի ուղեղի մէջ «ինչ մի բան» է յառաջանում:

Այդ «ինչ-մի բանը» (մենք այժմ բացատրելու համար կանգ չենք առնել, թէ՛ ի՞նչ է այդ «ինչ մի բանը») գալիս է գլխի ուղեղից դէպի ուղնուղեղը, յետոյ վերջինից դուրս է գալիս և նեարդերով անցնում, իրան համար այնուորը նեարդային թելերի խճճուած փնջերով ճանապարհ բանալով, որոնք ողն-ուղեղի վերին մասից դէպի ձեռքը և երկգլխեան մկանն են գնում: Նորանից յետոյ իսկոյն, երբ «ինչ մի բանը» նեարդերով մկանկին է հասնում, մկանկը կուչ է գալիս, կարճանում է և հաստանում: Նա ձեռքի մէջ բարձրանում է. նորա փափուկ ջիլը ծղիկ-ոսկրին քաշում է, վերջինն էլ արմունկի հետ յենման կէտի շուրջը պտտում է (բազկոսկրի—արմունկի ծայրում) և ձեռքը ծալում: Գուր ցանկանում էք գործելը վերջացնել: Ձեր կամքով յառաջացած «ինչ մի բանը» վերջանում է՝ գլխի և մէջքի ուղեղի, նեարդերի, և մինչև անգամ նոցա ամենանուրբ ճիւղաւորութեանց մէջ: Այդպիսի «ինչ մի բանով» այլ ևս չ'գրգռուած մկանկը կուչ գալուց դադարում է, իջնում է, ծղիկ-ոսկրին ձգելուց դադարում է, և կանգունը, իւր սեպհական ծանրութեան պատճառով, նորից պարզում է, և մկանկին իւր իջնելու աստիճանի համեմատ ձգում մինչև նորա սովորական երկայնութիւնը:

18). Ես յոյս ունիմ, որ դուք իմ բացատրութիւններին ուշադրութեամբ էք հետևել, բայց մենք դեռևս գործի լիակատար պարզելուց հետո ևնք: Մկանկը ի՞նչու է կուչ

գալիս, երբ որ այդ «ինչ մի բանը» նորան նեարդերով է հասնում: Մենք պէտք է բաւականանանք միայն այս պատասխանով, թէ՛ մկանկի յատկութիւնն այդպէս է: Արդեօք մկանկը միշտ այդ յատկութիւնը ունի: Ա՛յ, միշտ չ'ունի: Ենթադրենք, որ դուք ձեր ձեռքը թոկով վերելք, ուսի մօտ, շատ պինդ կապելէք, այն ժամանակ ի՞նչ կ'պատահէր: Եթէ դուք նորան բաւականին ամուր էք կապել (այդ անելու ես խորհուրդ չեմ տալ, որովհետև դուք ձեզ կարողէք վնասել), այն ժամանակ ձեռքը կ'դժգունանար, շուտով էլ կ'սկսէր գունատուիլ: Նա կ'սկսէր ընդարմանալ, ձեզ կ'թուէր, որ նա փոքր առ փոքր սկսում է ծանրանալ և քիչ զգայուն դառնալ, նորա մէջ շոշափողութիւնը կ'սկսէր թուլանալ և մի քանի ժամանակից յետոյ էլ բոլորովին կ'կորչէր: Երբ որ դուք ձեռքը փորձէիք ծալել, այն ժամանակ ձեզ այդ շատ դժուար կ'լինէր անել: Ինչպէս էլ որ դուք չ'աշխատէիք, հեշտութեամբ չէիք կարող ձեր երկգլխեան մկանին կուչ-գալ ստիպել, իսկ մի քանի ժամանակից յետոյ էլ այդ բոլորովին չէիք կարող կատարել: Գուր կ'տեսնէիք, որ ձեռքը ծալելու ընդունակութիւնը բոլորովին կորցրիք: Բայց եթէ գորանից յետոյ թոկը յետ անէիք, այն ժամանակ մի քանի շատ անախորժ զգացմունքներից յետ՝ փոքր առ փոքր նորից կարող էիք ձեր ձեռքին տէր դառնալ—նա սակաւ առ սակաւ կ'տաքանար, ծանրութիւնը և բթութիւնը նորա մէջ կ'անցկենային, շոշափողութիւնը կ'վերագառնար, դուք կըրկին նորան կարող էիք ծալել և վերջապէս ձեր ձեռքը բոլորովին այնպէս կ'դառնար, ինչպէս որ մինչև կապելն էր: Գուր ձեռքին ի՞նչ կ'անէիք, եթէ նորան թոկով ամուր կապէիք: Գուր, որ գլխաւորն է, ձեռքի արիւնատար անոթները կ'ճնշէիք և նորա միջի արեան շարժողութիւնը կ'կանգնեցնէիք:

Եթէ դուք՝ ամբողջ ձեռքը թոկով կապելու փոխանակ, բարակ թելով միայն արիւնատար անոթները կապէիք, այն ժամանակ ևս համարեալ թէ այդպիսի հետևանքներ կ'յառաջանային: Առաջ ես ձեզ ասացի, որ մարմնի բոլոր մասերը լցուած են արիւնատար անոթներով, երակներով և զարկերակներով: Ձեռքի մէջ մէկ բաւականին հաստ զարկե-

րակ է մանուկ, որի ճիւղերը բոլոր ձեռքի միջոցն են ցըր-
 ւում: Այդ ճիւղերից միքանիսները գնում են և՛ դէպի երկ-
 գլխեան մկնակը: Ի՞նչ կ'պատահէր, եթէ դուք, ձեռքի մնա-
 ցած արիւնատար անօթներին ձեռք չ'տալով, միայն այդ վեր-
 ջի ճիւղերը այնպէս ամուր կապէիք, որ նոցա մէջ արիւնը
 բոլորովին կանգնէր: Ամբողջ ձեռքը չէր գունատուիլ, չէր
 ցրտանալ, առաջուանից աւելի չէր ծանրանալ, չէր ընդար-
 մանալ և շօշափման զգացմունքն էլ նորա մէջ չէր կորչել:
 Բայց եթէ նորան ցանկանայիք ծալել, այն ժամանակ այդ
 չէիք կարող անել: Գուր չէիք կարող երկգլխեան մկնակին
 կուչ-գալ ստիպել, թէ և ձեռքի մնացած մասերը բոլորովին
 չ'փոխուած անգամ երեւային: Այդ ի՞նչ է ցոյց տալիս: Այդ
 ցոյց է տալիս, որ կամբով մկանը կուչածելու ընդունակու-
 թիւնը գուցէ կորած է և նորից հայթայթած, և թէ նա
 անյայտանում է միայն այն ժամանակ, երբ արիւնը մկանը
 մանելուց դադարում է: Երբ ամբողջ ձեռքը թոկով է
 կապած, այն ժամանակ շարժման ընդունակութիւնը բոլոր
 ձեռքի մէջ կորչում է: Զօրութեան այդ կորուստը մահուան
 սկիզբն է, և եթէ թոկը յետ չ'արած թողնենք, այն ժա-
 մանակ ձեռքը բոլորովին կ'մեռնի, կ'ընդարմանայ, ինչպէս
 որ ասում են: Եթէ դուք միայն երկգլխեան մկանը մանող
 արիւնատար անօթները կապէք, այն ժամանակ միայն մէկ
 երկգլխեան մկանը կ'սկսի ընդարմանալ, իսկ ամբողջ մնացած
 ձեռքը կենդանի կ'մնայ. երկգլխեան մկանի ընդարմանալու
 առաջին նշանը այն կ'լինի, երբ դուք ձեր կամբով նորան
 կուչածելու ընդունակութիւնը կ'կորցնէք: Այսպէս ուրեմն,
 որպէս զի դուք ձեր ձեռքը կարողանաք ծալել ո՞չ թէ միայն
 պէտք է երկգլխեան մկան ունենաք իւր նեարդերով, կապե-
 րով և ոսկրների ու յօդերի ամբողջ պարագաներով հան-
 դերձ, այլ և նա պէտք է արիւնով ևս լցուած լինի:

19). Մենք այժմ կարող ենք մի քայլ առաջ գնալ և
 հետևեալ հարցին պատասխան տալ, թէ՛ արեան մէջ ի՞նչ
 է գտնուում եւ ի՞նչնէ մկնակին կուչ գալու ընդունակու-
 թիւն տալիս. ուրիշ խօսքով—ի՞նչն է նորա կեանքը
 պահպանում: Սորա պատասխանը շատ հեշտ է գտնել: Սօ-

վորաբար ի՞նչպէս են անուանում մկնակի կուչ գալու ըն-
 դունակութիւնը: Մենք նորան մկնակի զօրութիւն ենք ա-
 սում: Գուր ձեր պարզած ձեռքը դրէք սեղանի վերայ, վերց-
 րէք մի որևէ ծանրութիւն և փորձեցէ՛ք այդ ձեռքը ծա-
 լել: Եթէ այդ կարողանաք անել, այն ժամանակ կ'ասեն, որ
 զօրեղ էք, եթէ ո՞չ, կ'ասեն, թէ՛ թոյլ էք և այնչափ աւե-
 լի թոյլ, որչափ փոքր կ'լինի այն ծանրութիւնը, որը դուք
 կարող էք բարձրացնել: Առաջին դէպքում ձեր երկգլխեան
 մկանը երևի կուչ գալու մեծ ընդունակութիւն ունի, երկ-
 բորգում—փոքր: Փորձեցէ՛ք մի այսպիսի փորձ անել. ինչ մի
 ժամանակ, առաւօտեան, իսկոյն նախաճաշից յետ, երբոր
 դուք զուարթ և կշտացած կ'լինիք, մի ամենամեծ ծանրութիւն
 ընտրեցէ՛ք, որպիսին միայն այդ ժամանակ կարող է ձեր ձեռ-
 քը հէնց նոր նկարագրած եզանակով բարձրացնել, յետոյ
 չ'ձաշէք և ճաշից յետոյ էլ, կամ երեկոյեան, երբ որ դուք
 յոգնած և քաղցած կ'լինիք, փորձեցէ՛ք նոյն եզանակով նոյն
 ծանրութիւնը բարձրացնել—այդ չէք կարող կատարել: Ձեր
 երկգլխեան մկանը այդ միջոցին կուչ գալու ընդունակու-
 թեան մի մասը կորցնում է, աւելի թուլանում է, քան թէ
 առաւօտեան էր: Ի՞նչն է նորան թուլացնում:—Կերակրի
 պակասութիւնը: Բայց կերակուրը մկնակին ի՞նչպէս կարող է
 ազդել: Գուր կերակուրը գնում էր ո՞չ թէ մկնակի մէջ, այլ
 բերանը, որտեղից նա յետոյ գնում է ստամոքսը և մարսու-
 ղութեան խողովակի մնացած մասը, ուր, ըստ երևոյթին,
 այնպատանում է: Կերակուրը մկնակին ի՞նչ եզանակով է հաս-
 նում:—Արեան միջնորդութեամբ՝ կերակուրը արիւն է դառ-
 նում: Այն նիւթերը, որոնց մէնք կերակրի ձեռով ուտում
 ենք, արեան մասը կազմող ուրիշ նիւթերի են փոխարկուում:
 Այդ վերջինները մկնակն են մտնում, նորան զօրութիւն
 են տալիս և կուչ-գալու էլ ընդունակ դարձնում: Ահա թէ՛
 կերակուրը ի՞նչու համար է ձեզ ուժեղացնում:

20). Բայց դուք ամեն օր, մինչև անգամ օրուայ մէջ
 մի քանի անգամ, կերակրի կարիք էք զգում: Ի՞նչու: Որով-
 հետև մկնակը, կերակրից զօրութիւն ստանալով, վերջինին
 փոխում է, նորան սպառեցնում է և այդ պատճառով էլ

միշտ թարմ արեան և նոր կերակրի կարիք է զգում: Մենք
 Ի յօդուածի մէջ ասացինք, որ կերակուրը վառելիք է:
 Մենք նոյնպէս տեսանք, որ մկնակը (և՛ մարմնի բոլոր միւս
 մասերը նոյնպէս) միշտ այրում է, այրում է այն էլ բոց
 չ'տալով, այլ միայն տաքութիւն. սրգարե՛ ծանր է այրում,
 բայց և այնպէս այրում է, և ինչքան էլ նա աւելի աշ-
 խատանք է կատարում, այնքան նորան աւելի է այրում:
 Վառելիքը, որը նորա մէջ այրում է, չոր փայտ կամ ա-
 ծուխ չէ, այլ թաց, իրան մէջ ջուր պարունակող, արիւն, այսինքն
 մի այլ տեսակ վառելիք, որը պատրաստուած է մեր ընդու-
 նած կերակրից ստամոքսի և մարմնի միւս մասերի մէջ այդ-
 պիսի առանձին գործածութեան համար: Այդ վառելիքը
 միշտ մոխուում է, և եթէ մկնակը պէտք է աշխատանքը շա-
 րունակէ, այն ժամանակ նորան միշտ անհրաժեշտ է պատ-
 շաճաւոր կերպով այդպիսի վառելիք մատակարարել: Գորա-
 նից հետևում է, որ մարմնի մէջ միշտ պէտք է թարմ արիւն
 պատրաստուի, ուստի և մարմինը պէտք է ժամանակ առ ժա-
 մանակ կերակրի թարմ պաշարներ ստանայ, որից արիւն է
 պատրաստուում: Այսպիսով՝ եթէ ցանկանում ենք հասկա-
 նալ, թէ՛ ի՞նչ է կատարում, երբ մենք ձեռքը ծալում ենք,
 պէտք է ուսումնասիրենք ո՛չ թէ միայն այն, ինչ որ արդէն
 իմացանք ոսկրների, յօդերի, նեարդերի և մկնակների շարժ-
 ման եղանակի մասին, այլ և այն, թէ՛ կերակուրը ի՞նչպէս
 է արեան փոխարկում, արիւնը ի՞նչպէս է բերում դէպի
 մկնակը, ի՞նչ է գօնուում արեան մէջ և ի՞նչն է կեանք տա-
 լիս մկնակին, նորա մէջ մկնակով ի՞նչ մասեր են այրում
 և այրուելուց յետոյ էլ օտացած նիւթերն, այսինքն մո-
 խիրը, ծուխը—այն է՝ անխաթթուաւ և միւսները մկնա-
 կից ի՞նչպէս են դուրս գալիս և մարմնից հեռանում: Գորա-
 հետ թոյլ առե՛ք յիշեցնել ձեզ, որ ես բացատրութիւն-
 ների պարզութեան համար միայն ձեռքի երկգլխեան մկանի
 մասին խօսեցի: Բայց մարմնի մէջ բացի երկգլխեանից զբան-
 ւում են շատ ուրիշ մկաններ, շատ ոսկրներ, բացի ձեռնե-
 րի ոսկրներից, և շատ էլ յօդեր, բացի արմունկի յօդից:
 Բայց այն, ինչ որ ես ասացի մի քանիսնների մասին, ընդ-

հանուր դժագրութեամբ միւս մնացածներին էլ է վերաբե-
 րում: Մկնակները լինում են զանազան ձևի. նոքա զանա-
 զան կերպով կպչում են ոսկրներին և զանազան սեռի լը-
 ծակների վերայ էլ ներգործում: Յօդերը միմեանցից շատ
 զանազանում են այն եղանակով, որով իրանց աշխատանքն
 են կատարում: Մարմնի շատ շարժողութիւնները կատարում
 են ո՛չ թէ մէկ, այլ մի քանի միասին գործող, իսկ երբեմն
 էլ մէկը միւսին հակառակ մկնակներով: Բայց բոլոր շար-
 ժողութիւնները ուշագրութեամբ հետազննելով, դուք, այ-
 նուամենայնիւ, կ'նկատէք, որ այն բոլոր շարժողութիւնները,
 որոնց միայն ձեր մարմինը ընդունակ է, նորանից են յառա-
 ջանում, որ յայտնի մկնակային բնութիւնը, իրանց նեարդե-
 րի միջոցաւ իրանց հասնող շնչ-մի բանին՝ ենթարկուելով,
 կուչ են գալիս, կարճանում են, հաստանում են և այդ
 պատճառով էլ մկնակի մէկ ծայրը միւսին մօտեցնում, (դորա
 հետ և՛ մարմնի այն մասերը շարժելով, որոնց հետ կպած
 են). իսկ որպէս զի նոքա այդ կատարելու հնարաւորութիւնն
 էլ ունենան, մշտապէս պէտք է գէպի նոցա մաքուր արիւն
 հոսի:

Նկատեցէք դարձեալ, որ արեան դէպի մկնակն ունե-
 ցած յարաբերութեան մասին իմ բոլոր ասածը ճիշտ է նոյն-
 պէս և՛ մարմնի միւս բոլոր մասերի վերաբերմամբ: Ինչպէս
 որ մկնակը չի կարող գործ կատարել, երբ թարմ արեան
 հոսանք չ'կայ, այնպէս և, մինչև անգամ աւելի ևս, մա-
 քուր արեան հոսանքի կարիք են զգում թէ՛ գլխի ուղեղը,
 թէ՛ մէջքինը և թէ՛ նեարդերը: Կերակրի պակասութեան
 ժամանակ մեր զգացած թուլութիւնը և դանդաղկոտութիւ-
 նը (յոգնածութիւնը) ցոյց են տալիս ինչպէս մկնակների,
 այնպէս և ուղեղի նեարդերի թուլութիւնը, և վերջինը
 գուցէ առաջինից աւելի զօրեղ էլ է լինում: Մարմնի միւս
 մասերը, որոնց մասին մենք շատ ուշ կ'իտօսենք, նոյնպէս ա-
 րեան կարիք են զգում: Մեր մարմնի ամենօրեայ կեանքի
 պատմութիւնը կարելի է այսպիսի համառօտ խօսքերով պատ-
 մել.— մեր ընդունած կերակուրը արիւն է դառնում, արիւ-
 նը տարածւում է ամբողջ մարմնի մէջ ըջանառական հոսան-

միշտ թարմ արեան և նոր կերակրի կարիք է զգում: Մենք
 I. յօդուածի մէջ ասացինք, որ կերակուրը վառելիք է:
 Մենք նոյնպէս տեսանք, որ մկնակը (և՛ մարմնի բոլոր միւս
 մասերը նոյնպէս) միշտ այրում է, այրում է այն էլ բոց
 չ'տալով, այլ միայն տաքութիւն. սրգարեւ՝ ծանր է այրում, բայց
 և այնպէս այրում է, և ինչքան էլ նա աւելի աշխատանք է
 կատարում, այնքան նորան աւելի է այրում: Վառելիքը, որը
 նորա մէջ այրում է, չոր փայտ կամ ածուխ է, այլ թաց,
 իրան մէջ ջուր պարունակող, արիւն, այսինքն մի այլ
 տեսակ վառելիք, որը պատրաստուած է մեր ընդունած
 կերակրից ստամոքսի և մարմնի միւս մասերի մէջ սյգ-պիսի
 առանձին գործածութեան համար: Այդ վառելիքը միշտ մոխու-
 րում է, և եթէ մկնակը պէտք է աշխատանքը շարունակէ,
 այն ժամանակ նորան միշտ անհրաժեշտ է պատշաճաւոր
 կերպով այգպիսի վառելիք մատակարարել: Գորանից
 հետեւում է, որ մարմնի մէջ միշտ պէտք է թարմ արիւն
 պատրաստուի, ուստի և մարմինը պէտք է ժամանակ առ ժա-
 մանակ կերակրի թարմ պաշարներ ստանայ, որից արիւն է
 պատրաստում: Այսպիսով՝ եթէ ցանկանում ենք հասկա-
 նալ, թէ՛ ի՞նչ է կատարում, երբ մենք ձեռքը ծալում ենք,
 պէտք է ուսումնասիրենք ո՛չ թէ միայն այն, ինչ որ արդէն
 իմացանք ոսկրների, յօդերի, նեարդերի և մկնակների շարժ-
 ման եղանակի մասին, այլ և այն, թէ՛ կերակուրը ի՞նչպէս
 է արեան փոխարկում, արիւնը ի՞նչպէս է բերում դէպի
 մկնակը, ի՞նչ է գտնում արեան մէջ և ի՞նչն է կեանք տա-
 լիս մկնակին, նորա մէջ մկնակով ի՞նչ մասեր են այրում
 և այրուելուց յետոյ էլ ստացած նիւթերն, այսինքն մոխի-
 րը, ծուխը—այն է՝ ածխածնութեւնը և միւսները մկնակից
 ի՞նչպէս են դուրս գալիս և մարմնից հեռանում: Գորահետ
 թույլ առէք յիշեցնել ձեզ, որ ես բացատրութիւնների
 պարզութեան համար միայն ձեռքի երկգլխեան մկանի
 մասին խօսեցի: Բայց մարմնի մէջ բացի երկգլխեանից զբա-
 րում են շատ ուրիշ մկաններ, շատ ոսկրներ, բացի ձեռնե-
 րի ոսկրներից, և շատ էլ յօդեր, բացի արմունկի յօդից: Բայց
 այն, ինչ որ ես ասացի մի քանիսների մասին, ընդ-

հանուր դժագրութեամբ միւս մնացածներին էլ է վերաբե-
 րում: Մկնակները լինում են զանազան ձևի. նորա զանա-
 զան կերպով կպչում են ոսկրներին և զանազան սեռի լը-
 ծակների վերայ էլ ներգործում: Յօդերը միմեանցից շատ
 զանազանում են այն եղանակով, որով իրանց աշխատանքն
 են կատարում: Մարմնի շատ շարժողութիւնները կատարում
 են ո՛չ թէ մէկ, այլ մի քանի միասին գործող, իսկ երբեմն
 էլ մէկը միւսին հակառակ մկնակներով: Բայց բոլոր շար-
 ժողութիւնները ուշագրութեամբ հետադննելով, դուք, այ-
 նուամենայնիւ, կ'նկատէք, որ այն բոլոր շարժողութիւնները,
 որոնց միայն ձեր մարմինը ընդունակ է, նորանից են յառա-
 ջանում, որ յայտնի մկնակային բնածելերը, իրանց նեարդե-
 րի միջոցաւ իրանց հասնող «ինչ-մի բանին» ենթարկուելով,
 կուչ են գալիս, կարճանում են, հաստանում են և այդ
 պատճառով էլ մկնակի մէկ ծայրը միւսին մօտեցնում, (գորա
 պատճառով էլ մկնակի մէկ ծայրը միւսին մօտեցնում, (գորա
 հետ և՛ մարմնի այն մասերը շարժելով, որոնց հետ կպած
 են). իսկ որպէս զի նորա այդ կատարելու հնարաւորութիւնն
 էլ ունենան, մշտապէս պէտք է դէպի նոցա մաքուր արիւն
 հոսի:

Նկատեցէք դարձեալ, որ արեան դէպի մկնակն ունե-
 ցած յարաբերութեան մասին իմ բոլոր ասածը ճիշտ է նոյն-
 պէս և՛ մարմնի միւս բոլոր մասերի վերաբերմամբ: Ինչպէս
 որ մկնակը չի կարող գործ կատարել, երբ թարմ արեան
 հոսանք չ'կայ, այնպէս և, մինչև անգամ աւելի ևս, մա-
 քուր արեան հոսանքի կարիք են զգում թէ՛ գլխի ուղեղը,
 թէ՛ մէջքինը և թէ՛ նեարդերը: Աերակրի պակասութեան
 ժամանակ մեր զգացած թուլութիւնը և դանդաղկոտութիւ-
 նը (յօգնածութիւնը) ցոյց են տալիս ինչպէս մկնակների,
 այնպէս և ուղեղի նեարդերի թուլութիւնը, և վերջինը
 գուցէ առաջինից աւելի զօրեղ էլ է լինում: Մարմնի միւս
 մասերը, որոնց մասին մենք շատ ուշ կ'խօսենք, նոյնպէս արեան
 կարիք են զգում: Մեր մարմնի ամենօրեայ կեանքի
 պատմութիւնը կարելի է այսպիսի համառօտ խօսքերով պատ-
 մել.— մեր ընդունած կերակուրը արիւն է դառնում, արիւ-
 նը տարածւում է ամբողջ մարմնի մէջ շրջանառական հոսանք-

քով: Մկնակները, ուղեղը, նեարդերը, կաշին, երբ արիւնը նոցա մօտով, կամ, աւելի լաւ է ասել, նոցա միջով է անցնում, իրանց մէջ ընդունում են աշխատանքի համար իրանց հարկաւոր կերակուրը, և արեանը տալիս են արդէն իրանց այլ ևս անպէտք նիւթերը: Արովհետեւ մարմնի մասերը զանազան աշխատանք են կատարում, այդ պատճառով նոցանից մի քանիսները գործ են դնում այն, ինչ որ միւսները արդէն դուրս են գցել: Բացի գորանից, մարմնի մէջ գտնուում են մաքրողներ և աւելողներ, որոնք հաւաքում են այն նիւթերը, որպիսիք արդէն մարմնի ոչ մի մասին պիտանի չեն և նոցա մարմնից դուրս են տանում ու դորանով էլ արիւնը մաքուր և թարմ է պահպանուում: Մարմնի բոլոր մասերին բերած արեան շնորհիւ՝ դոքա իրանց աշխատանքը կատարում են—մկնակները կուշ են գալիս, ուղեղը զգում է և ցանկանում, նեարդերը հաղորդում են զգացմունքներ և ցանկութիւններ, և այլն. ամբողջ մարմինը պահպանուում է ողջ և առողջ:

IV

ԱՐԵԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՅԱՏԱՌԹՅՈՒՆՆԵՐԸ

21). Մեր մարմնի մէջ այդպէս մեծ նշանակութիւն ունեցող այդ արիւնը ի՞նչ բան է: Գուրբ երբ և իցէ ժամանակ լաւ խոշորացոյցով հետազննել էք արդեօք գորտի թաթի նուրբ թափանցիկ լողաթաղանթը և վննել էք արդեօք այդ թաթի նեղ խողովակներով կատարուած կարմիր արեան շարժողութիւնը: Եթէ ոչ, ուստի աշխատեցէք տեսնել, այլպէս գուրբ շատ բան բնասօսութեան մէջ ոչ մի ժամանակ լաւ չէք հասկանալ: Գուրբ թաղանթի մէջ կ'տեսնէք ձեր մազերից աւելի նուրբ խողովակաձև ճանապարհներից կազմուած ցանցիկ և դոցա միջով էլ թուղ և հրող ամենափոքր, երկար, դեղնագոյն և արագ շարժուող շատ գնդակներ: Այդ խողովակներից մի քանիսը միւսներից լայն են, որոնց միջով

գնդակների թանձր հոսանքը դէպի փոքր խողովակների ուղղութիւնն է գնում և նոցանով հեղեղուում: Ձեզ տեսնելի գնդակները լողում են մի այնպիսի պարզ հեղանիւթի մէջ, որին դուրբ չէք կարող տեսնել: Փոքր խողովակներից մի քանիսը այնպէս նեղ են, որ միանգամից միայն մէկ գնդակը, կամ մարմնիկը, ինչպէս որ նորան անուանում են, կարող է նոցա միջով անցնել և շատ յաճախ էլ կարելի է տեսնել մարմնիկների ամբողջ շարք, որոնք այդ խողովակների միջով մէկը միւսի յետեից են անցկենում: Սորանից յետոյ հետազննելով, թէ՛ նոքա այդ նեղ ճանապարհներով ի՞նչպէս են սահում, դուրբ կ'նկատէք, որ, մի որևէ տարածութիւն անցնելով, կրկին աւելի լայն ճանապարհներ են մտնում, որոնք նոցա նման են, որոնցից իրանք են դուրս գալիս, (վերջինների մէջ արեան հոսանքը լայն խողովակներից դէպի աւելի նեղն է ձգտում, իսկ նեղ խողովակներից էլ, ընդհակառակն, դէպի աւելի լայն խողովակներն է գնում), այդ լայն խողովակների մէջ ձեր հետազննած գնդակը տեսնուելուց անյայտանում է: Ամենանուրբ անօթները կոչուում են մազակերպ կամ մազանման անօթներ. նոքա սահմանափակուած են նուրբ պատերով, որոնք հազիւ տեսնելի են. այդ անօթները միայն իբրև անցքեր են երևում—առանց պատերի. թէ վերջինները որչափ նուրբ են, կարելի է նորանով դատել, որ այդ անօթները գորտի թաթի իսկական կաշուի ներսն են գտնուում, իսկ այդ կաշին էլ ինքն այնքան բարակ է, որ թուում է թէ՛ բոլորովին հաստութիւն չ'ունի: Գնդակի մազանման անօթներն արիւն բերող աւելի լայն խողովակները այն անօթների ծայրերն են, որոնք նրման են նոցա, որոնք մէնք ճագարի մէջ զարկերակներ ա՛նուանեցինք, իսկ մազանման անօթներից արիւն դուրս բերող աւելի լայն միւս ճանապարհները— երակների սկիզբներն են: Եթէ դուրբ խոշորացոյցով գորտի ոտին մտիկ տալիք, այն ժամանակ, արդարև, կարող էիք պատկերացնել ձեզ, որ համարեա՛ թէ ձեր սեպհական մարմնի իւրաքանչիւր մասի մէջ, իւրաքանչիւր քառակուսի դիւլիմում, և գրեթէ նորա իւրաքանչիւր քառակուսի մազաչափում, խոշորացոյց

ցով կարելի է ինչ մի այն բանին նմանը տեսնել, որը դուք գորտի ոտի մէջ տեսաք, միայն թէ ձեր արեան մարմնիկները աւելի փոքր են և կլոր, մաղանման անօթները աւելի նեղ են և աւելի խիտ, իսկ արեան շրջանառութիւնն էլ կատարուում է աւելի արագ: Մկնակի մէջ, որի մասին մենք նախընթաց գլխում խօսեցինք, նորա նրբաթելերից իւրաքանչիւրը այդպիսի նրբագոյն (մազային) անօթների ամուր ցանցիկով է շրջապատուած և նոցա միջով էլ ամբողջ ժամանակ, քանի որ կեանքը շարունակուում է, արեան անընդհատ և արագ հոսանք է ընթանում, որը ամենափոքր մարմնիկների անչափ շատութեան պատճառով կարմիր գոյնով է ներկուած: Մեր մտի, ուղեղի, կաշուի, ոսկրների, թոքերի և բոլոր գործարանների իւրաքանչիւր մասի մէջ և համարեալ թէ մեր մարմնի իւրաքանչիւր մասում փոքրիկ նեղ խողովակներով, պարզ հեղանիւթի մէջ լողացող, կարմիր մարմնիկների այդ սրընթաց հեղեղն է հոսում: Եթէ դուք ձեր մատը ծակէք, այն ժամանակ նորանից արիւն կերթայ: Գրեթէ ձեր մարմնի իւրաքանչիւր մասից կ'սկսէ արիւն գնալ, եթէ դուք նորան ծակէք: Փոքրիկ արիւնատար անօթների ցանցը այնպէս խիտ է, որ ինչ տեղ էլ ասեղ ցցէք, ինչքան էլ բարակ ասեղ ցանկանաք վերցնել, դուք կարող էք հաւաստիացած լինել, որ կ'ծակէք մի որևէ փոքրիկ արիւնատար խողովակ, կամ զարկերակ, կամ երակ, կամ մազային անօթ և կ'ստիպէք նորանից կարմիր կաթիլի ձևով արիւն հոսել:

22). Ի՞նչ բան է արիւնը: Արիւնը հեղանիւթ է. նա ջրի նման հոսում է, միայն թէ ջրից թանձր է, և այն էլ թանձր է երկու պատճառով: Նախ՝ այն պատճառով, որ ջուրը, այն էլ մաքուրը, ամբողջապէս մէկ նիւթից է բաղկանում: Եթէ դուք ջրին նայէիք այնքան մեծացնող խոշորացողով, ինչով որ արիւնը զննեցիք, այն ժամանակ ջրի մէջ ոչինչ չէիք տեսնել: Նա վերին աստիճանի թափանցիկ է. դուք կարող էք մաքուր ջրի շատ հաստ շերտի միջով ամեն բան տեսնել: Իսկ եթէ փորձէիք մինչև անգամ արեան այնպիսի շերտի միջով նայել, ինչպիսին խոշորացողի երկու ապակեայ թիթեղների մէջ է գտնուում, այն ժամանակ նորա

միջով շատ քիչ բան կարող էիք տեսնել, որովհետև արիւնը շատ պղտոր է: Բացի դորանից, եթէ դուք սկսէք խոշորացողով ձեր արիւնը հետադննել, այն ժամանակ նորա մէջ ի՞նչ կ'տեսնէք:— Շատ փոքրիկ կլոր մարմիններ, արեան գնդակներ, կամ արեան մարմնիկներ (նկար 4 Ա.): Եթէ աւելի ուշադրութեամբ նայէք, այն ժամանակ կ'նկատէք, որ մեծ մասամբ նոքա հէնց նոցա նման կլոր են, որոնք ներկայացրած են B նկարի վրայ: Երբեմն էլ դուք կ'պատահէք C-ին նման մարմնիկների. դոքա նոյն մարմնիկներն են, միայն կողքով շուռ եկած. որովհետև նոքա գնդակաձև չեն, այլ երկու կողմից — մէջտեղը — ճնշուած, այդ պատճառով և՛ ուրիշ ձևով են երևում: Երբոր դուք միմեանց հետ կուտակուած մի բանի գնդակներին նայէք, այն ժամանակ կոյտը պարզ կարմրագոյն կ'երևայ: Նոքա այնքան փոքր են, որ նոցանից երեք հազարը, որոնք, դրամների շարքի նման, մէկը միւսի հետ ամուր շարքով դասաւորուած են, միայն մօտ մէկ դիւլիմ երկայնութիւն ունեցող շարք են կազմում. բայց արեանն էլ կարմրութիւն նոքա են տալիս: Եթէ դուք մի կաթիլ արիւն կաթեցնէք մէկ բաժակ ջրի մէջ, այն ժամանակ ջուրը չի կարմրիլ, այլ թեթև կերպով կ'դեղնի — այդպէս քիչ կարմրութիւն կ'տար նորան արեան կաթիլը: Այսպէս և՛ հաղարջից շինած դոնդողի շատ բարակ շերտը դեղին՝ և ո՛չ թէ կարմիր գոյնով է երևում: Արեան կարմիր մարմնիկները ամուր և կոշտ չեն, այլ փափուկ և շատ քնքոյշ. նոքա շատ հեշտութեամբ են այնպիսի կտորների բաժանուում, որոնք ամենից աւելի կարմիր գոնդողի ամենափոքր կտորներն են նման. այնուամենայնիւ նոքա այն բոլոր ճնշումները կարող են առանց վնասի տանել, որոնց իրանց ճանապարհին մարմնի արեան անօթների մէջ են ենթարկուում: Բացի այդ կարմիր մարմնիկներից՝ դուք եթէ ուշադրութեամբ նայէք, դարձեալ կարող էք ուրիշ փոքրիկ մարմիններ ևս նկատել, որոնք կարմիր գնդակներից փոքր ինչ մեծ են և բոլորովին անգոյն, միայն թէ տափակ չեն, այլ բոլորովին գնդաձև՝ (նկար 4 ա, Բ, Գ). աւելի ճիշտն ասած, նոքա շատ յաճախ գնդաձև են լինում, բայց իրանց ձևը փոխելու տարօրինակ

էլ յատկութիւն ունին: Երեւակայեցէք, որ դուք մի այնպիսի փոքրիկ իւղաբլիթի էք նայում, որից մօտաւորապէս երկուսուկէս հազարը կարելի է մէկ դիւրիմ տարածութիւն ունեցող շարքի մէջ դարսել, և ներկայացրէք, որ այդ ժամանակ կըր իւղաբլիթը, երբ որ դուք նորան նայում էք, աստիճանաբար իւր ձեւը փոխում է և եռանկիւնի կարկանդակի, յետոյ կողորացրած քառանկեան, յետոյ էլ տանձի ձեւը դունում, և ապա բոլորովին անորոշ ձևի առարկայ դառնում. վերջապէս կրկին գնդի ձև է ստանում, և այդպէս, ըստ երևոյթին, սեպհական ցանկութեամբ ամբողջ ժամանակ շարունակում է փոխուել, քանի որ դուք նորան էք նայում. հետաքրքիր է, ճշմարիտ չէ:

Խոշորացոյցով արեան կաթիլի մէջ կարելի է տեսնել արեան սպիտակ գնդակներ կոչուած յիշեալ փոքրիկ մարմինների ձևի այդպիսի մշտական փոփոխութիւնները. բայց արեան այդ մարմնիկների և նոցա զարմանալի շարժողութեանց մասին դուք բնախօսութեան առաջիկայ ուսումնասիրութեան ժամանակ աւելի շատ կ'իմանաք:

23). Արեան մէջ՝ բացի այդ կարմիր և սպիտակ մարմիններից՝ ոչինչ աւելի կարևոր բան չի գտնուում, որը դուք կարողանայիք խոշորացոյցով տեսնել. միայն արեան մէջ անտեսանելի նիւթերի ներկայութիւնն այն պատճառներից մէկն է, որ արիւնը ջրից աւելի թանձր է: Երբ ևիցէ ժամանակ տեսել էք արդեօք, թէ՛ ինչպէս են մորթում խողը կամ ոչխարը: Եթէ տեսել էք, ուրեմն շատ կարելի է նկատել էք, որ պարանոցի արիւնատար անօթներից վազող արիւնը բոլորովին հեղուկ է և ջրի նման է թափուում. միայն թէ շատ շուտով դոյլի մէջ հաւաքած, կամ քարերի վրայ թափած արիւնը բոլորովին պնդանում է, այնպէս որ դուք կարող էիք նորան կտորներով հաւաքել: Այսպէս ուրեմն, երբ արիւնը կենդանի մարմնուց դուրս է գալիս, այն ժամանակ նա շուտով պնդանում է: Այդ պնդանալը կոչուում է արեան մակարդումն (կամ թանձրացումն): Արեանը ինչն է ստիպում մակարդուել: Ենթադրենք, որ այն ժամանակ, երբ արիւնը խողի վզից մտնում է դոյլն է վազում և դեռ ևս

բոլորովին հեղուկ է, դուք մի կապոց ճիւղոտներ վերցնելով, կ'սկսէք նորանով արիւնը դոյլի մէջ ծանր կերպով խառնել, միշտ կապոցը դէպի մի կողմը պատցնելով: Դուք գուցէ սպասում էք, որ արիւնը դորա պատճառով շուտ կ'սկսէ թանձրանալ և միշտ էլ նորան աւելի դժուար կ'լինի խառնել: Բայց այդ չի լինիլ. և եթէ բաւականին երկար միջոց խառնէք, այն ժամանակ արիւնը բոլորովին չի էլ թանձրանալ, որովհետև թանձրանալու ընդունակութիւնը կ'կորցնէ — հետևապէս մշտական խառնելով դուք նորան թոյլ չէք տալ թանձրանալ: Եթէ յետոյ ճիւղոտների կապոցը դոյլից հանէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ նա ամբողջովին մի տեսակ փափուկ, մածուցիկ նիւթի թանձր կարմրագոյն զանգուածով է ծածկուած. եթէ դուք նորա վերայ ջուր ածէք, այն ժամանակ շուտով նորա բոլոր կարմիր գոյնը կ'լուանաք և ճիւղոտների վերայ էլ միայն կ'մնայ մի որևէ քանակութեամբ սպիտակ, փափուկ, մածուցիկ, նրբաթելային նիւթ, որով պատած էին և ծեփած ձեր կապոցի ճիւղոտները: Այդ նրբաթելանման նիւթը իսկապէս կազմուած է շատ բարակ, քնքշալ, առաձգական փոքրիկ թելերից կամ բնաթելերից, որը և՛ կոչուում է ընկաթելիտ: Դուք տեսնում էք, որ արիւնը խառնելով, կամ ինչպէս յաճախ դորան ասում են, ճիւղոտների կապոցով հարելով, արիւնից բնաթելը հանում էք և դորանով էլ թոյլ չէք տալիս նորան մակարդուել: Եթէ յատակի վրայ թանձրացած, կամ դոյլի մէջ մակարդուած արեան կտորը վերցնէք, որը չէք հարել, և սկսէք ջրով լուանալ (բաւականին երկար միջոց), այն ժամանակ ձեզ մօտ դորանից յետոյ միայն փոքրիկ քանակութեամբ սպիտակ նրբաթելանման նիւթ կ'մնայ, իսկ ամբողջ կարմիր գոյնը վայր կ'գայ: Այդ սպիտակ նրբաթելանման նիւթը — բնաթելիտը, միևնոյնն է, ինչ որ ճիւղոտների վերայ էր: Եթէ արիւնը ըզգուշութեամբ դոյլի մէջ հաւաքենք և նորանից յետոյ նորան բոլորովին չշարժենք, այն ժամանակ նա պիտոյ զանգուած կ'գառնայ: Ամբողջ արիւնը իբրև իսկական փոխուած դոնդող կամ պաղպաղակ կ'երևայ, և եթէ նորան դոյլից թափէք (շուտ տալով), այն ժամանակ նա դոյլի ձեւ կը-

պահպանէ, իրմով մեծ շարժող կարմիր դոնդող պատկերացնելով, որը դոյլի միջին իսկական ձևն է ներկայացնում: Բայց եթէ արիւնը մի քանի ժամ, կամ ամբողջ օր թողնէք, այն ժամանակ դոյլը բոլորովին լցնող մեծ դոնդողի փոխանակ կ'գտնէք աւելի պինդ, բայց փոքրիկ չափով դոնդող, որը անգոյն կամ շատ դժգոյն դեղին հեղուկով է ծածկուած, կամ թէ նորա մէջ է լողում: Այդ դոնդողը մի օրից կամ մօտաւորապէս դորա չափ ժամանակից աւելի յետոյ փորանում է և աւելի պնդանում: մենք դորան արեան մակարդ կամ թանձրուածք կ'անուանենք. պարզ հեղանիւթը, որի մէջ արեան թանձրացած մասն է լողում — կոչուում է արեան շինուկ: Թէ իսկապէս ինչ պատահեցաւ արեան հետ, մենք իսկոյն կ'պատմենք: Շուտով նորանից յետ, երբ արիւնը մարմնի անոթներից դուրս եկաւ, նորա մէջ «ինչ մի բան» գոյացաւ, որը առաջ նորա մէջ չէր երևում: Այդ «ինչ մի բանը», որին մենք քնաթելիտ անուանեցինք, այն բազմաթիւ բարակ քնքոյշ թելերի ձևով երևաց, որոնք արեան ամբողջ զանգուածն էին լցնում և, ամեն ուղղութեամբ էլ տարածող, բարակ ցանց կազմում: Այդ ցանցի թելերի մէջ, ինչպէս միջնորմներում, շատ փոքր արանքներ են մնում, որոնց ներսը արիւն է պարունակում: Հէնց դա էլ արեանը դոնդողի նման է դարձնում: Բայց բնաթելիտի իւրաքանչիւր թելը շուտով, իւր գոյանալուց յետոյ, սկսում է սեղմուիլ, ուստի և արիւնը այդ փոքրիկ խորշերից դուրս է մղում: Գորա ժամանակ արեան գնդակները բնաթելիտի հանգոյցների մէջ կ'կապուին, իսկ բոլոր մնացած արիւնը թելերի միջով կ'անցկենայ և կ'դասաւորուի դոյլի վերևը և կողքերին: Այդ մինչև այն ժամանակն է շարժում, քանի որ թանձրուածքում, բացի բնաթելիտի ցանցի մէջ պարունակուած գնդակներից, համարեա թէ բոլորովին արիւն չի մնում: Թանձրուածքից դուրս մղած արեան մնացած մասը շինուկ է կոչուում: Անշանակէ՛ շինուկը արիւն է, որից մակարդուելու միջնորդութեամբ արեան գնդակները հեռացած են:— Այժմ, ես կարծում եմ, որ ձեր մտքում այս հարցը ծագեց, թէ՛ այդպէս հեշտ թանձրացող արիւնը, երբ որ մարմնից դուրս

եկաւ, մարմնի ներսը ինչու չի թանձրանում: Ինչպէս է որ արիւնը մեր մէջ միշտ հեղուկ է: Այդ հարցին փոքր ինչ դժժուար է պատասխան տալ: Երբ արիւնը տաք մարմնից դուրս է գալիս, նա շուտով սառչում է: Բայց նա միայն սառչելուց չէ մակարդում և պնդանում, որը սովորական դոնդողի թանձրանալու պատճառ է լինում: Եթէ դուք արեան սառչելը չ'թուլագրէք, միւսնոյն է, նա դարձեալ կ'մակարդուի, և մինչև անգամ աւելի շուտ. իսկ եթէ բաւականաչափ նորան սառցնէք, այն ժամանակ նա բոլորովին չի մակարդուիլ: Նա մակարդում է նոյնպէս ո՛չ թէ այն պատճառով, որ մարմնից դուրս եկաւ, կանգնեց, և արիւնատար անոթներով մարմնի շուրջը շարժուելուց դադարեց, նոյնպէս և ո՛չ այն պատճառով, որ օդի ներգործութեանն է ենթարկւում, երբ մարմնից դուրս է գալիս — մենք իսկապէս ասած չգիտենք, թէ՛ այդ ինչու է այդպէս լինում: Բոլորը, ինչոր ես ձեզ այժմ կարող եմ ասել, հետևեալի մէջ է պարունակում — քանի որ արիւնը մարմնի մէջ է գտնուում, այնտեղ նորա վերայ այն «ինչ մի բանն» է ներգործում, որը նորան խանգարում է մակարդուիլ: Երբեմն նա մակարդում է և՛ մարմնի մէջ, այն ժամանակ թանձրացած արիւնը արիւնատար ճանապարհները կապում է, որը և՛ շատ վտանգաւոր հիւանդութիւն է:

24). Այդպէս ուրեմն, արիւնը աւելի թանձր է ջրից այն պատճառով, որ արեան պինդ գնդակներ և բնաթելիտ է պարունակում: Մինչև անգամ շինուկը, այսինքն այն արիւնը, որից բնաթելիտը և արեան գնդակները հանուած են, աւելի թանձր է ջրից: Գուրբ գիտէք, որ եթէ մէկ փոքրիկ կաթսայ մաքուր ջուր վերցնէք և նորան եռ տաք, նա բուրրովին կ'եփի և յատակի վերայ ոչինչ չի մնալ: Ամբողջ ջուրը կ'գոլորչիանայ: Բայց եթէ մի փոքրիկ կաթսայով արեան շինուկ վերցնէք և նորան եփ տաք, այն ժամանակ մի ուրիշ, և շատ հետաքրքիր բան կ'յառաջանայ: Նախ՝ չէք կարող ամբողջ շինուկը եռ տալ: Նախքան նորա տաքանալը, այսինքն մինչև աստիճանների այն թուին հասնելը, որի միջոցին ջուրը եռ է գալիս, շինուկը, որ մինչև այդ ժամա-

նակ բոլորովին հեղուկ էր երևում, ինչպէս ջուր, միայն թէ շօշափմամբ փոքր ինչ մածուցիկ, ամբողջապէս բոլորովին կը-
 թանձրանայ: Գուրբ գիտէք հում և եփած ձուի մէջ եղած
 զանազանութիւնը: Հում ձուի մէջ սպիտակուցը թէ և շատ
 մածուցիկ, կաշող և՛ տարածական է, միայն հեղուկ է, այն-
 քան որ չի կարելի նորան դանակով կտրել: Պինդ եփած
 ձուի սպիտակուցը, ընդհակառակը, համարեալ թէ բոլորո-
 վին պինդ է, որին և՛ դուր ամենամանր կտորներ կարող էք
 անել: Սպիտակուցը նոյնպէս մակարդում է եւ տալու ժա-
 մանակ: Արեան շիճուկը այս հանգամանքում շատ նման է
 ձուի սպիտակուցին—նոքա երկուսը ևս միևնոյն նիւթն են
 պարունակում, որը սպիտակուց կամ սլլբումին է կոչ-
 ւում և մակարդուելու, այսինքն պնդանալու էլ յատկու-
 թիւն ունի, երբ նա մօտաւորապէս մինչև ջրի եռացման տա-
 քութեան աստիճանն է տաքանում: Թէ արեան շիճուկը և
 թէ ձուի սպիտակուցը, մինչև անգամ մակարդուածները,
 խոնաւ են, այսինքն շատ ջուր են պարունակում. եթէ նոցա
 զգուշութեամբ ցամաքեցնենք, այն ժամանակ նոքա բոլորո-
 վին թափանցիկ, եղջիւրաման նիւթ կ'դառնան: Չորացրած-
 ները կարող են հեշտութեամբ այրուել, (հետեւապէս նոքա
 այնպիսի նիւթեր են, որոնք կարող են թթուիլ): Նոքա՝ այ-
 մուելով՝ արտաթորում են ածխածածուտ, ջուր և ամմեակ,
 վերջինը հեշտութեամբ կարող էք նոքա հօտից իմանալ, եթէ
 չորացրած արիւնը կրակի վերայ այրէք: Ես ասում եմ, որ
 սլլբումինը այրուելու ժամանակ արտաթորում է ածխածրթ-
 ւուտ, ջուր, ամմեակ, իսկ քիմիան ապացուցանում է, որ սյդ-
 պիսի դէպքում նա անպատճառ կ'պարունակէ՝ ածուխ, որը
 անհրաժեշտ է ածխածրթուտ գոյացնելու համար, ջրածին—
 ջուր գոյացնելու համար և բորակ—ամմեակ գոյացնելու հա-
 մար: Նա կարող է թթուածին չ'պարունակել, որովհետև յի-
 շեալ մարմինները գոյացնելու համար օդից կարող է ստա-
 նալ ամբողջ հարկաւոր թթուածինը, այնուամենայնիւ նա
 պարունակում է և՛ քիչ քանակութեամբ թթուածին: Հե-
 տեւապէս՝ սպիտակուցը, կամ ալբումինը—թթուելու ընդու-
 նակութիւն ունեցող մարմին է, կամ գիւրաժառ նիւթ, որը

բաղկացած է բորակածնից, ածխածնից, ջրածնից և թթուա-
 ծրնից:—Ձեզ հարկաւոր է այդ յիշել. բայց ես չ'պէտք է
 խօսեմ սպիտակուցի մէջ եղած այդ մարմինների իւրաքան-
 չիւրի քանակութեան մասին. նա շատ բաղադրեալ նիւթ է,
 որը զարմանալի կերպով է կազմուած: Հէնց այդ, մեծ քա-
 նակութեամբ ջրի մէջ լուծուած, ալբումինն էլ արեան շի-
 ճուկն է կազմում: Ես ձեզ չ'ասեցի, թէ բնածրիտը ի՞ն-
 չից է բաղկացած, միայն պէտք է իմանալ, որ նա ևս սպի-
 տակուցի նման կազմուած լինելով բորակածնից, ածխածնից,
 ջրածնից և թթուածնից, թէ և՛ այն մարմինը չի ներկա-
 յացնում, ինչ որ սպիտակուցն է, այնուամենայնիւ նորան մի-
 այն բաղադրութեամբ մօտիկ է: Նոցա երկուսի նմանասեռ
 մի ուրիշ նիւթ ևս կայ, որը կազմուած է նոյնպէս բորա-
 կածնից, ածխածնից, ջրածնից և թթուածնից, և ջրի մեծ
 քանակութեամբ էլ մկնակներ է գոյացնում, կայ և՛ էլի
 մէկը, որը արեան կարմիր գնդակների մեծ մասն է կազմում:
 Ամբողջ մարմնի զանազան մասերում այդ բոլոր տարածուած-
 ները սպիտակուցին կամ ալբումինին մօտիկ համասեռներ են,
 բոլորն էլ պարունակում են՝ բորակածին, ածխածին և թը-
 թուածին. բոլորեքեանք կարող են այրուել և, այրուելով,
 բոլորեքեանք էլ արտաթորում են ջուր, ածխածրթուտ և ամ-
 մեակ: Նոքա բոլորը մէկ ընդհանուր անուն ունին. նոցա ա-
 նուանում են սպիտակուցային կամ պրոտէինեան նիւ-
 թեր (գոյքեր):

25). Այսպէս ուրեմն, արիւնը աւելի թանձր է ջրից
 արեան գնդակների, բնածրիտի և շիճուկի մէջ եղած սպի-
 տակուցային նիւթերի ներկայութեան շնորհիւ. միայն բա-
 ցի գոցանից՝ արեան մէջ ուրիշ նիւթեր ևս են գտնուում:
 Այդ շատ նիւթերը թուելով՝ ես ձեզ չեմ ծանրաբեռնել,
 որոնցից մի քանիսը գուցէ մէկ գոյլ արեան երրորդ մասին
 մի քանի գրան ընկնին, այն համեմունքների փոքրիկ պրոտ-
 դուցների նման, որոնց խոհարարը համ տալու համար մի
 որևէ կերակրի մէջ է գցում, թէ և, ինչպէս դուր ասպ-
 դայ զբաղմանց ժամանակ կ'տեսնէք, սյդ նիւթերը, աշխար-
 հիս վերայ եղած շատ փոքրիկ իրերի նման, մեծ յարդ ու-

նին: Բայց ես կ'անդրեմ ձեզ հետևեալը յիշել: Եթէ դուք ցամաքած արիւնը վերցնէք և այրէք, այն ժամանակ թէ և կարող էք սյրել բոլոր սպիտակուցային նիւթերը և այն նիւթերից էլ մի քանիսները, որոնց մասին ես հէնց նոր խօսեցի, այնուամենայնիւ չէք կարող ամբողջ արիւնը մինչև մրուրը այրել: Այրեցէք, որքան ցանկանում էք—այնուամենայնիւ ձեզ մօտ միշտ նորանից մի որևէ քանակութիւն կը մնայ, որը մոխիր է կոչուում: Եթէ դուք այդ մոխիրը զընտէիք, այն ժամանակ կ'գտնէիք, որ նա շատ նիւթերից է կազմուած՝ ծծումբից, լուսակրից, քլորից, կալիից, նատրոնից, կրածնից (կայսի) և երկաթից, որոնցից վերջինը շատ առատ է: Արիւնը, ինչպէս այդ բոլորից երևում է, զարմանալի հեղուկ է: Չարմանալի է նա նորանով, որ կազմուած է ներկած մարմնիկներից և անգոյն հեղուկից, իւր բնութեւտով մակարդուելու ընդունակութեամբ, և այն նիւթերի առատութեամբ, որոնք նորա բաղադրութեան մէջ են մըտնում (սպիտակուցային և հանքային նիւթերով), և՛ վերջապէս՝ իրանց բոլոր յատկութիւններով: Բայց դուք այլ ևս չէք զարմանալ, երբ հասկանաք, որ արիւնը ինքը մարմնի մէջ ինչպէս մի մեծ շարժական շուկայ է ներկայացնում, որի մէջ ծախուում են և առնուում այն բոլոր նիւթերը, որոնք հարկաւոր են մարմնի բոլոր մասերի, այսինքն մկանների, կաշուի, ուղեղի, թոքերի, լեարդի և երիկամունքների համար: Այն, ինչ որ մկանկին է հարկաւոր, ինչպէս մենք տեսնք, արիւնից է առնուում. այն, ինչ որ նորա աշխատանքից յետոյ գործածած նիւթերից է մնում, կրկին արեան վերայ է ծախուում. այդպէս է լինում և՛ մարմնի իւրաքանչիւր գործարանի ու իւրաքանչիւր մասի հետ: Քանի որ կեանքը շարունակուում է, այդ առնելը և ծախելն էլ անընդհատ կերպով շարունակուում են, ուստի և՛ արիւնը անդադար պէտք է շարժուի, մէկ տեղից միւսն անցնելով, իւրաքանչիւր մասին բերելով այն, ինչ որ նորան հարկաւոր է և տանելով այն, ինչ որ նա արդէն գործ էր անել: Երբ որ արիւնը այլ ևս չէ շարժուում, շուկան փակուում է, առնելը և ծախսելը ընդհատուում են և՛ բոլոր գործարաններն էլ մեռնում են:

որոնք նիհարացած են կեանքի և գործունէութեան համար հարկաւոր եղած նիւթերի պակասութիւնից և աղբակալուած են այն նիւթերի առատութեամբ, որոնց արդէն այլ ևս կարիք չ'ունին: Այժմ մենք տեսնենք, թէ՛ արեան մշտական շարժողութիւնն ինչպէս է պահպանուում:

Դ

ԱՐՐԻՆԸ ԻՆՉՊԷՍ Է ՅԱՐՔԻՈՒՄ



26). Դուք արդէն արիւնատար անօթներից քոչութեան մասին գիտէք, գիտէք և՛ այն, որ նորա կազմը տեսակ են՝ զարկերակներ, որոնք մեռած կենդանու մէջ ստորաբար քիւարիւն են պարունակում, կամ բոլորովին չեն պարունակում, և ունին առաձգական, ամուր պատեր, և երակներ, որոնք սովորաբար արիւնով են լցուած և աւելի բարակ ու աւելի թոյլ պատեր ունին: Չարկերակները, երբ որ նոցա կտրէք, սովորաբար խողովակաձև տեսք են պահպանում և բաց են մնում, իսկ երակները՝ կտրելու ժամանակ՝ տափականում են, պատերն իջնում են: Որքան լայն է զարկերակը, այնքան աւելի պինդ և աւելի ամուր են նորա պատերը և այնքան էլ աւելի է նորա և՛ երակի միջի զանազանութիւնը: Դուք մաղային անօթները նոյնպէս ուսումնասիրեցէք գորտի ոտի մէջ, դուք տեսաք, որ դրա փոքր խողովակներ են ամենաբարակ և նուրբ պատերով, որոնք խիտ ցանց են կազմում, որի մէջ են վերջանում ամենամանր զարկերակները և որից սկիզբն են առնում ամենափոքր երակները: Ես բացի գորանից, ձեզ ասել եմ, որ ձեր ամբողջ մարմնի մէջ, նորա իւրաքանչիւր մասում, (թէ և դուք այդ չէք կարող տեսնել), մաղային անօթներից կազմուած ցանցիկներ են գտնուում, որոնք գորտի ոտի անօթներին են նման և խոշորացոյցի օգնութեամբ էլ նկատուում են. ես ձեզ նոյնպէս ասել եմ, որ ձեր մարմնի բոլոր զարկերակները մաղային անօթներով են վերջանում, իսկ բոլոր երակները նոցանով էլ սկսուում են:

Ես դարձեալ կրկնում եմ, որ բացի մէկից, կամ երկուսից, ձեր մարմնի մէջ այնպիսի մի մասը չ'կայ, որտեղ դուք տեսած չ'լինէիք՝ (եթէ կարողանայիք նորան խոշորացոյցի տակ դնել) փոքրիկ զարկերակ, որը ձիւղաւորուում է և մաղային անօթներին ցանցի մէջ անհետանում, և փոքրիկ երակ, որը կազմուում է այդ միւսնոյն մազանման անօթներից, ինչպէս արմատներից: Մի քանի տեղերում այդ ցանցը շատ խիտ է և մաղային անօթներն էլ մինչև անգամ աւելի մօտիկ են գտնուում մէկը միւսին, քան թէ գորտի ոտի մէջ. ուրիշ տեղերում նա աւելի նոսր է և անօթներն էլ աւելի հեռացած են մէկը միւսից. բայց ամեն տեղ, միայն փոքր ինչ բացառութիւններով, որոնց մասին դուք հետզհետէ կ'իմանաք, գտնուում են մաղային անօթներ, զարկերակներ և երակներ: Ենթադրեցէք, որ դուք մի փոքրիկ, կարմիր մարմնիկ էք և միայնակ գտնուում էք մեռած մարմնի բոլորովին դատարկ արիւնատար անօթների մէջ, և սեղմուած էք, ընդունենք, որ՝ ձեռքի երկգլխեան մկանի մաղային անօթի նեղ անցքի մէջ, այնտեղ դուք կարող էք մտնուել, և թէ՛ ցանկանում էլ էք այն տեղը հետազննել, որի մէջ գտնուում էք: Ձեր առաջ երկու ձանապարհ է գտնուում: Ենթադրենք, որ դուք առաջ այն ձանապարհովն էք ուղևորուում, որը, ինչպէս մենք պէտք է ասենք, յետ է տանում: Մաղային անօթի նեղ անցքի երկայնութեամբ անցնելով, ուր դուք հազիւ կարող էք շարժուել, իւրաքանչիւր քայլում աջ և ձախ կողմերից կ'պատահիք հէնց այնպիսի փոքրիկ, մաղային անօթների անցքերի, ինչպիսի մաղային անօթի մէջ որ գտնուում էք: Այդ անօթներով անցնելով, դուք կ'տեսնէք, որ անցքը լայնանում է. ձեզ համար այնպէս նեղ չի լինիլ և դուք որչափ շատ անցքեր անցկենաք, այնքան աւելի կ'լայնանայ և դորա հետ էլ կ'բարձրանայ այն ձանապարհը, որով գնում էք: Գէպի առաջ՝ իւրաքանչիւր քայլափոխին՝ անցքի փոքրիկ պատերը աւելի կ'հաստանան, և նոցա հաստութիւնն ու ամրութիւնն էլ ձեզ ցոյց կ'տան, որ դուք արդէն զարկերակի մէջ էք գտնուում, որի ներսը զարմանալի կերպով հարթ է: Առաջ գնալը շարունակելով, դուք կ'պատահիք դէպի նոյ-

նանման զարկերակների մէջ տանող անցքերի. բայց որչափ առաջ գնաք, նոքա այնքան աւելի քիչ-քիչ կ'պատահին ձեզ: Երբեմն զարկերակները, որոնց մէջ են բերուում այդ անցքերը, փոքր կ'լինին, բայց երբեմն էլ այնպիսի մեծութիւն կ'ունենան, ինչպէս և՛ այն, որի միջով դուք պէտք է գնաք: Նոցանից միքանիսները մինչև այն աստիճան ձեր զարկերակից մեծ կ'լինին, որ բոլորովին տարօրինակ կ'լինէր ասել, թէ նա նորա մէջն է մտնում, որի միջով դուք գնում էք. ընդհակառակը, ձեզ կ'թուի, որ դուք նեղ նրբափողոցից լայն փողոց դուրս եկաք: Ես ենթադրում եմ, որ դուք կը նկատէիք, թէ՛ ինչպէս ձեր ձանապարհը (զարկերակը) իւրաքանչիւր նոր անցքի միջով անցնելիս՝ յանկարծ լայնանում էր, իսկ յետոյ ամբողջ ժամանակ, մինչև նոր անցք հասնելը, համարեալ թէ միակերպ էր մնում: Այդպէս ձանապարհորդելով, մի քանի ժամանակից յետոյ դուք կ'յայտնուէիք շատ լայն խողովակի մէջ, այն էլ այնքան լայն խողովակի մէջ, որ դուք, իբրև արեան փոքրիկ մարմնիկ, նորա մէջ բոլորովին կորած կ'երևայիք: Եթէ մէկին հարցնէիք, թէ ո՞րտեղ էք գտնուում, ձեզ կ'ասէին, որ ձեռքի գլխաւոր զարկերակի մէջն էք: Նորան անցնելով և դորա հետ էլ մի քանի, ըստ մեծի մասին, լայն անցքեր կտրելով, դուք յանկարծ այնպիսի լայն տարածութեան մէջ կ'մտնիք, որ սկզբից չէք կարող երևակայել, թէ՛ հէնց նոցա նման զարկերակումն էք գտնուում, որոնց մէջ մինչև այդ ժամանակ ձանապարհորդում էիք: Այդ զարկերակը աւագ զարկերակ (սօրտայ) է կոչուում. դուք պէտք է նորա անունը յիշէք. դա զարկերակներից ամենամեծն է, դարձեալ փոքր ինչ հեռանալով, դուք սրտի մէջ կ'ընկնէիք:

Այժմ ենթադրենք, որ դուք յետ էք գառնում և աւագ զարկերակից դէպի ձեռքի գլխաւոր զարկերակն էք գնում, իսկ այնտեղից էլ արդէն դէպի աւելի և աւելի նեղ զարկերակները, այնպէս որ վերջը կրկին այն տեղը հասաք, որտեղից որ ձանապարհորդութիւնը սկսեցիք, և այժմ էլ մաղային անօթների միւս ծայրն էք գնում: Գուք կ'նկատէք, որ այդ ձանապարհի վերայ ևս աստիճանաբար աւելի և ա-

ւելի լայն անցքերի մէջ կ'մտնէք: Միայն անշուշտ կ'նկատէք, որ թէ և բոլոր անցքերի ներսը այնպէս հարթ է, ինչպէս և առաջ, բայց նոցա փոքրիկ պատերը աւելի բարակ և աւելի թոյլ են: Այդ ձեզ ցոյց կ'տայ, որ դուք գտնուում էք երակների, բայց ոչ թէ զարկերակների մէջ: Դուք այստեղ կ'պատահէք մի այնպիսի բանի, որը զարկերակների մէջ չէք տեսել (բացի սրտի մօտից)․ երբեմն այստեղ, երբեմն այնտեղ մի այնպիսի բան կ'տեսնէք, որը նման է կամ ժամացոյցների համար շինած պարկերին, որոնց երբեմն կախ են անուժ մասճակալների գլխներին, կամ թէ՛ մեր շորի կողքին կարած գրպաններին. այդ պարկերը իրանց բերաններով դէպի այն կողմն են դարձրած, ուր որ դուք գնում էք:

Այդ պարկերը կոչւում են կիսալուսնաձեւ խփներ կամ փականներ և կազմուած են նուրբ, բայց ամուր թաղանթից կամ կաշուից: Երբեմն նեղ երակների մէջ դուք կը պատահէիք միայն այդպիսի մէկ խփին, երբեմն էլ երկուսին և մինչև անգամ երեքին, շարքով, և դուք, գուցէ, շատ յաճախ կ'նկատէիք, որ այդպիսի խփներից մէկը անցնելով, իսկոյն և եթէ այն տեղն է հանդիպում, որտեղ մէկ երակը միւսի հետ է միանում:

Բացի այդ զանազանութիւնից, երակներով արած ձեր ճանապարհորդութիւնը շատ նման կ'լինէր զարկերակներով արած առաջուայ ճանապարհորդութեանը, և վերջապէս դուք կ'յայտնուէիք մի մեծ երակի մէջ, որը կոչւում է վերին սնամէջ երակ. «վերին» այն պատճառով է կոչւում, որովհետև մեծ սնամէջ երակները երկուսն են (աւագ զարկերակն միայն մէկն է), իսկ յետոյ դուք շուտով կրկին սրտի մէջ կ'ընկնէիք: Այսպէս ուրեմն տեսնում էք, որ մազային անօթից ուղեորուելով (դուք ուղեորուեցաք ձեռքի երկգլխեան միանի մազային անօթից. մի այդպիսի ճանապարհորդութիւն ևս կարելի է կատարել, եթէ ուղեորուիք մարմնի ինչ մասի մազային անօթներից էլ կուզէ լինի) և զարկերակների կամ երակների երկայնութեամբ գնալով, միևնոյն է, դուք սիրտը կ'գաք: Նախ քան մեր պատմութիւն շարունակելը ևս ձեզ պէտք է սրտի մասին պատմեմ:

27). Ձեզ խորհուրդ եմ տալիս գնալ մնավաճառի խանութը և մի ոչխարի փորոտիք գնել. (գուցէ խանութի մէջ մէկ ոչխարի փորոտիք գոնեա՛ գտնուի): Մինչև որ մնավաճառը նոցա կ'հասնէ, դուք զննեցէք: Նոքա շնչափողով կախ են արած կեռերի վերայ: Դուք կ'տեսնէք, որ ոչխարի շնչափողը, ճագարի շնչափողի նման, ամբողջապէս կազմուած է կռճիկային, միայն աւելի լայն և կոշտ օղակներից: Շնչափողից ցած գտնուում են թոքերը, իսկ նոցա մէջ էլ կախուած է սիրտը, որը, գուցէ, մաշկով ծածկուած լինի, ուստի և լաւ չի երևալ: Սրտի և թոքերը՝ հետ միասին կախուած է էլի մի մեծ զանգուած—լեարդը: Երբ որ դուք փորոտիքը տուն բերէք—կտրեցէք լեարդը և սիրտը ծածկող մաշկը, (նա կոչւում է սրտի շապիկ), եթէ նա դեռ ևս կտրուած չ'լինի, և թոքերը սրտի հետ միասին դրէք սեղանի վերայ—այն ժամանակ կ'տեսնէք, որ նոքա շատ նման են օ-դ նկարին: Եթէ դուք կրծքի սեպհական արկղի միջով կարողանայիք ձեր թոքերը և սիրտը (առջևից) տեսնել, այն ժամանակ կ'նկատէիք, որ նոքա շատ քիչ են զանազանուում ոչխարի թոքերից և սրտից: Երբ որ դուք ոչխարի սիրտը զննում էք, պէտք է նոյնանման առարկաներ վեր առնէք. եթէ ցանկանում էք բնախօսութիւն սովորել, այն ժամանակ դուք դժուարութիւն չէք բաշխել այնպիսի մեծ դեղնագոյն խողովակների գտնել, որոնք նշանակուած են նկարի վրայ Ազ և Ա՛զ՝ տառերով: Մնավաճառը նոցա գուցէ հէնց այնտեղը չ'կտրէ, ինչպէս որ ցոյց է տրուած նկարի վերայ, բայց այդ ձեզ չի խանգարում նոցա ճանաչել: Դուք կ'տեսնէք, թէ՛ նոցա պատերը ինչպէս ամուր են, ինչպէս կտրելուց յետոյ էլ նոքա բաց մնացին: Ազ—նշանակում է աւագ զարկերակ, իսկ Ա՛զ՝—աւագ զարկերակի այն մեծ ճիւղը, որը գրնում է դէպի գլուխը և պարանոցը—մէկ կողմից, գուցէ հէնց այն կողմից, որտեղից որ դուք նոր ճանապարհորդեցիք, ինչպէս որ մենք երևակայեցինք՝ իբրև արեան փոքրիկ գնդակ: Եթէ դուք Ա՛զ-ի միջով մի երկաթեայ թել անցկացնէք, այն ժամանակ նորան կարող էք Ազ-ի մէջ զցել և ընդհակառակը: Բայց ինչ է նշանակում թ. զ, որը այդպէս ա-

ւագ զարկերակին է նման, թէև դուք կ'տեսնէք, որ նա վերջինների շարունակութիւնը չի կազմում: (Դուք աւագ զարկերակից չէք կարող նորա մէջ երկամեայ թեւ մտցնել): Դա նշնպէս զարկերակ է, այսինքն թորքային զարկերակ: Մենք շուտով նորա մասին աւելի շատ կ'պատմենք: Այժմ փորձեցէք իմանալ, թէ՛ նկարի վերայ ի՞նչ է նշանակուած վ. ս. Ե. և Ն. ս. Ե.—տառերով. նոցա գտնել փոքր ինչ դժուար է, միայն դուք գուցէ այդ խողովակները գտնէք և հեշտութեամբ էլ հասկանաք, թէ՛ նոքա ի՞նչու համար են հարկաւոր. դոքա գլխաւոր երակներն են՝ վ. ս. Ե.—վերին սնամէջ երակն է, որը կազմուած է գլխից, պարանոցից և ձեռքերից եկող բոլոր երակներից. հէնց նա ինքն է, որի միջով դուք նոր ճանապարհորդեցիք. Ն. ս. Ե.—բնի և ոտների բոլոր երակներից կազմուած ներքին սնամէջ երակն է: Երակներ լինելով, այդ երկու խողովակները բարակ թղլ փոքրիկ պատեր ունին, որոնք կտրելուց յետոյ իջնում են, այնպէս որ մեզ իբրև կաշուի պարզ ծալուածքներ են թըլուում և նոցա անցքերն էլ մինչև անգամ դժուար է գրտնել: Բայց երբ որ դուք անցքերը գտնէք, այն ժամանակ կ'ըտեսնէք, որ այդ երակները կտրելի է շատ լայն խողովակներ դարձնել, և որ նոցա փոքրիկ պատերը, թէ և աւագ զարկերակի պատերից աւելի նուրբ են, արդար և՛ այնպէս նուրբ, որ համարեա՛ թէ թափանցիկ են, այնուամենայնի՛ւ բաւականին ամուր կերպով են կազմուած: Եթէ դուք գլըլաւոր կամ մի փոքրիկ ճիպոտ նոցանից որևէ մէկի մէջ ներս տանէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ նոքա երկուսը ուղղակի դէպի սրտի մէջ տեղն են տանում: Մի որևէ ջանքով դուք կարող էք ճիպոտը ներս տանել Ն. ս. Ե-ի մէջ, այնպէս որ նորա ծայրը վ. ս. Ե.—անցքի միջով անց կ'կենայ: Ի հարկէ դուք հասկանում էք, որ այդ երկու երակները աւելի երկար են, միայն այստեղ նոքա կտրուած են:

28). Նախ քան ոչխարի սիրտը զննել, ես ձեզ նորա մասին մի բան կը պատմեմ 6-դ նկարի օգնութեամբ, որը հասկացողութիւն է տալիս ամբողջ արեան շրջանառութեան մասին: Միայն դուք պէտք է ՚ի նկատի ունենաք, որ այդ

նկարը մօտաւորապէս ձևակերպած գծագրութիւն է և ոչ թէ իսկական պատկեր. այսինքն նա լիովին չի պատկերացնում այն, ինչպէս որ մարմնի մէջ իսկապէս դասաւորուած են արեան անոթները: Եթէ մենք չ'ունենայինք ոչ ձեռքեր, ոչ ոտներ, այլ միայն մի քանի մաղպին անոթներ ունենայինք գլխի վերևը և բնի ներքևը, այն ժամանակ այդ նկարը աւելի կ'նմանուէր մեր արիւնատար անոթների գծագրութեանը, քան թէ այժմ: Նկարի մէջտեղը գտնուում է սիրտը: Նա ամուր ուղղահայեաց միջնորմով երկու կիսի է բաժանուած—աջ և ձախ: Այդ կիսերից իւրաքանչիւրը իւր հերթով երկու մասի է բաժանուած՝ վերին և ստորին, որոնք, այնուամենայնիւ, մէկը միւսից բաժանուած են միայն ոչ—ամուր միջնորմներով. այսպէս ուրեմն, սրտի մէջ մենք չորս բաժանմունք գտանք—երկուսը վերին (աջ և ձախ), որոնք ա. ն և զ. ն—տառերով են նշանակուած և կոչուում են աջ եւ ձախ նախասրտեր, և երկուսը ստորին ա. ս. և զ. ս—որոնք կոչուում են սրտի աջ եւ ձախ սրտախորշեր: Աջ նախասիրտը (ա. ն.) սլաքի ուղղութեամբ աջ սրտախորշերի մէջ է բացուում (ա. ս.) և այդ անցքը, ինչպէս մենք կ'տեսնենք, խիստով կամ փականով լաւ է պահպանուում: Ձախ նախասիրտը (զ. ն.) բացուում է ձախ սրտախորշի մէջ, և այդ անցքն էլ պահպանուում է նոյնպիսի խիստով միայն թէ դուք պէտք է արիւնատար անոթներով մեծ շրջան անէիք, որ ձախ նախասրտից կամ սրտախորշից աջ նախասիրտը կամ սրտախորշն ընկնէիք: Տեսնենք, թէ՛ մենք այդ շրջանը նկարի անոթներով ի՞նչպէս կարող ենք անել:

Ենթադրենք, որ մենք մեր ճանապարհորդութիւնը կ'ըսկըսենք վ. ս. Ե. և Ն. ս. Ե.—տառերով նշանակուած երկու խողովակներից, որոնց պատերը բարակ գծերով են նկարուած: Նոքա երկուսը աջ նախասրտի մէջ են բացուում: Դոքա վերին և ստորին սնամէջ երակներն են, որոնց մենք հէնց նոր գտանք ոչխարի սրտի մէջ: Աջ նախասրտից դուք հեշտութեամբ աջ սրտախորշը կ'գնաք. յետոյ, սլաքի ուղղութեամբ գնալով, դուք ուղղակի կերթաք թ. զ—տառերով նշանա-

հուած խողովակը: Դա թորային զարկերակն է, որի մի մասը ոչխարի սրտի մէջ տեսաք (նկար 5, [թ. զ]): Այդ զարկերակի երկայնութեամբ անցնելով, դուք թորքերը կ'գաք, և, նորա (նկարի վրայ չ'ներկայացրած) այն ձիւղերով անցնելով, որոնք միշտ աւելի կ'նեղանան, դուք՝ վերջապէս՝ թորքերի մազային անօթների մէջ կ'երևաք: Նոցա միջով անցնելով, դուք երակների մէջ կ'յայտնուիք, և, աստիճանաբար աւելի և աւելի լայն երակները անցնելով, միշտ սլաքի ուղղութեամբ գնալով, վերջապէս չորս լայն երակներից մէկը կ'գաք (նկարի վերայ միայն նոցանից մէկն է ներկայացրած), որի միջից ձախ նախասիրտը կ'մտնէք: Չախ նախասրտից մինչև ձախ սրտախորշը փոքրիկ տեղ է, որից ճանապարհը, ինչպէս ցոյց է տալիս սլաքը, ա. զ — տառերով նշանակուած խողովակն է գնում. այդ խողովակը ներկայացնում է արդէն ձեզ յայտնի աւագ զարկերակը (ոչխարի սրտի, նկար 5 ա. զ): Այստեղ նա պարզութեան համար միայն երկու ձիւղի բաժանած է բաշած. միայն ես արդէն ձեզ ասել եմ, և դուք էլ պէտք է յիշէք, որ նա իսկապէս զանազան մեծութեամբ շատ ձիւղերի է բաժանուում: Բայց պէտք է նկարը զննենք այնպէս, ինչպէս որ նա կայ: Միշտ աւելի և աւելի նեղացող զարկերակներով անցնելով, մենք՝ վերջապէս՝ կ'յայտնուինք մարմնի որևէ մասի մազային անօթների մէջ, կաշուի կամ ինչ մի մկնակի, ոսկրի կամ ուղեղի մէջ, կամ առհասարակ մարմնի վերին մասում — մի որևէ տեղ: Մազային անօթներից մենք կ'անցնենք երակները, որոնք բարակութիւնից միշտ կ'հաստանան և մեղ կրկին այնտեղը կ'բերեն, որտեղից որ մենք ճանապարհ ընկանք դէպի վերին սնամէջ երակը — վ. ս. ե.: Եթէ մենք գնանք միւս α^2 ճանապարհով, այն ժամանակ ինչ մի տեղ մարմնի ստորին մասի մազային անօթներով կ'անցնենք և, վերևինի փոխանակ, յետ կ'գանք ստորին սնամէջ երակը — ն. ս. ե., վերին սնամէջ երակի փոխանակ: Աջ նախասրտից ուղևորուելով, ինչպիսի ճանապարհ էլ որ ընտրենք, մենք միշտ կրկին յետ կ'գանք աջ նախասրտը, և մեր ճանապարհն էլ, ցոյց տուած կարգով, միշտ հետևեալ տեղերով կ'անցնի՝ աջ նախասրտով, աջ սրտախորշով, թորային

զարկերակով, զարկերակներով, մազային անօթներով, և թորքերի երակներով, թորքային երակով, ձախ նախասրտով, ձախ սրտախորշով, աւագ զարկերակով, զարկերակներով, մազային անօթներով և մարմնի մի որևէ մասի երակներով և վերին կամ ստորին սնամէջ երակով:

Այսպէս է կատարուում արեան շրջանառական ճանապարհը անօթների միջով: Բայց դորան պէտք է մի բան ևս աւելացնել: Շատ մեծ ձիւղերի մէջ, որոնք պատկերի վերայ չեն նկարած, և որոնցով էլ աւագ զարկերակը մարմնի ներքին մասում բաժան բաժան է լինում, երկուսը կան, որոնք նկարած են և որոնց էլ պէտք է առանձնապէս նկատել: Նոցանից մէկը — մ. իս. խողովակի մէջ արիւն տանող մեծ ձիւղն է, որը նկարի վերայ մատուցողապէս ցոյց է տալիս ստամոքսի, աղիքային խողովակի և մի բանի ուրիշ գործարանների տեղը: Այդ ձիւղը, աւագ զարկերակի բոլոր միւս ձիւղերի նման, մանր ձիւղերի է բաժանուում, իսկ այս վերջիններն էլ՝ մազային անօթների. սոքա էլ այն երակներն են անցնում, որոնք մէկ մեծ երակի մէջ են թափուում, որը նկարի վերայ նշանակուած է դ. ե — տառերով, և կոչուում է դռներակ: Այդ երակը նորանով է նշանաւոր, որ, միւս բոլոր երակների նման, ուղղակի սնամէջ երակի մէջ չէ թափուում, այլ առաջ գնում է լեարդը ուր մշտապէս աւելի և աւելի մանր երակների է բաժանուում, մինչև որ, վերջապէս, լեարդի մէջ մազային անօթների ցանցիկ է կազմում. այդ մազային անօթները կրկին երակների են փոխարկուում, որոնք, վերջապէս, վերջանում են լեարդային երակ (լ. ե.) կոչուած մեծ երակով, որը արդէն սնամէջ երակի մէջ է թափուում, ինչ որ պէտք է դռներակն անէր: Աւագ զարկերակի միւս ձիւղը, որի մասին մենք խօսեցինք, ուղղակի լեարդն է գնում և կոչուում է լեարդային զարկերակ (լ. զ.): Լեարդի մէջ նա բաժանուում է մանր զարկերակների, իսկ յետոյ էլ՝ մազային անօթների. վերջինները խառնուում են դռներակի մազային անօթների հետ և կազմում են մէկ համակարգութիւն, որից լեարդային երակներն են գոյանում: Այսպէս ուրեմն՝ α^2 աւագ զարկերակի ներքին

մասի երկայնութեամբ անցնող արեան կարմիր գնդակի համար մի և նոյնը չի լինիլ — կ'մտնի արդեօք նա մարտողութեան խողովակը գնացող, կամ ուղղակի, օրինակի համար, ոտի մի որ և է մասը մտնող՝ ճիւղը: Աերջին դէպքում, մազային անօթների մէկ համակարգութեան միջով անցնելով, նա շուտով կ'մտնի սնամէջ երակը, իսկ յետոյ՝ սիրտը: Բայց եթէ նա շուռ գայ դէպի մարտողութեան խողովակը, այն ժամանակ, մազային անօթներով անցնելով և դռներակը մըտնելով, նա՝ նախ քան լեարդային երակով սնամէջ երակ մըտնելը՝ պէտք է դարձեալ լեարդի միջի մազային անօթների մէկ համակարգութեան միջով անցնի: Հետեւապէս, մարմնի շուրջը արեան կատարած ճանապարհը այս է — սրտի աջ կողմը, թոքային զարկերակը, թոքերի մազային անօթները, թոքային երակը, սրտի ձախ կողմը, աւագ զարկերակը, մարմնի մի որ և է մասի մազային անօթները, երբեմն սոցա երկու համակարգութիւնները, երբեմն և՛ մէկը, սնամէջ երակը, սրտի կրկին աջ կողմը:

Արեան փոքրիկ գնդակը, թոքերի մազային անօթները չ'անցած, չի կարող սրտի աջ կողմից դէպի ձախը գնալ: Նա, մարմնի մի որ և է մասի մազային անօթների միջով չ'անցկացած, չի կարող սրտի ձախ կողմից դէպի աջը գնալ, իսկ եթէ նա պէտք է դէպի ստամոքսը շուռ գայ, այն ժամանակ պարտաւոր է մէկի փոխանակ մազային անօթների երկու համակարգութիւնով անցնել: Այսպէս ուրեմն, դուք տեսնում էք, որ իսկապէս ձեր մարմնի մէջ արեան երկու շրջանառութիւն կայ և երկու էլ սիրտ, որոնք միացած են: Եթէ հնար ունենայիք, այն ժամանակ կարող էիք սիրտը երկու կտոր անել, մէկ կէսը միւսից բաժանել — և այն միջոցին դուք կ'ունենայիք՝ մէկ սիրտ, որ ընդունում է իւր մէջ բոլոր մարմնի միջի երակները և ուղարկում է իւր զարկերակները (թոքային զարկերակի ճիւղերը) միայն թոքերը, և երկրորդ սիրտ, որը իւր մէջ է ընդունում բոլոր թոքային երակները և ուղարկում իւր զարկերակները (աւագ զարկերակի ճիւղերը) ամբողջ մարմնով: Ուստի և՛ դուք արեան երկու շրջանառութիւն կ'ունենաք, մէկը — թոքերի մի-

ջով անցնող, իսկ միւսը ամբողջ մնացած մարմնով գնացող, որը առաջինի հետ է միանում: Շատ յաճախ այսպէս էլ ասում են, որ արեան երկու շրջանառութիւն կայ, բայց որովհետև թոքերը մնացած մարմնից աւելի փոքր են, այդ պատճառով թոքերի միջով անցնող արեան շրջանառութիւնը կոչւում է փոքր, իսկ մնացած մարմնի միջով անցնողը — արեան մեծ շրջանառութիւն:

29). Ես նկարագրեցի արեան շրջանառութիւնը այնպէս, որպէս թէ՛ արիւնը միշտ մէկ ուղղութեամբ է գնում, սրտի աջ կողմից դէպի ձախը, զարկերակներից դէպի երակները, նկարի վերայ եղած սլաքի ուղղութեան համաձայն: Նա հէնց այդպէս էլ կատարւում է: Արիւնը ուրիշ կերպ չի կարող գնալ: Ինչո՞ւ նա հէնց այդ ճանապարհով է գրնում: Ի՞նչու նա չի կարող ուրիշ ճանապարհով գնալ — հակառակ ուղղութեամբ: Գորա պատճառը մասամբ սրտի, մասամբ էլ երակների մէջ է պարունակւում: Երակների մէջ արիւնը կարող է միայն մազային անօթներից դէպի սիրտը գնալ: Ի՞նչու և ո՞չ հակառակ: Գուր յիշում էք, որ երակների մէջ միշտ, գրպանների նման, այստեղ և այնտեղ ցրուած փոքրիկ փականներ կան — երբեմն մէկ-մէկ, երբեմն երկ-երկու և երբեմն էլ երեք-երեք՝ շարքով դասաւորուած: Գուր յիշում էք, որ փականների բերանները (անցքերը) միշտ դէպի սիրտն են դարձրած: Այժմ մենք մեզ պատկերացնենք արեան փոքրիկ գնդակների մի խումբ, որոնք երակով դէպի սիրտն են գնում: Արեան գնդակները մօտենալով մի որ և է փականին և, փականը երակի պատերին սեղմելով, բոլորովին ազատ, իբրև թէ ոչ մի բանի մէջ չ'եղած, նորա մօտով անցնում են և իրանց ճանապարհը շարունակում: Բայց ենթադրեցէք, որ նորա հակառակ ճանապարհով են գնում՝ սրտից դէպի մազային անօթները: Երբ նորա փականի-գրպանի բաց անցքին մօտենան (այժմ նա դէպի նոցա հանդիպելու կողմը դարձած կ'լինի) նոցանից մի քանիսները գուցէ այդ գրպանի մէջ ընկնեն, ուստի և վերջինը կ'ուռչի, և որչափ նա աւելի սկսի ուռչիլ, այնքան նորա մէջ աւելի արիւն կ'հաւաքուի և նա էլ՝ դորանով

ցուելով՝ արեան ճանապարհը կ'կապէ, ինչպէս որ այդ ցոյց է տուած 7-րդ նկարի վերայ. եթէ շարքով երկու կամ երեք փական լինին, այն ժամանակ՝ նորա լցուելով, պինդ կերպով կ'միանան և ճանապարհը բոլորովին կ'փակեն: Եթէ դուք դորա մասին կասկածու՞մ էք—մետաքսեայ կամ բամբակեայ նիւթից մի փոքրիկ գրպան շինեցէք և նորան կպցրէք մոխրագոյն թղթի կտորին, յետոյ վերջինը խողովակաձև ոլորեցէ՛ք այնպէս, որ գրպանը նորա ներսը ընկնի: Եթէ դուք յետոյ սկսէք խողովակի մէջ սիսեռ ածել, նորան այնպէս բռնած, որ գրպանի անցքը դէպի ներքև դարձրած լինի, այն ժամանակ բոլոր սիսեռը իսկոյն ևեթ մի ուրիշ անցքով կ'թափուի. բայց եթէ դուք փորձէք սիսեռը խողովակի մէջ ածել, վերջինը հակառակ դրութեամբ բռնելով, այն ժամանակ ձեր խողովակը շուտով կախուած կ'լինի սիսեռով և՛ զգուշութեամբ էլ նորան յետանելով, դուք գրպանը սիսեռով լցուած կ'գտնէք: Այսպէս ուրեմն, երակների միջի փականները արեանը թոյլ են տալիս ազատ կերպով մաղային անօթներից դէպի սիրտը անցնել. բայց արգելում են նորան հակառակ ճանապարհով գնալ: Եթէ դուք ձեր ձեռքը ձեղքէք, այն ժամանակ կարող էք կաշուի տակ մի քանի երակներ նկատել, որոնց մէջ արիւնը թաթից դէպի ուսն է հոսում: Եթէ դուք սկսէք մատով այդ երակներից մէկը դէպի թաթի ուղղութիւնը ճնշել, այն ժամանակ նա կ'ուռչի. ուշադրութեամբ զննելով՝ դուք տեղտեղ փոքրիկ հանգոյցներ կ'տեսնէք, որոնք երակների փականների մէջ արեան ընդհարումից են գոյացել: Եթէ դուք՝ հակառակ ուղղութեամբ սեղմելով, մատը թաթից դէպի արմուկը տանէք, այն ժամանակ արիւնը փականներից հեշտութեամբ կ'հանէք. եթէ այդ միջոցին էլ միւս մատով արեան հոսանքը յետևից, այսինքն թաթի կողմից կապէք, այն ժամանակ երակը շատ երկար միջոց դատարկ կ'մնայ: Երակների մէջ խփների լինելը այն պատճառներից մէկն է կազմում, որոնցով արիւնը շարժոււմ է միայն մէկ ուղղութեամբ, բայց գլխաւոր պատճառը սրտումն է: Աերագառնանք այժմ ոչևարի սրտին:

30). Գուք նկարից գիտէք, որ երկու գլխաւոր երակները աջ նախասրտի մէջ են բացուում: Եթէ ոչևարի սրտի մէջ այդ երկու երակները երկայնութեամբ կտրէք, այն ժամանակ կ'գտնէք, որ նորա երկու առանձին անցքերով փոքրիկ խորշի մէջ են բացուում, որի ներսի մակերևոյթի մեծ մասը շատ հարթէ, և որի փոքրիկ պատերն էլ, որոնք մըկնակներից են կազմուած, շատ հաստ չեն: Այդ փոքրիկ խորշը աջ նախասրտն է, որը ցոյց է տուած 8-րդ նկարի վերայ (ա. ն.), ուր գլխաւոր երակները երկայնութեամբ առանց կտրուելու են թողնուած, միայն խորշը ցոյց տալու համար նախասրտի առաջին մասն է կտրուած: Այդ նախասրտի մէջ բացի այն անցքերից, որոնք դէպի երկու գլխաւոր երակները և թէ դէպի այն մէկ երակն են տանում, որը սրտիցն է գալիս (նկար 8 ճ), դարձեալ մէկ շատ լայն անցք է գտնուում, որը ուղղակի դէպի ներքև է տանում. նա այնպէս լայն է, որ դուք կարող էք նորա մէջ ձեր երեք մատը ներս տանել: Այդ անցքը դէպի աջ սրտախորշն է տանում. նորա միջով դուք հեշտութեամբ կարող էք ձեր մատները նախասրտից սրտախորշը տանել և կրկին նոցա այդտեղից հանել. միայն ամբողջ սիրտը մէկ ձեռքի վերայ առէք և, նախասրտը դէպի վերև դարձրած, փորձեցէք նորա միջով սրտախորշի մէջ ջուր ածել: Առաջին մի քանի գրգռլ ջուրը շատ հեշտութեամբ կ'մտնի, բայց յետոյ դուք մի բարակ սպիտակ մաշկ կ'տեսնէք, որը դէպի անցքը կ'ըշարժուի և բոլորովին նախասրտից դէպի սրտախորշը եղած ճանապարհը կ'փակէ. ա՞ծած ջուրը իսկոյն նախասրտը կըլըցնէ և փիից դուրս կ'թափուի: Եթէ դուք ուշադրութեամբ այդ ուռած թաղանթը զննէք, այն ժամանակ կ'նկատէք, որ նա կազմուած է երեք կաշուէ պինդ միացած կտորներից, ինչպէս ցոյց է տուած 9 նկարի վերայ (եփ1, եփ2, եփ3): Այդ կտորները աջ նախասրտի և աջ սրտախորշի միջի փականն են կազմում, որը եռ-փեղկեան փական է կոչուում: Թէ նա ի՞նչու է այդպէս կոչուում, դուք կ'հասկանաք, եթէ միրատով աջ սրտախորշը բանաք, երկայնութեամբ սրտի պատը կտրելով, կամ սրտախորշի առաջին մասը դուրս կորզե-

լով, ինչպէս նկարած է 8-դ նկարի վերայ: Այն ժամանակ դուք կ'տեսնէք, որ փականը կաշուէ երեք եռանկիւնաձև կըտորներէց է կազմուած, որոնք սրտախորշի պատերին—անցքի շուրջը—կպած են. իսկ նոցա միւս, ազատ ծայրերը թէ և դէպի ներքև, սրտախորշի դէպի ներսն են կախուած (նկար 10 եւիչ), այնուամենայնիւ՝ նոքա բոլորովին ազատ չեն: Հեշտութեամբ կարելի է եռանկեանց կողմերին կպած բարակ թելեր գտնել, որոնց միւս ծայրերը կպած են սրտախորշի կողմերին և մասամբ էլ նոցա փոքրիկ մտտ ճիւղերին, որոնք պտկաձև մկնակներ են կոչուում (նկար 8. պ. մ.):

Այդ խիւները (փականները) ինչպէս են գործում: Իսկոյն կ'բացատրենք: Երբ որ սրտախորշը դատարկ է, և արիւնը, ջուրը, կամ միւս մի որ և է հեղուկ նախասրտի միջով սրտախորշի մէջ է թափուում, այն ժամանակ թաղանթները սրտախորշի պատերին կպչում են և այդպիսով նախասրտից դէպի սրտախորշը լայն անցք է կազմուում: Միայն, սրտախորշը իւր չափով լցուած լինելով, մտնող արիւնը կամ ջուրը փականի փեղկերէց անցնում է և նոցա դէպի նախասրտը քշում: Որքան ջուրը սրտախորշի մէջ աւելի է շատանում, այնքան նա փականներին աւելի է բարձրացնում, իսկ երբ սրտախորշը բոլորովին լիքը կ'լինի, այն ժամանակ փեղկերը նախասրտից սրտախորշը տանող անցքի մէջ տեղը կ'միանան և բոլորովին նորան կ'փակեն: Բայց նոքա ինչու համար չեն շարունակուում իրարից աւելի հեռանալ. ինչու չեն մղուում դէպի նախասրտը և ինչու չեն կրկին անցքը բացանում (երբ արդէն հարկաւոր է):—Որովհետև փոքրիկ թելերը, (որոնք ջլային թելեր են կոչուում), որոնցով փականները սրտախորշի պատերին կպած են, նոցա բռնում են: Փականի փեղկերը պատերից հեռանում են մինչև այն ժամանակ, քանի որ թելերը բաւականին պինդ չեն ձգուած, իսկ թելերն էլ այնպիսի երկայնութեամբ են լինում, որ փականի թաղանթին թոյլ են տալիս մինչև անցքի մէջտեղը հասնել, միայն թէ շատ հեռանալ չեն թուլատրում: Թելերը որքան աւելի ամուր են ձգած, այնքան փականի փեղկերը աւելի ամուրութեամբ են մօտենում և այնքան էլ ա-

ւելի նոքա պինդ են փակուում նախասրտից սրտախորշի մէջ տանող անցքը: Ուստի՝ եռ—փեղկեան փականը (խուլը) արեանը թոյլ է տալիս հեշտութեամբ աջ նախասրտից դէպի աջ սրտախորշը հոսել, իսկ արգելում է սրտախորշից դէպի նախասրտը գնալ:

31). Այժմ սրտախորշի մէջ մտիկ արէք: Նորա պատերը մտտ են, այսինքն մկնակային, և դուք կ'նկատէք, որ նոքա նախասրտի պատերից աւելի ամուր են և հաստ: Բացի դէպի նախասրտը տանող անցքից, սրտախորշի պատի մէջ մի ուրիշը ևս կայ, որը նոյնպէս վերեն է գտնուում, առաջինի հետ կողք-կողքի կպած: Եթէ դուք գրչակութիւն կամ ձեր մատները երկրորդ անցքի միջով ներս տանէք, այն ժամանակ կ'նկատէք, որ նա դէպի այն լայն անօթն է տանում, որը արդէն սովորեցիք թոքային զարկերակ անուանել (նրկար 5. թ. զ.): Թոքային զարկերակը, սրտախորշից սկսելով, երկայնութեամբ կտրեցէք, ինչպէս որ այդ արած է 8 նկարի վերայ (թ. զ.): Դուք այն ժամանակ իսկոյն և եթէ մի դիմ կ'նկատէք, որտեղ կարմիր, մկնակային սրտախորշի փափուկ միսը վերջանում է և սկսուում դեղնագոյն, աւելի պինդ նիւթը, որից կազմուած են զարկերակի պատերը: Հէնց այդ գծի վերայ էլ դուք կ'տեսնէք երեք (գուցէ անակնկալ կերպով նոցանից մէկը կտրէք) գեղեցիկ փականներ կամ խիւներ, որոնք նոյն կերպով են կազմուած, ինչպէս որ կազմուած են երակների միջի խիւները, միայն թէ նոցանից աւելի մեծ են և աւելի պատուական: Այդ փականները կոչուում են կիսալուսնաձև խիւները, որովհետև իւրաքանչիւր փեղկ լուսնի կիսի ձև ունի: Նոցա զգուշութեամբ բարձրացրէք և տեսէք, թէ՛ նոքա ինչպէս քնքոյշ և դորա հետ էլ միասին ինչպէս ամուր են: Նոցա նշանակութիւնը ձեզ համար բացատրելու կարիք չ'կայ: Դուք իսկոյն և եթէ այդ կ'հասկանաք—նոքա արիւնը սրտախորշից թոքային զարկերակն են թողնում և արեանն էլ զարկերակից սրտախորշի մէջ վերադառնալը արգելում:

Հետևապէս մեր սրտի աջ կողմում երկու մեծ խիւներ են գտնուում—եռփեղկեան՝ նախասրտի և սրտախորշի մէջ, և

կիսալուսնեայ՝ սրտախորշի և թոքային զարկերակի մէջ: Նոքա արեանը թոյլ են տալիս միայն մէկ ուղղութեամբ շարժուել: Եթէ դուք դորա մասին կասկածում էք, այն ժամանակ այս փորձն արէք: Թարմ սրտի սնամէջ երակներից մէկի մէջ մի խողովակ ներս տարէք, միւս սնամէջ երակը կապելով. մի ուրիշ խողովակ ևս թոքային զարկերակը մըտցրէք: Եթէ դուք յետոյ սկսէք սնամէջ երակներից մէկի մէջ դրած խողովակը ձագարով ջուր ածել, այն ժամանակ ջուրը ազատութեամբ նախասրտի և սրտախորշի միջով կ'անցնի և թոքային զարկերակով էլ դուրս կ'թափուի. բայց եթէ դուք փորձէք ջուրը հակառակ կողմն ածել, թոքային զարկերակով, այն ժամանակ ջուրը դուրս չի թափուիլ, որովհետև զարկերակը իսկոյն և եթ փականներով կ'փակուի, թէ և մի քանի կաթիլներ միայն սրտով երակի մէջ կ'մտնեն: Այժմ թոքային զարկերակը, որքան կարելի է, երկայնութեամբ աւելի կտրեցէք և դորա հետ էլ նկատեցէք, թէ՛ նորա փոքրիկ պատերը ինչպէս ամուր են և պինդ: Գուր կ'տեսնէք, որ նա շուտով երկու ճիւղի է բաժանուում՝ մէկը գընում է աջ թոքը, իսկ միւսը—ձախ: Այդ ճիւղերից իւրաքանչիւրը, թոքին հասնելով, նորից մանր ճիւղերի է բաժանուում, իսկ դոքա էլ իրանց կարգով դարձեալ մանրերի են բաժանուում, և այն: Գուր արդէն գիտէք, որ այդ ճիւղերը մազային անոթներով են վերջանում, որոնք բոլոր թոքերումն են տարածուած:

32). Թոքային զարկերակի երկու գլխաւոր ճիւղերին մօտիկ դուք գուցէ ճարպով և ուրիշ նիւթերով ծածկուած մի քանի խողովակներ գտնէք, որոնց իսկոյն երակների տեղ կ'ընդունէք: Եթէ դոցանից մէկն ու մէկն բանաք և նորա մէջ բարակ երկաթեայ թել ներս տանէք, այն ժամանակ նա մէկ ուղղութեամբ կերթայ դէպի թոքերը, իսկ միւս՝ հակառակ ուղղութեամբ—սրտի ձախ կէսը: Գոքա թոքային երակներն են. եթէ նոցա բոլորովին կտրէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ նոքա չորս անցքերով սրտի ձախակողմեան խորշի մէջ են բացուում, համարեա այնպիսի խորշի մէջ, ինչպիսին որ նորա աջ կիսումն է գտնուում և որին էլ մենք աջ

նախասիրտ անուանեցինք (նկար 11): Այդ խորշը իսկական ճախ նախասիրտն է. նորա մէջ դէպի ձախ սրտախորշը տանող մի անցք կայ, որը աջ նախասրտից դէպի սրտախորշը տանող անցքին շատ նման է: Նա նոյնպէս կապուում է կախ ընկած խիւնով, որը բոլորովին սրտի աջ կողմի ետփեղկեան խիւնին է նման, միայն թէ երեք փեղկի փոխանակ երկու փեղկ ունի (նկար 9 երկրի, երկրի) և կոչուում է երկփեղկեան խուլի: Նորա փեղկերը նոյնպէս կպած են սրտախորշի պատերին բարակ թելերով. առ հասարակ այդ ետփեղ Գրեթէ ետփեղկեան խիւնին բոլորովին համանման է, միայն նորա մէջ փեղկերի թիւը ուրիշ է. նոքա բոլորովին միակերպ են գործում: Եթէ դուք մկրատով նախասիրտը և սրտախորշը կտրէք, այն ժամանակ կ'գտնէք, որ ձախ սրտախորշը (նկար 11) շատ նման է աջ սրտախորշին, միայն նորա պատերը աւելի հաստ են, մինչև այն աստիճան հաստ, որ ձախ սրտախորշը սրտի մեծ մասն է կազմում: Գուր այդ կ'տեսնէք, եթէ թարմ սրտին դրոյց մտիկ անէք:

Նախասրտերն այնպէս փոքր են և ճարպով վերեւից այնպէս խիստ ծածկուած, որ արտաքուստ նոցա հազիւ կարելի է զանազանել: Գուր պարզ կարող էք զանազանել միայն երկու փոքրիկ մտտ յաւելուած՝ իւրաքանչիւր նախասրտի վերայ մէկ-մէկ հատ (նկար 5 ա. ա. ն. և ա. ծ. ն.): Սրտի մեծ մասը սրտախորշերն են կազմում. ուշագրութեամբ հետազննելով, դուք դարձեալ ճարպի մի շերտ կրտեսնէք, որը սրտի շուրջն է անցնում (նկար 5, 3): Նա երկու սրտախորշերի մէջ սրտի մտտ միջնորմի գիծն է նշանակում: Գուր նոյնպէս կ'նկատէք, որ սրտի գագաթը (մի քիչ սուր) ձախ սրտախորշն է կազմում: Գտնանք ձախ սրտախորշի ներսի կողմը: Նորա վերին մասում, նախասրտից դէպի սրտախորշը տանող անցքի մօտ, դարձեալ միայն մէկ անցք է գտնուում: Եթէ մատը այդ վերջինի մէջ գնէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ նա դէպի այն անոթն է տանում, որը նախ դէպի ներքև թոքային զարկերակի միւս կողմն է գնում, իսկ յետոյ՝ բարձրանում է և կրկին դէպի առաջ է դալիս: Այդ անոթը արդէն ձեզ յայտնի աւագ զարկերակն

է: Եթէ նորան կտրէք, սրտախորշից սկսելով, (այդ անելու համար պէտք է թորային զարկերակը կտրել), այն ժամանակ կ'նկատէք, որ ձախ, ինչպէս և՛ աջ կողմի վերայ սըրտախորշի կարծիր մասլի փոքրիկ պատերը յանկարծ զարկերակի դեղին և պինդ փոքրիկ պատերի են փոխարկուում. նոյնպէս և՛ կ'տեսնէք, որ հէնց այդ բաժանման գծի վերայ էլ բոլորովին այնպիսի կիսալուսնաձև խիւներ են գտնուում, ինչպէս և թորային զարկերակի մէջ: Հետեւապէս սրտի ձախ կիսում երկու փականներ կան—երկ-փեղկեան՝ նախասրտի և սրտախորշի մէջ, և կիսալուսնաձև՝ սրտախորշի և աւագ զարկերակի մէջ: Նորա արեանը թոյլ են տալիս միայն մէկ ուղղութեամբ շարժուել: Գուր հեշտութեամբ կարող էք մի որ և է հեղուկ ածել թորային երակների, նախասրտի, սրտախորշի և աւագ զարկերակի մէջ, բայց հակառակ ճանապարհով, այսինքն աւագ զարկերակից սկսելով, ջուրը չէք կարող այդ բոլոր մասների մէջ ածել: Ահա թէ՛ ինչպիսի պատճառներից արիւնը կարող է միայն մէկ ուղղութեամբ շարժուել: Նորա ճանապարհը ես նկարագրեցի: Ամենակարևոր նշանակութիւն ունին սրտի միջի խիւները, երակների խիւները միայն նոցա փոքր ինչ նպաստում են:

33). Այսպէս ուրեմն, դուք այժմ հասկանում էք, ճշմարիտ չէ՞ արդեօք, թէ՛ ի՞նչու համար արիւնը միայն մէկ ուղղութեամբ կարող է շարժուել: Այժմ մենք գիտենք, թէ՛ արիւնը ինչ ճանապարհով կարող է շարժուել. մեզ մընում է վճռել այն հարցը, թէ՛ արեանը ի՞նչն է ստիպում շարժուել—Գուր գիտէք, որ կենդանու ամբողջ կենքի ընթացքում նա իւր շարժողութիւնը պահպանում է: Գուր նորան շարժող տեսաք գորտի լողացողական թաղանթի մէջ: Արեան մշտական շարժողութիւնը նորանով էլ է ապացուցանւում, որ երբ մի որ և է արիւնատար անօթ էք կտրում, այն ժամանակ արիւնը սկսում է նորանից դուրս գալ: Եթէ զարկերակը կտրէք, այն ժամանակ արիւնը սըրտին աւելի մօտիկ ծայրից է դուրս գալիս. եթէ երակը կտրէք, այն ժամանակ արիւնը մեծ քանակութեամբ այն ծայրից կ'հոսի, որը մազային անօթներից աւելի մօտիկ է: Եթէ

ձեզ հարկաւոր է զարկերակից հոսող արիւնը կանգնեցնել, դուք պէտք է նորան կապէք կտրուածի և սրտի մէջ գտնուած տեղում. եթէ արիւնհոսութիւնը երակից պէտք է կանգնեցնել, այն ժամանակ նորան հարկաւոր է կապել կտրուածքի և մազային անօթների մէջ գտնուած տեղում: Գուր այժմ հասկանում էք, թէ՛ ի՞նչ զանազանութիւն կայ զարկերակի կտրուածքի և երակի կտրուածքի մէջ, իսկ այդ իբրև նոր ապացոյց է ս'յն բանին, որ արիւնը զարկերակներով շարժուում է սրտից դէպի մազային անօթները, իսկ երակների մէջ—մազային անօթներից դէպի սիրտը: Արիւնը ոչ թէ միայն միշտ է շարժուում, այլ շարժուում է շատ արագ: Նա մեծ զարկերակներով մի վայրկեանում մինչև 10 դիւլիմ է անցնում: Մազային անօթների ցանցով նա ծանր է շարժուում, բայց կարող է երբեմն ամբողջ մարմնի շուրջը մօտաւորապէս մէկ րոպէում անցնել: Նա միշտ այդպէս արագ է շարժուում, իսկ երբ շարժուելուց դադարում է—դուք մեռնում էք: Մա ինչի՞ցն է, որ շարժուում է: Ենթադրենք, որ մենք մի երկար և բարակ մկանսկ ունինք: մէկ ծայրով նա որ և է անշարժ բանի է ամրացրած, իսկ նորա միւս ծայրին էլ կապած է մի որ և է ծանրութիւն: Գուր գիտէք, որ մկանկը իւր ամեն մի կուչ գալիս ծանրութեանը բարձրացնում է: Ենթադրեցէք, որ մկանկին փոխանակ ծանրութիւն կախ տալու՝ դուք նորան ջրով լիքը փամփուշտի շուրջ փաթաթեցիք: Այդ դէպքում՝ մկանկի իւրաքանչիւր անգամ կուչ գալու ժամանակ ի՞նչ կ'յառաջանայ: Պարզ է, որ մկանկը փամփուշտին կ'սեղմէ և եթէ վերջինում անցք լինի, այն ժամանակ մկանկի կուչ գալը ջրին նորանից դուրս կ'մղէ: Միևնոյնը յառաջանում է և սրտի մէջ: Գուր արդէն գիտէք, որ սիրտը մկանկային է: Սրտի միջի իւրաքանչիւր խորջը այսինքն իւրաքանչիւր սրտախորջը և իւրաքանչիւր նախասիրտը, իրմով բարակ փոքրիկ պարկ է ներկայացնում, որը շատ մկանկներով է փաթաթուած: Սովորական մկանկի մէջ բնածնների փնջերը, որոնցից մկանկն է կազմուած, մէկը միւսի մօտ խելացի և կանոնաւոր կերպով են դասաւորուած: Գուր այս կարող էք հեշտութեամբ տեսնել եփած մսի մի

մեծ կտորի վերայ, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ զանազան ուղղութեամբ դասաւորուած մեծ մկնակների զանգուած: Գուրբ գիտէք, որ եթէ փորձէք մսի այդպիսի կտորից մի բարակ կտոր կտրել, այն ժամանակ դանակը նորա մէկ մասի մէջ մտային թելերի երկայնութեամբ կերթայ, իսկ միւսի մէջ — նոցա տրամագծային ուղղութեամբ. բայց իւրաքանչիւր առանձին մասի մէջ նրբաթելերի փնջերը շատ կանոնաւոր են դասաւորուած: Սրտի մէջ նրբաթելերի փնջերը զարմանալի կերպով են միմեանց հետ հիւսւում, այնպէս որ, մինչև անգամ չի կարելի մի այնպիսի տեղ գտնել, որտեղ միմեանց մօտիկ նրբաթելերը մէկ ուղղութեամբ գնային: Նոքա այն պատճառով են այդպէս դասաւորուած, որ մկնակները միևնոյն ժամանակ կարողանային իւրաքանչիւր պարկի բոլոր մասերը սեղմել: Այսպէս ուրեմն, սրտի մէջ իւրաքանչիւր խորշ ինքը մի բարակ պարկ է ներկայացնում, որը շրջապատուած է մկնակների ցանցով: Իւրաքանչիւր անգամ, երբ մկնակները կուչ են գալիս, նոքա պարկը սեղմում են և ձգտում են նորանից այն բոլորը հանել, ինչ որ նորա մէջ է բովանդակուում: Սրտախորշերի շուրջն աւելի մկնակներ են գտնուում, քան թէ նախասրտերի շուրջ, և ձախ սրտախորշի շուրջն աւելի, քան թէ աջ սրտախորշի շուրջ: (Գուրբ գիտէք, որ նախասրտերի պատերը սրտախորշերի պատերից աւելի հաստ են և ձախ սրտախորշի պատերն էլ աջ սրտախորշի պատերից աւելի հաստ, իսկ այդ պատերը կազմուած են մկնակներից):

Սրտի մէջ զարմանալի երևոյթ է յառաջանում: Նախասրտերի և սրտախորշերի այդ մկնակները անդադար կուչ են գալիս և նորից լայնանում, կարճանում են և երկարում. նոքա բոլոր ժամանակ աշխատում են, քանի որ սիրտը կենդանի է: Ձեր ձեռքի երկգլխեան մկանը կծկուում է միայն այն ժամանակ, երբ որ դուք նորան կուչ գալ էք ստիպում: Եթէ դուք չէք ցանկանում շարժուել — ձեր ձեռքը հանգիստ է լինում: Բայց ձեր սիրտը երբէք չի հանգստանում: Քնում էք դուք կամ չէք քնում, վազում էք կամ բռնորովին հանգիստ պառկում, մի բան էք շինում, կամ ոչինչ չէք անում — մինչև այն ժամանակ, քանի որ կեանք ունիք,

ձեր սիրտը անդադար աշխատում է: Իւրաքանչիւր վայրկեան, և մինչև անգամ աւելի յաճախ, նախասրտերի արագ և կարճ սեղմումն է յառաջանում, երկուսինը միանգամից, իսկ հէնց որ նախասրտերը սեղմուելուց դադարում են, սրտախորշերի զօրեղ սեղմումն է վրայ հասնում, որոնք նոյնպէս սեղմւում են երկուսը միանգամ, որի ժամանակ ձախը սեղմւում է աջ սրտախորշից աւելի զօրեղ. յետոյ մէկ ակնթարթում լիակատար հանգստութիւն է վրայ հասնում: Բայց չի անցնում և՛ մի վայրկեան, երբ նախասրտերը նորից են սեղմւում, իսկ նոցանից յետոյ էլ սրտախորշերը: Այդպիսի կծկումն (կուչ գալը) և սրտախորշերի պատերի առաջուայ դիրքին վերադառնալը — սրտի բաբախումն է, ինչպէս որ նորան անուանում են. այդ երկու նախասրտերի կարճ սեղմուելը և թէ այդ երկու սրտախորշերի աւելի երկարատեւ և զօրեղ սեղմումը ձեր սրտի մէջ ձեր ծնելուց առաջ սկսուեցան և միայն այն բովանդակ կ'ընդհատուին, երբ որ ձեր կենանքը կ'վերջանայ:

34). Բայց սրտի այդ բաբախումն արեանը ի՞նչպէս է ստիպում շարժուել: Տեսնենք: Միտքներդ պահեցէք, որ ձեր արիւնատար անոթների մէջ մօտաւորապէս 12 գրուանքայ արիւն է գտնուում (կամ կ'գտնուի, երբ որ դուք մեծանաք): Գուրբ տեսաք, որ սիրտը և արիւնատար անոթները փակ խողովակների համակարգութիւն են կազմում. այդ համակարգութեան խողովակների պատերը մի քանի տեղերում շատ բարակ են, ինչպէս օր. մազային անոթներում, միայն նոքա անցքեր չ'ունին և չեն էլ ընդհատուում. երակների միջով սրտով, զարկերակներով կրկին դէպի մազային անոթները տանող մազային անոթներից կազմուած ճանապարհը բոլորովին բաց է, միայն թէ անոթներից դուրս գալու անցք չ'կայ, բացի այն դէպքից, եթէ նոցա պատերը մի որ և է տեղ վնասենք:

Արիւնատար անոթների և սրտի այդ ամուր փակած համակարգութիւնը համարեալ թէ բոլորովին լիքն է 12 գրուանքայ արիւնով: Այդ դէպքում սրտի իւրաքանչիւր կուչ գալիս ի՞նչ պէտք է յառաջանայ: Սկսենք աջ սրտախորշից: Ենթադրենք, որ նա արիւնով լիքն է: Նա կուչ է գալիս:

Նորա միջի ամէն կողմից սեղմուած արիւնը կ'վերադառնայ դէպի աջ նախասիրտը, միայն եռփեղկեան խուփը յետ կ'ընկնի, և դէպի նախասիրտը տանող անցքը կ'փակէ: Արիւնը փականին որքան աւելի է ճնշուած, այնքան աւելի պինդ է փակուած և արեանը նախասրտի մէջ մտնելու հնարաւորութիւնից զրկուած: Գէպի թորային զարկերակը տանող ճանապարհը բաց է և արիւնը այնտեղ է գնում: Բայց ահա թէ ի՞նչ է հարկաւոր բացատրել— արիւնը զարկերակի մէջ ի՞նչպէս կ'տեղաւորուի, նա խոմ արդէն արիւնով լիքն է, ինչպէս և մազային անօթները և թոքի միջի երակները: Այո, միայն թէ զարկերակը կարող է լայնանալ: Վերջրէք թորային զարկերակի մի կտորը և, նորա մէկ ծայրը կապելով միւս ծայրով նորա մէջ ջուր ածեցէք: Գուք կ'տեսնէք, թէ՛ նա լայնանալու ինչպիսի՞ զօրեղ ընդունակութիւն ունի. ուստի և արիւնը կարող է սրտից զարկերակի մէջ մտնել, որին նա ձգուած—լայնացնում է: Որովհետեւ սրտախորշը մինչև այն ժամանակն է սեղմուած, քանի որ նորա ներքին պատերը միացած չեն, այդ պատճառով նորա մէջ գտնուած բոլոր արիւնը նորանից զարկերակի մէջ կ'գնայ:— Երբ որ նորա կուչ-գալը վերջանում է, արիւնը յետ է քաշուած դէպի սրտախորշը, միայն նորա մի քանի կաթիլները կարող են նորա մէջ ընկնել, որովհետեւ սրտի շուտ զարնող կիսալուսնաձև խփները արեան հակառակ ճանապարհը կ'կապեն. (այն բոլորը, ինչի մասին մենք խօսում ենք, մի վայրկենից աւելի քիչ ժամանակամիջոցում է կատարուած): Սրտախորշից դուրս մղուած արիւնը թորային զարկերակի մէջ է տեղաւորուած: Բայց թորային զարկերակը դորա ժամանակ սաստիկ ձրգուած է: Նա իւր մէջ արեան նոր հոսանք մտնելուց առաջ լիքն էր, այժմ ևս արիւնով է լցուած, գոնեա նորա այն մասը, որը սրտին աւելի մօտիկ է: Յետոյ ի՞նչ է պատահում: Ի՞նչ է պատահում, երբ որ դուք ռեաինը ձգուած էք և ապա բաց թողնում: Նա իւր առաջուայ ծաւալն է ընդունում: Սրտախորշը իրան աւելի մօտիկ գտնուած թորային զարկերակի մի մասը ձգեց և հասցրեց մինչև նորա բընական չափից բաւականին անցնող մեծ չափերը և յետոյ

նորան հանգիստ թողեց (կուչ գալուց երբ որ դադարեց). ձգուած թորային զարկերակը աշխատում է իւր առաջին ծաւալը ընդունել, և, հնար չ'ունենալով եկած արիւնը դէպի սրտախորշը յետ դարձնել, նորան իրանից զարկերակի հետեւալ մասի մէջ է մղում, դէպի մազային անօթների ուղղութիւնը, և դորանով էլ նորան նոյնպէս ձգում: Զարկերակի այդ մասը իւր հերթով արեանը առաջ է քշում և այդպիսով արիւնը վերջապէս մազային անօթներին է հասնում: Արեան հոսանքներով ձգուած լիքը թորային զարկերակը նորան աւելի հեռու է քշում և արիւնը մազային անօթներով թորային երակները տանում, մինչև որ իրանից արեան ամբողջ աւելորդ մասը դուրս չ'քշէ: Բայց թորային երակները նոյնպէս կ'լցուին: Այն ժամանակ ի՞նչ կ'լինի: Նոցա միայն մնում է արեան աւելորդ մասը ձախ սրտախորշի մէջ բաց թողնել: Իւրաքանչիւր վայրկենից քիչ ժամանակամիջոցում նոքա կարող են այդ անել: Որովհետեւ հէնց այն ժամանակ, երբ աջ սրտախորշը թորային զարկերակի մէջ մի որ և է բանակուած մարիւն է մղում, ձախ սրտախորշը նոյնքան արիւն է քշում և՛ աւագ զարկերակի մէջ, ինքը նորանից նոյնպէս բոլորովին ազատուելով, հէնց այդ բոլորով սկսում է կուչ գալ և նորա մէջ պարունակուած արիւնը քշել ձախ նախասիրտը: Այդ արիւնը ո՞ւր կարող է գնալ: Նա յետ դէպի թորային երակը չի կարող գնալ, որովհետեւ նոքա արդէն լիքն են և նոցա մէջ պարունակուած արեանն էլ յետեից թորային զարկերակների մէջ գտնուած արիւնն է ճնշում. բայց արիւնը ձախ նախասրտից կարող է հեշտութեամբ դէպի դատարկ ձախ սրտախորշը գնալ. նա իսկապէս և՛ այնտեղ է գնում, որովհետեւ երկփեղկեան փականը իսկոյն թեքուած է և նորա համար ազատ անցք բացանում: Բայց յետոյ նախասիրտը կուչ գալուց դադարում է, նորա պատերը նորից հեռանում են, նա դատարկ է. իսկ այն ժամանակ էլ վերայ է հասնում այն բոլորն, երբ թորային երակները կարող են նորա մէջ այն արիւնը թափել, որը լիք թորային զարկերակով նոցա մէջ է մղուած: Այսպիսով աջ սրտախորշը արեանը

լցուած թորային զարկերակն է քշում, թորքային զարկերակը նորա աւելորդ մասը դէպի թորքային երակներն է մղողում, թորքային երակները նորանից աղատուում են, արիւնը դատարկ ձախ նախասիրտը թափելով, ձախ նախասիրտն էլ արիւնը դէպի դատարկ ձախ սրտախորշն է մղում, իսկ ձախ սրտախորշն էլ արիւնը քշում է աւագ զարկերակի մէջ. (աւագ զարկերակի և նորա ճիւղերի լայնանալը մենք զարկ ենք անուանում—մաջայ)։ Լցուած զարկերակը արեան աւելորդ մասից բոլորովին այնպէս է աղատուում, ինչպէս որ աղատուում է թորքային զարկերակը, նորան մարմնի մաղային անօթների միջով դէպի մեծ սնամէջ երակները քշելով, որոնցից արիւնը դատարկ աջ նախասիրտն է գնում. աջ նախասիրտը նորից նորան դէպի դատարկ աջ սրտախորշն է մղողում, որտեղից մենք մեր պատմութիւնը սկսեցինք։ Այսպէս ուրեմն, նախասրտերի և սրտախորշերի փոփոխական կծկումները, սրտի և երակների միջի խփների շնորհիւ, արեանը խողովակների ընդարձակ համակարգութեան մէջ են քշում. այսպիսով ամբողջ մարմնի իւրաքանչիւր մաղային անօթի մէջ մենք արիւն ենք գտնում, որը՝ զարկերակների լցուելու պատճառով՝ յետևի կողմից եղած շարժումով է մղուած, իսկ նորա առաջ ճանապարհը, նախասրտերի շնորհիւ, բաց է, որոնք իւրաքանչիւր վայրկեան, մինչև անգամ աւելի յաճախ, դատարկանում են և երակներից արեան նոր հոսանք ընդունում։ Այսպիսով մեր մարմնի իւրաքանչիւր կտորը այն արիւնով է լուացուում, որը մի քանի ակնթարթ սորանից առաջ ձեր սրտում էր, իսկ մի քանի ակնթարթ էլ աւելի վաղ ձեր մարմնի մի որ և է ուրիշ մասում։ Այսպիսով ձեր մարմնի մէջ չ'կայ մէկ մասը, որ ուրիշների հետ հաղորդակցութիւն չ'ունենալով ապրէր. արիւնը՝ մէկ տեղից միւսն անցնելով, մարմնի բոլոր մասերի կեանքը ընդհանուր է դարձնում։ Ձեր գլխի ուղեղում մէկ րոպէ առաջ եղած արեան կարմիր գնդակը այժմ, գուցէ, ձեր լեարդի մէջ է գտնուում, իսկ մի ուրիշ րոպէին էլ կարող է ձեր ձեռքի մկնակի կամ ձեր ձեռքի ոսկրի մէջ երևալ։ Ամենայն տեղ նա պէտք է որ և է բան բերէ և մի որ և է բան էլ տանի։ Անդադար

գործող սիրտը մշտապէս արիւն է մղում, որը ամենայն տեղ, ուր որ գնում է, ինչպէս ես ձեզ առաջ ասացի, ծախում է և առնում. գուցէ մեծ զարկերակներով և երակներով եղած ճանապարհին պատահական առուտուր անէ, միայն ամենից աւելի աշխատանքով զբաղուած է լինում այն միջոցին, երբ մաղային անօթների նեղ անցքերով է սահում։

35). Երբ որ դուք բարձր տեղից դէպի ներքև քաղաքին էք նայում, օր. բարձր զանգակատնից, այն ժամանակ ներքևը փողոցների ցանց էք տեսնում, որոնց արանքները բազմաթիւ տներով են լցուած։ Դուք կարող էք մտադոց և սալերի այն խմբերը զննել, որոնք, հրուելով, փողոցներով անցնում են, միայն տներում արած աշխատանքը ձեր աչքերից թաքցրած է մնում։ Բայց և այնպէս դուք գիտէք, որ ինչքան էլ փողոցը գործով զբաղուած չ'լինի, այնուամենայնիւ անհանգստութիւնը և շտապողութիւնը, որոնց տեսնում էք, միայն ցոյց են տալիս, որ մալրիկ մի քանի տներից միւսերն են շտապում—այնտեղ իրանց գործերը կատարելու համար։ Միւսընդ զարեւի է ասել մարմնի իւրաքանչիւր մասի վերաբերեալ։ Եթէ դուք նորան խոշորացոյցով նայէք, այն ժամանակ կարող էք մաղային անօթների ցանցով անցնող արեան կարմիր գնդակի շարժումը հետադնեել։ Այդ ցանցի իւրաքանչիւր հանգույցը, որ շրջապատուած է կարմիր գծերով և լիքն է կենդանի մտով, իբրև այնպիսի ամենափոքրիկ տների խումբ է ներկայանում, որոնք կազմուած են կամ մըրկնակներից, կամ կաշուից և կամ գլխի ուղեղից, նայելով թէ՛ նոքա որտե՞ղ են գտնուում։ Դուք չէք կարող տեսնել, թէ այնտեղ ի՞նչ է լինում, որչափ էլ որ ձեր խոշորացոյցը զօրեղ լինէր. միայն թէ հէնց այնտեղ է կատարուում գլխաւոր աշխատանքը։ Քաղաքում հում նիւթը փողոցներով գործարաններն են տանում, նոցա պատրաստ արտադրութիւնները կրկին փողոցներով են բերում, բայց գլխաւոր աշխատանքը շինութեանց ներսն է կատարուում։ Մարմնի մաղային անօթներով անցնող արիւնը ինքը հում նիւթի հոսանք է ներկայացնում, որից պատրաստուում են մկնակների, ոսկրների, ուղեղի և անկուածների այն մասերը, որոնք արդէն

բանեցրած են և պահանջում են իրանց տեղ նորերը փոխել: բայց մկնակի ոսկրի, կամ ուղեղի նոյն իսկ գոյացումը, որը գլխաւոր աշխատանքն է կազմում, արիւնից դուրս է կատարւում, այսինքն արիւն պարունակող մաղախին անօթներէից դուրս, անկուածնների փոքրիկ բջիջների մէջ, ուր ոչ մի արեան կարմիր գնդակ չէ գնում: Մաղախին անօթները — ամուր փակուած խողովակներ են. նորա իրանց պատերից դուրս արեան կարմիր գնդակներ չեն թողնում, միայն թէ իրանց պատերը այնպէս նուրբ և քնքոյշ են, որ ջրալի արեան հեղուկին (արեան շիճուկին), որի մէջ արեան կարմիր մարմնիկները լողում են, թոյլ են տալիս նոցա միջով ներս ծածուկի մարմնի այն մասերի մէջ, որոնք մաղախին անօթների հանգոյցների մէջ տեղն են գտնւում: Գուք կարելի է գիտէք, որ շատ նիւթեր կաշուէ բարակ թաղանթների միջով են անցնում, որոնց մէջ մի ամենափոքրիկ անցք անգամ չի կարելի գտնել: Եթէ դուք սիսեռը փամփուշտի մէջ դնէք և կապէք, այն ժամանակ սիսեռը կարող է նորանից դուրս գալ միայն այն միջոցին, երբ փամփուշտը յետ կ'անուի, կամ կըպատուի: Բայց եթէ դուք փամփուշտի մէջ շաքարի կամ աղի լուծուածք ածէիք և, նորան ամուր կապելով, մաքուր ջրով լիքը պնակի մէջ դնէիք, այն ժամանակ շուտով կ'նկատէիք, որ ջուրը պնակում քաղցր կամ աղի համ է ստացել: Թէ և փամփուշտի մէջ գորա ժամանակ մի ամենափոքրիկ ծակ անգամ չի գոյացել և նորա բերանն էլ առաջուայ պէս ամուր կապած կ'լինէր: Փամփուշտի մէջ զանազան նիւթեր տեղաւորելով, դուք կ'համոզուէիք, որ ջրում չ'լուծող ամուր մասնիկները և նիւթերը փամփուշտի մէջ են մնում, այն ինչ շաքարը, աղը և ջրի մէջ լուծող շատ ուրիշ նիւթեր, փամփուշտով պնակի ջուրն են անցկենում և այդ շարունակում է մինչև որ ջուրը պնակի մէջ այնքան չ'քաղցրանայ կամ չ'աղիանայ, ինչպէս և փամփուշտի միջի ջուրը: Այդ երևոյթը, որը փամփուշտի նման թաղանթների մէջ է կատարւում և որոնք էլ իրանց միջով մի քանի նիւթեր* են

* Հեղուկներ եւ գազեր:

բացթողնում, ծծումն է կոչւում: Գուք արդէն կարելի է որ հասկանաք, թէ՛ մեր մարմնի մէջ այդ ծծումն ի՞նչ կարեւոր դեր է խաղում: Նորա միջնորդողութեամբ, գլխաւորապէս, արեան մէջ պարունակուած սննդաւոր նիւթերը այն մտի մասնիկներն են մղւում, որը, ինչպէս ես ձեզ արդէն ասացի, մաղախին անօթներով կազմուած արանքների մէջ է գտնւում: Ծծման միջնորդութեամբ, առաւելապէս, անկուածների անպէտք մասնիկները մտի նոյն իսկ մասնիկներից կըրկին արեան են փոխարկւում: Ծծման միջնորդութեամբ, գըլխաւորապէս, կերակուրը ստամոքսից արեան մէջ է ընկնում: Ծծման միջնորդութեամբ, գլխաւորապէս, փչացած և արդէն անպէտք դարձած նիւթերը արիւնից դուրս են գալիս և մարմնի միջից բոլորովին դուրս թափւում: Ծծումով արիւնը մտին կերակրում է և մաքրում: Ծծումով արիւնը ինքը կերակրում է և մաքուր պահպանւում: Արեանը, իսկ նորա միջնորդութեամբ էլ մարմնուն սնունդ են տալիս, գըլխաւորապէս, կերակուրը և օդը: Օդը միշտ մեզ շրջապատում է, մեզ հարկաւոր չէ նորան գնել կամ հայթայթել. այդ պատճառով մենք նորան միշտ կարող ենք կարեւորութեան համեմատ գործ ածել. թէ և միանգամից քիչ-քիչ ենք գործ ածում, բայց յաճախ: Մենք օդի պաշարներ չենք հաւաքում, միայն նորա պակասութիւնը կարող ենք մի քանի ակնթարթ տանել: Կերակուր հայթայթելու համար պէտք է աշխատենք. մենք նորան մեր մարմնի մէջ ժամանակ առ ժամանակ ենք պատրաստում, մի քանի ժամեր միջոց տալով (նախաճաշում ենք, ճաշում ենք և այլն), և կարող ենք առանց նորան ընդունելու ևս մի քանի ժամ և մինչև անգամ օրեր անցկացնել: Տեսնենք թէ՛ ամենից առաջ օդը ի՞նչ եղանակով է կերակրում արեանը, իսկ արեան միջնորդութեամբ էլ — մարմնուն:

ՕՊԸ ԱՐԵՆՆԸ Ի՞ՆՉՊԷՍ Է ՓՈՒՍՈՒՄ. ՅՆՉԱՌՈՒԹԻՒՆ:

36). Ես արդէն մի քանի անգամ ասել եմ, որ մեր մկնակները այրուում են, թէ և հում մնալով և բոց չ'տալով: Փոխանակ միայն մկնակների մասին խօսելու, ես միևնոյնը կարող էի մեր ամբողջ մարմնի մասին ասել. միայն մարմնի մի քանի մասերը աւելի շուտ են այրուում, իսկ միւսները — աւելի ծանր: Քիմիան բացատրում է, թէ ի՞նչ կ'պատահի, եթէ վառած մոմը մաքուր օդով ամուր խցած շէ մէջ դնենք: Թթուածնի քանակութիւնը շէ մէջ միշտ կ'պակասի, իսկ նորա փոխանակ ածխածութեամբ կ'գոյանայ. մի քանի ժամանակից յետոյ մոմը թթուածնի պակասելուց կ'հանգչի, որովհետեւ վերջինը թթուելու համար անհրաժեշտ է, որը մոմի այրուելու էութիւնն է կազմում: Միևնոյնը կ'պատահէր, եթէ դուք մտի փոխանակ մէկ անօթի մէջ մի թուշուն կամ մի մուկ դնէիք (միայն այդ ձեզ հարկաւոր չէ անել): Թթուածինը մասամբ կ'կորչէր, ածխածութեամբ կ'գոյանար, և մկնակները կ'ընդհատուէր, իսկ մի քանի ժամանակից յետոյ էլ նորա մարմինը կ'սառչէր: Ենթադրենք, որ դուք ձուկը կամ խխունջը մաքուր, թարմ ջրով լիքը մի լայնաբերան շէ մէջ տեղաւորեցիք և շիշն էլ ամուր կերպով փակեցիք: Առաջին հայեացքից երևում է, որ շէ մէջ օդ չ'կայ: Բայց նա նորա մէջ կայ: Եթէ դուք այդ թարմ ջրը սկսէք տաքացնել, այն ժամանակ շուտով կընկատէք, որ նրանից օդային փամփոշտիկներ են բարձրանում. եթէ այդ փամփոշտիկները հետազննէք, այն ժամանակ կընկատէք, որ նոքա պարունակում են թթուածին, բորակածին և փոքրիկ քանակութեամբ էլ ածխածութեամբ: Ջուրը իւր մէջ լուծուած օդ է պարունակում: Չուկը կամ խխունջը ջրով լի շէ մէջ մի քանի ժամանակ մնալով, կ'սկսեն շնչառութեամբ լինել և սոյնպէս սատկել, ինչպէս որ թուշունը կամ մուկը փակուած շէ մէջ. եթէ դուք այժմ միայն սկսէք ջրը տաքացնել, այն ժամանակ կ'սկսատէք, որ դուրս

եկող փամփոշտիկների միջի համարեալ թէ բոլոր թթուածինները անյայտացաւ, իսկ նորա փոխանակ ածխածութեամբ երեւաց: Դուք դորանից հասկանում էք, որ կարելի է, ինչպէս մենք ասում ենք, օդ չ'նշել մինչև անգամ այն ժամանակ, երբ նա լուծուած է ջրի մէջ:*

Այժմ մեր մկնակին վերադառնանք: Երբ որ դուք գորտի ոտի միջի արեան շջանառութիւնը հետազննեցիք, նորա մէջ կարողացաք զարկերակը երակից զանազանել, որովհետեւ զարկերակի մէջ արիւնը դէպի մազային անօթներն է հոսում, իսկ երակի մէջ մազային անօթներից է գալիս: Բայց թէ զարկերակը և՛ թէ երակը երկուսն էլ համարեալ միանման փայլով կարմիր գոյն ունէին: Իսկ եթէ կարողանայիք ձեր սեպհական մարմնի մէջ այն հաստ զարկերակը տեսնել, որը, օր. դէպի երկգլխեան մկանն է գնում, և էլ այն հաստ երակը, որը վերջինիցն է դուրս գալիս, այն ժամանակ դուք նոցա արեան զանազան գոյնով ապշած կ'լինէիք: Եթէ նոցա ծակէիք, այն ժամանակ զարկերակից աղբիւրի պէս պայծառ կարմիր արիւն կ'սկսէր բլխել, իսկ երակից մուգ — ծիրանի: Ամբողջ մարմնում (մէկ շատ կարևոր բացառութեամբ) արիւնը զարկերակների մէջ միշտ պայծառ կարմիր գոյնով է լինում, իսկ երակների մէջ — մուգ ծիրանի: Գորա պատճառով զարկերակների մէջ գտնուած պայծառ կարմիր արիւնը մենք անուանում ենք զարկերակային, իսկ երակների մուգ — ծիրանի արիւնը՝ երակային արիւն: Ի՞նչ զանազանութիւն կայ սոցա մէջ: Եթէ սկսէիք օդը զարկերակային արիւնից հանել, ինչպէս որ այդ ջրի հետ արեցիք, որի մէջ էր դրած ձուկը, դուք նորանից կարող էիք օդ, կամ աւելի ճիշտ ասել աւելի մեծ քանակութեամբ գաղ հայթայթել, բան թէ ջրից կ'հայթայթէիք: Մէկ շիշ արիւնը կարող է կէս շիշ գաղ տալ: Այդ գաղը, եթէ մենք զննենք օդի նման չի լինել, որի մեծ մասը կազմում է բորակածինը, իսկ փոքր մասը — թթուածինը: Այդ գաղի մէջ կ'լինի

* Թէեւ մենք ինքներս, եւ՛ շատ կենդանիներ եւս, այդպիսի լուծուած օդ չենք կարող շնչել:

շատ քիչ բորակածին, բայց շատ թթուածին, և աւելի ևս ածխածնուտ: Եթէ դուք երակային արիւնից օդ հայթայթէք, այն ժամանակ նորանից նոյնպէս շատ գաղ կ'ստանաք, միայն թէ նա բոլորովին ուրիշ բաղադրութիւն կ'ունենայ: Նա մօտաւորապէս իւր մէջ նոյնքան բորակածին կ'պարունակէ, թէ և թթուածինը նորա մէջ համարեա՛ կ'իսով չափ քիչ կ'լինի, իսկ ածխածնուտի քանակութիւնը — շատ: Հետեւապէս զարկերակային և երակային արեան միջի զանազանութիւնը կայանում է նորանում, որ երակային արեան մէջ (լուծուածքում) աւելի քիչ թթուածին և աւելի շատ ածխածնուտ է պարունակում, քան թէ զարկերակային արեան մէջ:

37). *Զարկերակային արիւնը՝ մազային անօթներով երակները մտնելով, կորցնում է թթուածին եւ ստանում ածխածնուտ: Թթուածինը ո՛ւր անյայտացաւ: Ածխածնուտը որտեղից գոյացաւ: Թթուածինը արիւնից մարմնի այն մասերը գնաց, որոնք մազային անօթների մէջ են գտնուում, իսկ այդ մասնիկներից էլ ածխածնուտն արեան մէջ մտաւ. հետեւապէս թթուածինը գնում է կամ անարիւն մկանկային բնածերերը, կամ դէպի նեարդերը, և կամ կաշուի այն մասերը, որոնք միշտ արիւն պարունակող մազային անօթներով են շրջապատուած: Միւսնոյնը լինում է և՛ ամբողջ մարմնի մէջ: Ամենայն տեղ միսը արիւն է ընդունում. նա արեան մէջ լուծուած գազը բոլորովին այնպէս է ներշնչում — ընդունում, ինչպէս որ ձուկը ջուր, այսինքն, ջրի մէջ լուծուած օդ է շնչում: Միայն թէ ամեն տեղ այդպէս չէ լինում. մէկ նշանաւոր բացառութիւն կայ: Մեր մարմնի մէջ ձիւղերի բաժանող մի մեծ զարկերակ կայ, որի մէջ արիւնը ո՛չ թէ պայծառ-կարմրագոյն զարկերակային է, այլ մուգ-ծիրանի, երակային: Մեր մէջ մի քանի մեծ երակներ ևս կան, որոնց արիւնը մուգ-ծիրանի, երակային չէ, այլ պայծառ զարկերակային: — Դոքա թոքային զարկերակները եւ երակներն են: Թոքային երակների միջի արիւնը պարունակում է աւելի թթուածին և քիչ ածխածնուտ, քան թէ թոքային զարկերակի արիւնը: Արիւնը, թոքերի մազային անօթների*

միջով անցնելով, կորցրեց ածխածնուտ և ընդունեց թթուածին:

38). *Ի՞նչ բան են թոքերը: Նոքա, որոնց դուք ճագարի մէջ տեսաք, կամ նոքա, որոնց կարողացաք ոչխարի մէջ տեսնել, արդէն սեղմուած էին և իջած: (Մենք շուտով կ'իմանանք, թէ՛ ի՞նչ պատճառով): Բայց եթէ նոցա սկսէիք շնչափողի միջով փչել, որը երկու ձիւղի է բաժանուում, իւրաքանչիւր թոքին մէկ-մէկ հատ, այն ժամանակ կարող էիք նոցա շատ խիստ ուռցնել: Իսկապէս թոքերը փամփուշտներ են, որոնց կարելի է օդով լցնել, միայն որոնք, իրանց կամքին թողած, իսկոյն իրանցից օդը դուրս են մղում և իրանց պատերն էլ իջնում են: Այդ փամփուշտները առանձին կազմակերպութիւն ունին: Ներկայացրէք ձեզ մի խիտ ձիւղաւորուած ցածրիկ թուփ, կամ ծառի գագաթ, որը խիտ կերպով էլ տերեւակալած է, և ձեզ պատկերացրէք, որ բունը և թէ մեծ ու փոքր և մինչև անգամ ամենամանր ձիւղերը ներքուստ սնամէջ խողովակներ են ներկայացնում. յետոյ՝ դարձեալ ենթադրեցէք, որ բոլոր տերեւները ևս փոքրիկ, ներքուստ դատարկ փամփուշտիկներ են ձևացնում, որոնք ամենափոքր դատարկ երակների (տամարների) վերայ են նըստած և առանձին քնքոյշ, բայց ամուր և, վերին աստիճանի՝ առաձգական նիւթից են կազմուած: Եթէ դուք սկսէք բնի մէջ փչել, այն ժամանակ բոլոր սնամէջ տերեւները կ'լայնացնէք և կ'ուռցնէք. և երբ փչելը վերջացնէք, նոքա բոլորը (իրանց առաձգականութեան պատճառով) նորից կ'իջնեն, այսինքն կրկին կ'սեղմուեն: Թոքափողեր (Bronchus) կոչուած այդ սնամէջ ձիւղերում, իրանց սնամէջ տերեւների հետ միասին, որոնք օդային բջիջներ կամ փամփուշտիկներ են անուանուում, թոքային զարկերակների, երակների և մազային անօթների խձձուած ցանցն է փաթածնում, այնպէս որ իւրաքանչիւր օդային փամփուշտիկ ծածկուած է մազային անօթների ամենանուրբ և ամենախիտ ցանցով:*

Օդային փամփուշտիկների պատերը շատ նուրբ են, այն էլ այնպէս նուրբ, որ մազային անօթների միջի արիւնը օդային բջիջների մէջ գտնուած օդից բաժանուում է ամենանուրբ թա-

ղանթի անսովոր նուրբ փառով: Երբ մուգ-ծիրանեգոյն արիւնը անօթների խիտ ցանցով է վազում, այն ժամանակ նորա ածխածթուածը նուրբ թաղանթով օդի մէջ է գնում, իսկ թթուածինն էլ օդից արեան մէջ է անցնում: Այսպէս ուրեմն թոքային զարկերակով հոսող մուգ-ծիրանի երակային արիւնը, թոքային մազային անօթներով անցնելով, թոքային երակների պայծառ կարմիր արիւն է դառնում: Ահա այս է օդի մեր մշտական պահանջման պատճառը: Մեր մարմնի բոլոր մասերը, այն էլ ամեն տեսակները, արիւն են շնչում, մաքուր զարկերակային արիւնը երակային անմաքուր արեան փոխարկելով. միայն թոքերի մէջ արիւնը ինքը օդ է շնչում եւ անմաքուր ու երակային արիւնից մաքուր զարկերակային արիւն դառնում: Մկնակի մազային անօթներով միշտ արեան հոսանք է գնում, քանի որ կեանքը շարունակում է և սիրտն էլ բաբախելու զօրութիւն ունի. իւրաքանչիւր ակնթարթին մաքուր զարկերակային արեան թարմ պաշարը մուգ-երակային և անմաքուր դարձած արեանն է փոխարինում: Արիւնը եթէ այդպէս միշտ չ'նորոգուէր, այն ժամանակ մկնակը կ'աղտոտուէր, նորա կեանքը շուտով կ'սկսէր թուլանալ և շուտով էլ բոլորովին կ'ընդհատուէր: Եթէ թոքերի օդը, որը նոցա օդային փամփուշտներն է լցնում, ինքն իրան թողնուէր, այն ժամանակ նա շուտով իւր բոլոր թթուածինը կ'կորցնէր, որին ածխածթուածը կ'փոխարինէր և արիւնն էլ թոքերի մազային անօթների մէջ չէր կարող երակային արիւնից զարկերակային դառնալ:

39). Ինչպէս որ արիւնը մկնակի մէջ պէտք է մըշտապէս նորոգուի, այնպէս եւ օդը թոքերի մէջ պէտք է միշտ փոփոխուի: Թոքերի մէջ օդի այդ նորոգուիլը ի՞նչպէս է լինում: Սատկած ճագարի մէջ մենք թոքերը իջած և սեղմուած տեսանք, որոնք արդէն քիչ օդ էին պարունակում և համարեալ թէ թագնուած էին կրծքի արկղի յետեի մասում (նկար 1 թ.թ.): Կրծքի արկղի խոռոչը միայն սրտով և թոքերով կիսով չափ է լցուած. նորա մնացած մասը գատարկ է: Բայց թոքերի այդպիսի դրութիւնը բոլորո-

վին անբնական է: Ուրիշ ճագար վերցնենք և նախ, կրծքի արկղին բոլորովին ձեռք չ'տալով, որովայնի խոռոչը բանանք ու հեռացնենք այն բոլորը, ինչ որ նորա մէջն է պարունակուում՝ այսինքն ստամոքսը, լեարիքը, աղիքները և այլն: Գուք այն ժամանակ կրծքա-որովայնի միջնորմը (ստոծանին) կ'տեսնէք, որը, ինչպէս արդէն գիտէք, կրծքի և որովայնի խոռոչների մէջ իբրև պինդ միջնորմն է կազմում: Գուք կ'նկատէք, որ նա դէպի կրծքի արկղի ուղղութիւնը կորնթարդ է, այնպէս որ կամար է կազմում: Եթէ ճագարը յետի թաթերից վերցնէք այնպէս, որ նորա գլուխը դէպի ներքև կախ ընկնի և յետոյ ջուր լցնէք ստամոքսի մէջ, այն ժամանակ այն խորութիւնում, որը ստոծանիով է կազմուել, ամբողջ լճաջուր կ'հաւաքուի, հետեւապէս՝ ստոծանին կրծքի խոռոչը ջուր չի թողնում: ճագարի ստոծանին շատ թափանցիկ է. դուք կարող էք նորա միջով կրծքի արկղի ներքին մասը տեսնել և հեշտութեամբ էլ այնտեղ նորա միջով փայլող վարդագոյն թոքերը զանազանել: Գուք կ'նկատէք, որ թոքերը ստոծանու ամբողջ մակերևոյթն են ծածկում, որովհետև նոքա իրանք ամբողջ կրծքի արկղն են բռնում, ՚ի բաց անելով այն տեղը, որը սիրտն է բռնել:

Եթէ ունենլիքով զգուշութեամբ ստոծանու կէս տեղից բռնէք և նորան ներքև, դէպի որովայնի խոռոչի ներսը քաշէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ այդ միջոցին ստոծանու և թոքերի մէջ արանք չի գոյանում, որովհետև թոքերը ստոծանու յետեից կ'երթան և նորան նոյնպէս ամուր կ'կաշին, ինչպէս և այն ժամանակ, երբ նա կամարած էր կանգնած: Ուրիշ խօսքերով ասած, երբ ստոծանին վերև է բարձրանում, ինչպէս որ մենք նորան որովայնի խոռոչը բացելուց յետոյ տեսանք, այն ժամանակ թոքերը բոլորովին կրծքի արկղը բռնում են. երբ ստոծանին ներքև է քաշած և կրծքի խոռոչը մեծացել է, այն ժամանակ թոքերը ուռչում են, ուստի և իրանք շարունակում են ամբողջ կրծքի խոռոչը բռնել:

40). Նոքա ի՞նչպէս են ուռչում: Ի՞նչով են լցուում: Օդը, շնչափողով անցնելով, նոցա լցնում է: Եթէ դուք ականջ դնէք, այն ժամանակ կարող էք լսել, թէ՛ օդը ի՞նչ-

պէս է գնում նոցա մէջ, երբ որ ստոծանին դէպի ներքեւ քաշէք. եթէ շնչափողը փակէք, կամ ճագարի քիթը և բերանը ամուր ծածկէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ ստոծանուն աւելի դժուար կ'լինի ներքեւ քաշել, որովհետև արտաքին օդը այն միջոցին չի կարող թոքերի մէջ մտնել: Այժմ, թոքերին չ'գիպելով, ստոծանու մէջ մի անցք բացարեք, և դուք կրծքի արկղի մէջ հէնց նոր մտնող օդի աղմուկը կ'լսէք. է՛նչ թոքերը ձեր աչքի առաջ կ'սկսին սեղմուել: Նորա արդէն ստոծանուն չեն կպչել, ինչպէս առաջ, և եթէ դուք կրծքի արկղը բանաք, այն ժամանակ նոցա արկղի յետին մասում սեղմուած կ'գտնէք, ինչպէս որ առաջին ճագարի մէջ տեսաք: Այն աղմուկը, որ լսուում է, երբ ստոծանու մէջ անցք բանաք, մասամբ կրծքի խոռոչի ներսը գնացող օդի մտնելուց է լինում, մասամբ էլ օդի շարժումընրով է յառաջանում, որը կ'սկսէ այդ միւսնոյն ժամանակ թոքերից դուրս գալ: Կրծքի արկղը բանալուց առաջ փորձեցէք ստոծանուն առաջուայ պէս ձգել և նորից բաց թողնել: Դուք կ'տեսնէք, որ ստոծանու շարժումն արդէն թոքերի վերայ ոչ մի ներգործութիւն չի անել. նորա այլ ևս չեն ուռչել: Ստոծանուն ձգելով և բաց թողնելով, այժմ օդին կ'ստիպէք անցքի միջով կրծքի խոռոչը մտնել և նորանից էլ դուրս գնալ, բայց ո՛չ թէ դէպի թոքերը և թէ յետ գնալ, ինչպէս որ առաջ էր: Դորանից դուք տեսնում էք, որ կրծքի արկղիկը օդի համար անթափանցելի է, և թէ՛ թոքերն էլ միշտ ձգուած են լինում, երբ կրծքի արկղի պատերը ամբողջ են, մինչև անգամ այն ժամանակ, երբ ստոծանին դէպի վերև աւելի գոգաւոր է լինում: Թոքերն էլ միշտ հէնց այն պատճառով են ձիգ լինում, որովհետև կրծքի արկղը օդի համար անթափանցելի է, այսինքն օդը բոլորովին չի կարող թոքերի և կրծքի արկղի պատերի մէջ ընկնել: Օդը ճնշում է ճագարի բոլոր մասերին, ինչպէս շնչափողի ներքին մասին, այնպէս և թոքերի միջին մասերին: Նա ճնշում է որովայնի խոռոչի արտաքին կողմին, իսկ դորա պատճառով էլ սեղմում է և՛ ստոծանու ներքին մակերևոյթը և ներս է քաշում նորան դէպի կրծքի արկղը, որքան հնարա-

ւոր է: Միայն նա չի կարող աւելի գոգանալ, որովհետև նորա ծայրերը կրծքի արկղի ամուր պատերին կպած են: Օդը նոյնպէս դրսից ճնշում է կրծքի արկղին, բայց չի կարող նորան շատ սեղմել, նորա պատերի ամուրթեան պատճառով: Եթէ կրծքի արկղի պատերը փափուկ և թոյլ լինէին, այն ժամանակ օդը նոցա կ'ճնշէր, իսկ նոցանով էլ թոքերին կըսեղմէր. բայց որովհետև կրծքի արկղի պատերը ամուր են, այդ պատճառով օդը չի կարող նոցա ճնշել: Այսպիսով կրծքի արկղի պատերը թոքերին արտաքին օդի ճնշումից պահպանում են: Նա միայն ճնշում է թոքերի միջին մասին, չի ճնշում նոցա արտաքուստ. հէնց թոքերի ներսի մասին արած այդ ճնշումն էլ նոցա միշտ ձգուած կամ ուռած դրուութեամբ է պահպանում: Երբ որ դուք փամփուշտը փրչում էք, նա ձգուում է, որովհետև փամփուշտի ներքին կողմի վերայ եղած ձեր փչած օդի ճնշումը փամփուշտի արտաքին կողմի վերայ արած օդի ճնշումից աւելի զօրեղ է: Եթէ ներսի ճնշումը մեծացնելու փոխանակ դուք արտաքին ճնշումը պակասցնէք, (օր. փամփուշտը օդահան զանգակի տակ դնելով), այն ժամանակ արդիւնքը առաջինի հետ միասին մէկ կ'լինի—փամփուշտը կ'ուռչի: Հէնց այդպիսի գործողութիւն են կատարում կրծքի արկղի պատերը—նորա թոքերի վերայ արած արտաքին ճնշումը նոցա ներսն եղած ճնշումից քիչ են զօրեղացնում, ուստի և թոքերը բոլոր ժամանակ, բանի որ կրծքի արկղի պատերը ամբողջ են, ձգուած են լինում: Եթէ ստոծանին ծակենք, օդը թոքերի և կրծքի արկղի պատերի միջի արանքը կ'մտնէ և կ'սկսէ թոքերի արտաքին կողմին ճնշել. այն ժամանակ արտաքին ճնշումը ներսինի հետ միակերպ կ'լինի, ոչինչ էլ չի կարող թոքերը ձգուած դրութեան մէջ պահել, ուստի և նորա մինչև իրանց բնական մեծութիւնը կ'սեղմուին, ինչպէս որ կ'սեղմուի այն փամփուշտը, երբ դուք նորան այլ ևս չէք փչել, կամ օդահան զանգակի տակից կ'հանէք: Եթէ դուք ստոծանու մէջ անցք չբանալով նորան դէպի ներքև սկսէք քաշել, այն ժամանակ թոքերի արտաքին կողմի վերայ եղած օդի ճնշումը աւելի ևս կ'պակասցնէք: Դորա

պատճառով ներսի օդի ճնշումը թոքերին կ'ստիպէ առաջուանից աւելի զօրեղ կերպով ուռչել և ստոծանուն հետեւել: Որովհետև թոքերը դորա ժամանակ առաջուանից աւելի են ուռչում, այդ պատճառով երբ որ ստոծանուն բաց թողնէք, նոքա իրանց առաջուայ ծաւալը կ'ընդունեն, իրանցից օդի մի մասը դուրս կ'մղեն և իրանց հետ էլ ստոծանուն կ'բարձրացնեն: Երբ որ ստոծանու մէջ անցք է շինուած, որը կրծքի արկղը օդ է թողնում, այն ժամանակ ստոծանու քաշելը արդէն ոչինչ զանազանութիւն չի յառաջացնում թոքերի վերայ ունեցած օդի արտաքին և ներքին ճնշման մէջ, այսինքն, օդը առաջուայ պէս միւսնոյն զօրութեամբ է ճընշում նոցա արտաքին և ներքին մակերեսութներին, ուստի և թոքերն էլ բոլորովին անշարժ են մնում:

Այսպէս ուրեմն, երբ որ օդի համար անթափանցելի կրծքի արկղի մէջ ստոծանին դէպի ներքեւ է քաշուում, այն ժամանակ շրջապատող օդի ճնշումը շնչափողի միջով օդը քշում է թոքերի մէջ, և նոքա էլ ուռչում են: Երբ որ ստոծանուն դէպի ներքեւ քաշելը վերջացնեն, այն ժամանակ ուռած թոքերը իրանց առաջուայ ծաւալը կ'ընդունեն, իրանցից դուրս մղելով օդի այն աւելորդ մասը որը նոցա մէջ է մտել քաշելու ժամանակ:

Ենթադրենք այժմ, որ յայտնի թւով վայրկեաններից յետոյ ստոծանին փոփոխաբար դէպի ներքեւ է ձգւում և նորից բաց թողնում, այն ժամանակ ի՞նչ կ'պատահի:

Իւրաքանչիւր անգամ, երբ ստոծանին դէպի ներքեւ ձգուի, յայտնի քանակութեամբ էլ օդ պէտք է մտնի թոքերի մէջ, իսկ իւրաքանչիւր անգամ, երբ նորան բաց թողնեն, մտած օդը նոցանից նորից դուրս կ'գայ: Հէնց այդ միւսնոյնը յայտնի թւով վայրկեաններից յետոյ և՛ շնչառութեան ժամանակն է յառաջանում, մի բոպէի մէջ մտաւորապէս 17 անգամ: Ստոծանին իջնում է և շնչափողով մի որևէ քանակութեամբ օդ է մտնում թոքերի մէջ: Այդ կոչւում է ներշնչում: Իսկոյն դորանից յետոյ ստոծանին այլ ևս չի իջնում, ձգուած թոքերը իրանց առաջին ծաւալն են ընդունում, իրանց հետ ստոծանուն քաշում են և իրանցից էլ

դուրս են մղում բնական քանակութիւնից աւելի մտած օդը: Այդ կոչւում է արտաշնչում: Երբ ստոծանին իջնում է, այն ժամանակ որովայնի խոռոչին ճնշում է, երբ իջնելուց դադարում է, այն ժամանակ որովայնի խոռոչի մէջ գըտնուած ընդերքը ստոծանուն օգնում են դէպի վեր բարձրանալ: Եթէ դուք ձեռքը ձեր փորի վերայ դնէք, այն ժամանակ կ'զգաք, թէ՛ փորը իւրաքանչիւր անգամ ինչպէս է կորընթարդ ձև ստանում, երբ ստոծանին ներշնչման ժամանակ ցածրանում է, և նորից իւրաքանչիւր արտաշնչութեան ժամանակ իջնում, երբ ստոծանին իւր տեղն է վերադառնում:

41). Բայց ստոծանուն ի՞նչն է ստիպում իջնել: Եթէ դուք ճագարի (կամ մի որևէ ուրիշ կենդանու) ստոծանուն աւելի ուշադրութեամբ մտիկ տաք, այն ժամանակ կ'տեսնէք, որ նա ինքն իսկապէս շատ հետաքրքրելի կերպով կազմուած տափակ նուրբ մկնակ է պատկերացնում— մտալի կարմիր մկնակային նրբաթելերը (Փիբը) նորա ծայրի շուրջը հոփհարի պէս են դասաւորւում (նկար 12 մ. ն. ձ), իսկ նորա մէջ տեղը կազմուած է սպիտակ և թափանցիկ շէնց (ս. ջ): Այդ մկնակային նրբաթելերը բոլոր միւս մկնակային նրբաթելերի նման կուչ գալու յատկութիւն ունին: Ի՞նչ կ'պատահի, եթէ նոքա կուչ գան, հետեւապէս և կարճանան: Երբ որ ստոծանու մկնակային նրբաթելերը հանգստութեան մէջ են գտնուում, ինչպէս սատկած ճագարի մէջ, այն ժամանակ ամբողջ ստոծանին դէպի վերև գոգանում է, ինչպէս որ մտաւորապէս ցոյց է տուած 13 B նկարի վերայ: Նա դէպի վերև է բարձրանում մասամբ որովայնի խոռոչի փորոտիքների ներքեւից արած ընդհարումով (որովհետև խոռոչը, դուք պէտք է այդ յիշէք, բոլորովին լցուած է լեարդով, ստամոքսով և ուրիշ գործարաններով), մասամբ էլ այն պատճառով որ նորան վերև են քաշում թոքերը, որոնք, ինչպէս մենք գիտենք, միշտ ձիգ են, ուստի և՛ ձգտում են սեղմուել: Երբ ստոծանու մկնակային նրբաթելերը կուչ են գալիս, նոքա սկսում են միջի ջիւր ձգել (բոլորովին այնպէս, ինչպէս որ երկգլխեան մկանը դէպի վերև է քաշում իւր ներքեւի ջիւր) և ստոծանուն ձգելով, նորան տափակաց-

նում են. մի քանի ուրիշ նրբաթերեր ևս, ինչպէս օր. 2
տառով նշանակածները (12 նկարի վերայ), նորան նոյնպէս
դէպի ներքե ևն քաշում: Ստոծանին կուչ գալու ժամանակ
աւելի տափականում է և այնպէս իջնում, ինչպէս որ ցոյց
է տուած 13—A նկարի վերայ: Ներշնչման ժամանակ ստո-
ծանու իջնելը նորա մկնակային նրբաթերերի կուչ գալովն է
լինում: Արտաշնչելու ժամանակ ստոծանին հանգստութեան
մէջ է մնում, նորա նրբաթերերը կուչ գալուց դադարում են
և նա դէպի վերև է բարձրանում մասամբ այն պատճառով,
որ թոքերը քաշում են և մասամբ էլ այն, որ նորան որո-
վայնի խոռոչի ընդերքն են ճնշում:

42). Բացի ստոծանուց, մարմնի մի քանի ուրիշ մասեր
ևս թոքերին օգնում են օդ ընդունել և արտաշնչել: Ստո-
ծանու կուչ գալու պատճառով կրծքի արկղը փոփոխաբար
երբեմն երկարում է, երբեմն էլ կարճանում: Եթէ սկսէք մէկի
շունչ քաշելը զննել, մանաւանդ կին արմատի շունչ քաշելը,
այն ժամանակ կ'նկատէք, որ իւրաքանչիւր հառաչանքին
կրծքի արկղը բարձրանում է և իջնում, իսկ նորա առաջին
մասը, որ կրծոսկր է կոչւում, ինչպէս դուք գիտէք, եր-
բեմն առաջ է ընկնում, երբեմն էլ կրկին յետ է գնում.
Նա հէնց առաջ է ընկնում ներս շնչելիս, այսինքն երբ ստո-
ծանին իջնում է և յետ է գնում արտաշնչելիս: Դէպի ա-
ռաջ կրծոսկրի այդ շարժուիլը կրծքի խոռոչի լայնանալն է
նշանակում, իսկ կրծոսկրի ծայրի իջնելը՝ կրծքի խոռոչի հա-
մապատասխան նեղնալն է ցոյց տալիս: Այսպիսով, այն ժա-
մանակ, երբ կրծքի արկղը ստոծանու իջնելու պատճառով
երկարում է, նա նոյն միջոցին կրծոսկրի դէպի առաջ շար-
ժուելուց լայնութեամբ էլ է տարածւում: Այսպէս ուրեմն՝
ներշնչելու ժամանակ թոքերը ուռչում են ոչ թէ միայն դէ-
պի ներքե (ստոծանու շարժողութեամբ), այլ և՛ դէպի ա-
ռաջ (կրծքի արկղի պատերի շարժողութեամբ):

Կրծքի ոսկրին ինչն է հրում դէպի առաջ: Եթէ դուք
մօտիկուց նայէիք նիհար մարդու կրծքի արկղի կողերին, այն
ժամանակ կարողէիք նկատել, որ իւրաքանչիւր ներշնչման
ժամանակ կողերը փոքր ինչ բարձրանում են: Իւրաքանչիւր

կող յետևից յօդով մէջքի ողնաշարի հետ է միացած, իսկ
առջևից կռճիկով անշարժ կպած է կրծոսկրին, (տե՛ս նկար
կմտեքի):

Եթէ դուք կողերի մէկի մէջ տեղ մի կտոր ժապաւէն
կպցնէք, այն ժամանակ իւրաքանչիւր անգամ, երբ որ ժա-
պաւէնը ձգէք (դէպի վերև), կողը իւր յենման կէտում, ող-
նաշարում, կ'շարժուի, այնպէս որ կողի առաջին ծայրը, շար-
ժուելով, կրծքի ոսկրին փոքր ինչ առաջ կ'հրէ: Երբ որ դուք
ժապաւէնը այլ ևս չ'ձգէք, այն ժամանակ կրծոսկրը, որ
մղելու ժամանակ դէպի առաջ շարժուեցաւ, յետ կ'ընկնի,
իսկ կողը կրկին իւր առաջուայ դրութիւնը կ'ընդունէ: Կո-
ղերի մէջ առանձին մկնակներ են գտնւում, որոնք մէջկո-
ղեան մկնակներ են անուանւում (նկար 14): Դուք նոցա
գործողութիւնը լիովին յետոյ կ'հասկանաք, առայժմ միայն
ձեզ բաւական է տեսլ, որ նորա այն ժապաւէնի նման են
գործում, որի մասին հէնց նոր խօսեցինք, այսինքն՝ կողերին
ստիպում են բարձրանալ նորա՝ կուչ գալով՝ կողերին բարձ-
րացնում են և կրծոսկրին էլ դէպի առաջ հրում: Երբ նո-
քա կուչ գալուց դադարում են, կողերը և կրծոսկրը դէպի
իրանց առաջին տեղերն են ցածրանում: Շնչառութեանը շատ
ուրիշ մկնակներ ևս օգնում են, մանաւանդ ծանր և խոր
հառաչանքներին, միայն ձեզ բաւական է յիշել որ սովորա-
կան շնչառութեան ժամանակ գլխաւոր նշանակութիւնը եր-
կու միաժամանակեայ յառաջ եկող շարժումներն ունին, ո-
րոնց օգնութեամբ օդը թոքերի մէջ է քաշւում:

Նախ՝ կուչ է գալիս ստոծանին և, ձգուելով, կրծքի արկ-
ղը աւելի է խորացնում և երկարացնում. երկրորդ՝ այդ միև-
նոյն ժամանակ կողերը բարձրանում են և, մէջ-կողեան մըկ-
նակների կուչ գալու պատճառով, կրծոսկրը դէպի առաջ է
շարժւում, կրծքի արկղը լայնացնելով, որը նոյնպէս թոքե-
րին օգնում է լայնանալ և երկարել: Թոքերի լայնանալուց
գոյացած թոքերի ներսի դատարկ տեղը շնչափողով օդ է
մտնում: Դորա մէջն է կայանում ներշնչումս: Բայց շու-
տով ստոծանին և մէջկողեան մկնակները կուչ գալուց դա-
դարում են, ստոծանին իւր առաջուայ դրութիւնն է ընդու-

նում, կողերն իջնում են, կրծոսկրը նոյնպէս—այն ժամանակ
օդի մի մասը թոքերից շնչափողով դուրս է գալիս: Դորւա
մէջն է կայանում արտաշնչումն: Մէկ ներշնչելը և մէկ
արտաշնչելը մէկ հառաչանք են կազմում. մեր կեանքում իւ-
րաքանչիւր րոպէ մօտ տասն և եօթն այդպիսի հառաչանք-
ներ ենք անում:

43). Ստոծանուն և մէջկողեան մկնակներին ի՞նչն է ստի-
պում կուչ գալ, իսկ յետոյ էլ այդպիսի զարմանալի հա-
ւասար ժամանակամիջոցներից յետ հանգստանալ: Ձեր ձեռ-
քի երկգլխեան մկանին, ինչպէս դուք դիտէք, կուչ գալ է
ստիպում ձեր կամքը, բայց մենք մեր կամքով չենք շնչում:
Մենք յաճախ, այդ չիմանալով, շունչ ենք քաշում, շունչ ենք
քաշում և՛ քնի ժամանակ—մեր կամքը չի ներգործում. մենք
այդ ցանկանում ենք, կամ չենք ցանկանում, բայց շունչ ենք
քաշում: Մենք կարող ենք մեր շնչառութիւնը արագացնել
կամ դանդաղացնել. կարող ենք մեր ցանկութեամբ կարճ
կամ խոր հառաչանքներ անել, այսինքն մեր կամքի ուժով
մեր շնչառութիւնը կարող ենք փոխել, բայց նոյն իսկ շնչ-
առութիւնը թէ՛ առանց մեր կամքի և թէ՛ նորան հակա-
ռակ է լինում: Նա—ակամայ շարժողութիւն է: Թէև
շնչառութիւնը մեր կամքի գործունէութեան ազդեցութեան
տակ չէ կատարում, այնուամենայնիւ նա գլխի ուղեղի, այ-
սինքն նորա այն առանձին մասի գործողութիւնից է ծագում,
ուր գլխի ուղեղը ողն-ուղեղի հետ է միանում: Ստոծանուց,
մէջկողեայ և ուրիշ մկնակներից ողն-ուղեղով նեարդեր են
անցկենում դէպի գլխի ուղեղի այն մասը, որտեղ նա ողն-
ուղեղի հետ է միանում: Մէկ րոպէում կուչ գալու հրամա-
նը տասն և եօթն անգամ այդ նեարդերով գլխի ուղեղից
դէպի մկնակներն է անցկենում. վերջինները հնազանդում
են և մենք էլ շունչ ենք քաշում: Թէ հրամանը ի՞նչու և
ի՞նչպէս է գալիս—դուք բաւականին ուշ կ'իմանաք:

Երբ մի որ և է անբաղդ դիպուածքի կամ հիւանդու-
թեան պատճառով ուղեղի այն մասն է վնասուած, որտեղ
գլխի ուղեղը ողն-ուղեղի հետ է միանում, այն ժամանակ

գլխի ուղեղը հրամաններ ուղարկելը վերջացնում է և մարդն
էլ շունչ քաշելուց դադարում է:

44). Այսպէս ուրեմն՝ իւրաքանչիւր հառաչանքի ժամա-
նակ թոքերի մէջ մի որ և է քանակութեամբ օդ է մտնում,
միայն շատ քիչ: Դուք չ'պէտք է կարծէք, որ թոքերը իւ-
րաքանչիւր հառաչանքին իրանց մէջ գտնուած բոլոր օդից
ազատում են և նորից թարմ օդով լցւում: Ընդ հակառակն,
իւրաքանչիւր հառաչանքին դուք ձեր մէջ նոր օդի միայն մէկ
բաժինն էք ընդունում, որը շնչափողի լայն ճիւղերի մէջ է
մտնում և թոքերի օդային փամփուշտներին էլ բոլորովին չի
հասնում: Այն օդը, որ անշարժ է մնում, կանգնած օդ
են անուանում (տես նկար 13): Այդ դէպքում ածխածրթ-
ւուտը թոքերի յատակից ի՞նչպէս է դուրս գալիս: Օդային
փամփուշտներին շրջապատող մազային անօթները ի՞նչպէս են
հայթայթում թարմ թթուածին:

Կանգնած օդը իւրաքանչիւր հառաչանքին եկող թարմ
օդի հետ է խառնուում: Եթէ դուք պէտք է սենեակը հող-
մով մաքրէք, այն ժամանակ ձեզ կարիք չ'կայ սենեակից հին
օդի բոլոր մասնիկները դուրս հանել և նորա տեղ նոր օդ
ներս թողնել. բաւական կ'լինի միայն պատուհանը կամ դու-
ռը բանալ և այնքան օդ թողնել, որքան կ'տեղաւորի, օր.
սենեակի մէկ անկիւնում: Թարմ օդի հոսանքը, սենեակով
անցնելով, կ'սկսի բոլոր մնացած օդի հետ խառնուել, մինչև
որ բոլոր օդը սենեակի մէջ կ'մաքրուի. օդի այդ խառնուելն
էլ շատ արագ է կատարում: Նոյնը լինում է և՛ թոքերի
մէջ: Մաքուր օդը իւրաքանչիւր ներշնչման ժամանակ նոցա
մէջ է մտնում, ինչպէս որ օդը սենեակն է գալիս, բայց ար-
տաշնչման ժամանակ դուրս գալուց առաջ նա իւր թթուած-
նի մի մասը կանգնած օդին է տալիս և նորան ածխածրթ-
ւուտի մի որ և է մասից ազատում: Այսպիսով իւրաքան-
չիւր հառաչանքին կանգնած օդը լաւանում է, որովհետև
ածխածրթուտի մի մասը կորցնում է և թարմ թթուածնի էլ
որ և է մասը ստանում: Եկած օդը շուտով կանգնածին մաք-
րում է, իսկ կանգնած օդն էլ մաքրում է արեանը: Այս-
պէս ուրեմն՝ ստոծանու իւրաքանչիւր ընդհարման և կրծոսկրի

բարձրանալու ժամանակ կրծքի մէջ մտնող մաքուր օդը, որ իւրաքանչիւր հարիւր մասից եօթանասուն ինն մասը բորակածին և քսանուամէկ մասը թթուածին ունի, նորանից անմաքուր է դուրս գալիս, երբ ստոծանին վերև է բարձրանում, իսկ կրծոսկրը իջնում, իւրաքանչիւր հարիւր մասից միայն տասնուվեց մասը թթուածին և հինգ մասն ածխածրթուտ, իսկ առաջուայ պէս եօթանասուն ինն մասն էլ բորակածին ունենալով: Այդ կորցրած թթուածինը կանգընած օդի միջով մազային անոթների արեան մէջ անցաւ, իսկ ստացած ածխածրթուտն էլ նոյն իսկ կանգնած օդի միջով նոյնպէս մազային անոթների արիւնից նորա մէջ մտաւ: Այսպիսով թոքերի մէջ ընդունուած և յետոյ դուրս մղուած օդի իւրաքանչիւր քանակութիւնը անմաքուր, վնասակար երակային արեանը թարմ, զարկերակային մաքուր արիւն է դարձնում. արիւնը թոքերի մէջ օդ է շնչում այն պատճառով, որ բոլոր մարմինը ևս իւր հերթով արիւն շնչել կարողանայ:

VII

ԿԵՐԱՌԻՐՆ ԵՐԵՆԵՐ ԻՆՉՊԻՍ Է ՓՈՍՈՒՄ:

ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ:

45). Երեանը ոչ թէ միայն օդն է մաքրում, այլ և կերակուրը նորան նորոգում է և առողջացնում: Մեր ընդունած կերակուրը արիւն է դառնում: Մեր կերակուրը, թէ և սովորաբար խոնաւ է, բայց մեծ մասամբ պինդ է լինում: Մենք ափսէի վերայ նորան մանր կտորներ ենք անում, յետոյ էլ ատամներով մանրացնում ենք և փշրում, այնուամենայնիւ նորա մեծ մասը, թէ և լաւ ծամած է լինում, բայց և այնպէս պինդ ձեւով է կուլ գնում: Որպէս զի կերակուրը արիւն դառնայ, ամենից առաջ պէտք է լուծուի: Նա լուծուում է մարսողութեան խողովակի մէջ և նորա այդ աստիճանաբար լուծուելն էլ մենք մարսողութիւն ենք անուա-

նում: Տեոնենք թէ՛ մարսողութիւնը ի՞նչպէս է լինում: Չեր կաշին թէ և քրտնքից երբեմն բոլորովին թաց է լինում, բայց առ հասարակ նա բոլորովին ցամաք է: Չեր բերանի ներսի կողմը միշտ խոնաւ է, շատ յաճախ նա հեղուկով լիքն է. մինչև անգամ երբ մենք ասում ենք, թէ՛ բերանի ներսը չոր է, այն ժամանակն էլ մեր բերանը շատ խոնաւ է լինում: Ինչո՞ւ է այդպէս: Մեր բերանի ներսի կողմը միշտ անհամեմատ մեր կաշուից աւելի կարմիր է. կարմրութիւնը և խոնաւութիւնը ընկերակցաբար մէկը միւսին ուղեկցում են: Մազային անոթների մասին խօսելով, ես ասացի, որ մարմնի համարեաւ բոլոր մասերը մազային անոթներով են լցուած, միայն թէ բոլորը առանց բացառութեան չեն: Վաշուի մէկ մասի մէջ, օր. բոլորովին արիւնատար անոթներ չկան: Գուք գիտէք, որ այնտեղ, ուր ձեր կաշին հաստ է, կարող էք նորա կտորները քերել կամ դուրս կորզել արիւնհոսութիւն չպատճառելով: Եթէ ձեր գրչահատը շատ սուր է, և դուք էլ շատ հմուտ էք, այն ժամանակ նոյնպէս կարող էք, ձեզ չփրաւորելով, ձեր մարմնի մի որ և է տեղ կաշուի շերտ կտրել: Եթէ դուք այդպիսով կրտրուած կաշուի կտորը խոշորացոյցի տակ զնէիք, այն ժամանակ կտեսնէիք, որ նա փոքրիկ թեփուկներից է կազմուած: Իսկ եթէ դուք կաշուի շատ բարակ կտոր հանէիք, որի պատճառով և՛ նորան բոլոր հաստութեամբ կտրէիք, այն էլ առաջուայ պէս ոչ թէ միայն կաշուի վերին շերտը, այլ և՛ տակի շերտը ևս, ու սկսէիք նորան շատ զօրեղ խոշորացոյցի տակ զննել, այն ժամանակ կրնայտէիք, որ կաշին երկու բոլորովին զանազան մասերից կամ շերտերից է կազմուած, ինչպէս ցոյց է տուած 15 նկարի վերայ: Նորա վերին շերտը Ը. Ե. ոչ այլ ինչ է, եթէ ոչ փոքրիկ, միասին պինդ գումարուած, մարմնիկների զանգուած: Նորա վերին մասում իբրև նուրբ թեփուկներ են սեղմուած, իսկ ներքեւում կլոր են կամ երկարաձև և միևնոյն ժամանակ էլ փափուկ: Նորա կոչուում են ըջիջներ: Բնախօսութեան ուսուցանասիրութեան ժամանակ ձեր յառաջադիմութեան համեմատ՝ դուք միշտ բջիջների մասին յաճախ կ'ըսէք: Այդ

ինչպէս փափուկ և կլոր, այնպէս և տափակ ու թեփուկ գարձած չոր բջիջների շերտը կոչուում է վերնամաշկ (epiderma): Ամբողջ վերնամաշկում ոչ մի արիւնատար անոթ չէ գտնուում, ուստի և նորանից, եթէ կորէք, երբէք արիւն չի դուրս գալ: Նա մեր ամբողջ կեանքում շարունակ աճում է: Վերին թեփուկները միշտ քերուում են: Երբ որ դուք ձեր ձեռքերը լուսնում էք, մանաւանդ սպանով, այն ժամանակ մի քանի վերին թեփուկներ ևս էք պոկում և շուտով էլ ամբողջ կաշին կարող էք քերել, եթէ շերտի ներքեւը մըշտապէս նոր կլոր բջիջներ չ'գոյանան (Ա. գծերի երկայնութեամբ, նկար 15), որոնք աստիճանաբար վերև են բարձրանում, որտեղ և՛ թեփուկներ են դառնում: Այսպիսով՝ կաշին, կամ աւելի ճիշտ է ասել, կաշուի վերնամաշկը՝ միշտ նորոգուում է: Երբեմն, ինչպէս, օրինակ, քուլթէշից յետոյ, նոր կաշին արագութեամբ է աճում, իսկ հինը մեծ կտորներով թափուում:

Վերնամաշկի տակ կաշուի ներքին շերտը ըունկաշի (dermis) է կոչուում: Նա լիքն է մազային և ուրիշ արիւնատար անոթներով, և երբ դանակը կամ անոթի նորան է հասնում, այն ժամանակ նորանից արիւն է դուրս գալիս: Նա ոչ թէ բջիջներից է կազմուած, ինչպէս վերնամաշկը, այլ և այն ներթափանցանիւնից (մնաթելիտ), որը դուք «միացնող» անկուած անուկով գիտէք (տես § 2, յօդ. II): Նորա մակերևոյթը քիչ է հարթ լինում, սովորաբար նա պտուկներ անուանուած փոքրիկ գնդակներով է ծածկուած, ինչպէս 15 նկարի վերայ է ներկայացրած. վերնամաշկը իւրաքանչիւր պտկի վերայ հաստ ծածկոց է գոյացուում և իրմով պտուկների միջի արանքները լցնում: Պտուկների մեծ մասը արիւնատար անոթներով լիքն է: Այժմ ես կարծում եմ, որ դուք կ'հասկանաք, թէ՛ ի՞նչու ձեր կաշին ոչ թէ կարմիր, այլ առանձին (մարմնային) գոյն ունի, և թէ՛ ի՞նչու նա սովորաբար չոր է լինում: Բուն կաշին վերնամաշկի տակ միշտ խոնաւ է, որովհետև լիքն է արիւնատար անոթներով արեան ուժից ընկած և հեղուկ դարձած մասը, ինչպէս դուք արդէն գիտէք, ծծման միջնորդութեամբ մազա-

յին անոթների պատերով հեշտ է անցկենում և բոլոր շորչապատածը միշտ խոնաւացնում: Բայց այդ խոնաւութիւնը այնքան շատ չէ, որ վերնամաշկի հաստ շերտով թափանցէ, ուստի և նորա վերին մասը չոր և թեփաւոր է լինում: Բուն կաշին վերնամաշկի տակ միշտ կարմիր է. դուք այդ բանում կ'համոզուէք, եթէ մի որ և է տեղ ձեր կաշին կրտրէք. որքան աւելի խոր կորէք նրան, այնքան նա աւելի կարմիր կ'լինի, թէ և դեռ ևս արիւնը դուրս չի գալ: Նա կարմիր է այն մազային անոթների ահագին քանակութեան պատճառով, որոնք նորան լցնում են և իրանք էլ արիւնով լիքն են: Երբ որ դուք վերնամաշկի հաստ շերտով այդ մազային անոթներին էք մտիկ անում, կաշուի կարմրութիւնը ձեզանից վերնամաշկով ծածկուած է լինում այնպէս, իբրև թէ դուք սպիտակ թղթի հաստ թերթով ծածկուած կարմիր մահուդին նայէիք. կաշին միայն վարդագոյն կամ առանձին, այսպէս կոչուած, մարմնային գոյն ունի, իսկ որտեղ վերնամաշկը շատ հաստ է, ինչպէս օր. կրունկների վերայ, կաշին մինչև անգամ ոչ թէ վարդագոյն, այլ սպիտակ կամ դեղին է երևում, շատ կամ քիչ կեղտոտ փայլ ունենալով:

46). Բայց եթէ խոնաւ իսկական կաշին ծածկուած է վերնամաշկի հաստ շերտով, որը խոնաւութեանը թոյլ չի տալիս դուրս գալ, այն ժամանակ մեր կաշին ի՞նչպէս է, որ երբեմն բոլորովին թաց է լինում, երբ որ մենք բրտնում ենք: Եթէ դուք մտիկ տաք 15 նկարին, այն ժամանակ կըտեսնէք, որ վերնամաշկը մէկ տեղ կարուած է այն խողովակով (ծոր.), որը նորա ամբողջ հաստութեամբ է անցկենում: Դուք կ'նկատէք, որ այդ խողովակը հեռանում է և դնում—մանում իսկական կաշուի մէջ, որտեղ փոքրիկ պատերով խողովակ է դառնում, որոնք վերնամաշկի բջիջների նման մի շարք բջիջներից են կազմուած (ը):— 15 նկարի վերայ ցոյց չէ տուած, թէ՛ խողովակը յետոյ ի՞նչ տեսք է ընդունում. իսկապէս նա, կաշուի տակ փոքր ինչ առաջ գնալով, արիւնատար անոթների մէջտեղ խուլ ծայրով կծիկ է դառնում, ինչպէս պատկերացրած է 16 նկարի վերայ, որտեղ ծորը-ը ներկայացնում է նոյն իսկ խողովակի շարունա-

կութիւնը փորրիկ դիրքով, որը մենք տեսնում ենք 15 նկարի վերայ: Այդ կծիկը մաղային անօթների հաստ ցանցով է ծածկուած. ա. ց.—նկարը նորան խողովակի կծկից հանած և խճճուած է պատկերացնում (աւելի պարզութեան համար): Մաղային անօթները, ինչպէս դուք յիշում էք, թէ և կծկի ներսն են գտնուում, միայն միշտ խողովակից դուրս են լինում: Եթէ դուք շատ մանրացրած մարմարիոնի փոշի թափէիք ծորի մէջ (նկար 15), այն ժամանակ նա, վերնամաշկի միջի պտուտակաձև խողովակով անցնելով, կ'ընկնէր ծոր ուղեղ խողովակը (նկար 16), իսկ յետոյ, կծիկ դարձած խողովակով անցնելով, նորա խուլ ծայրի մէջ կ'ընկնէր. իւր բոլոր ճանապարհի վերայ նա կ'կպչէր միայն վերնամաշկի բջիջների նման բջիջներին, որոնց միայն մէկ շարքը այն խողովակի պատերն է կազմում, որը վերնամաշկից ներքև է անցկենում: Եթէ նա ծորի (նկար 15), կամ կծկի մէջ (նկար 16) մնար, այն ժամանակ երկու դիպուածքում վերնամաշկի բջիջներին կ'կպչէր, բայց թէ դուրս և թէ ուրիշ դիպուածքի մէջ մեծ զանազանութիւն կայ: Ծորի մէջ մարմարիոնը մաղային անօթներից շատ հեռու կերթար. կ-ի մէջ նա այն խողովակով կ'անցնէր, որը սահմանափակուած է միայն մէկ շարք նուրբ խողովակներով, և ուղղակի կ'կցուէր մաղային անօթներին: Ծորի մէջ նա կարող էր մի քանի ժամանակ չոր մնալ կ-ի մէջ նա նոյն ժամին կ'սոնաւանար, որովհետև այնտեղ այնպիսի բան չ'կայ, որ արեան հեղուկ մասին արգելէր մաղային անօթների նուրբ պատերի միջով, իսկ յետոյ էլ խողովակի նուրբ պատերով նոյն իսկ խողովակի մէջ ծծուել և մարմարիոնը թաց անել. (կծկի ներսը, արդարև, միշտ խոնաւ է): Երբ մաղային անօթները կծկի շուրջը արիւնով լցւում են, որը յաճախ է պատահում, այն ժամանակ խողովակի մէջ նոցանից շատ անգոյն ջրալի հեղուկ է մտնում: Խողովակը հեղուկով լցւում է, որը և խողովակով էլ վերնամաշկի մէջ գտնուած նորա պտուտակաձև մասն է բարձրանում և, վերջապէս, խողովակի բերանով կաշուի մակերևոյթը դուրս գալիս: Մենք այդ հեղուկին քրտինք ենք անուանում: Ծայրին կծիկ ունեցող խողովակը անուանում

են զեղծ (լորձակալ—խոյլ), իսկ արիւնատար մաղային անօթներից խողովակի մէջ հեղուկի անցնելը—արտաթորումն (ներկայ դեպքում քրտնքի արտաթորումն): Մենք ասում ենք, որ քրտնագեղձը քրտինք է արտաթորում այն արիւնից, որը գեղձը շրջապատող մաղային անօթներով է բերուած: 47). Այժմ մենք կարող ենք հասկանալ թէ՛ բերանի ներսը ինչու համար կարմիր է և խոնաւ: Բերանի միջի կաշին բոլորովին նման է ձեռքի վերայի կաշուին: Աերևը գլտնուում է բջիջներից կազմուած և մաղային անօթներ չունեցող վերնամաշկը, իսկ վերնամաշկի տակն էլ բուն կաշին է, որը մաղային անօթներով է լցուած: Միայն վերնամաշկը բերանի մէջ անհամեմատ աւելի նուրբ է, քան թէ ձեռքի վերայ: Կարմիր մաղային անօթները նորա միջով հեշտութեամբ են երևում, իսկ նոցա խոնաւութիւնն էլ հեշտութեամբ կարող է վերնամաշկի նուրբ շերտով անցնել, որի պատճառով կաշին բերանի մէջ կարմիր է և խոնաւ: Բացի դորանից, նորա մէջ շատ դեղձեր կան, որոնք քրտնքի գեղձերին են նրման, բայց ձևով զանազան: Նոքա առանձնապէս կաշուի խոնաւութիւն պահպանելուն են նպաստում: Այդպիսի կարմիր և միշտ խոնաւ կաշին, ինչպիսին բերանի մէջ է, սովորաբար՝ մինչև անգամ ոչ թէ կաշի է անուանուում, այլ մաղասամաշկ, իսկ նորա վերին շերտն էլ վերնամաշկ չէ կոչուում, այլ վերնափառ (Epithelium): Այնուամենայնիւ հարկաւոր է յիշել, որ մաղասամաշկը իսկապէս կաշի է, որի վերնամաշկը շատ նուրբ է և փափուկ: Բերանը մարսողութեան խողովակի սկիզբն է: Մարսողութեան խողովակը ամբողջ իւր երկայնութեամբ ներսից ծածկուած է կաշուով կամ բերանի մաշկի նման մաղասամաշկով, միայն թէ խողովակի մեծ մասի վերնափառը աւելի նուրբ է, քան թէ բերանում և մինչև անգամ կազմուած է միայն մէկ շարք բջիջներից: Այդ պատճառով խողովակի ամբողջ ներսը կարմիր է և խոնաւ, և բոլորը, ինչ որ նորա մէջն է գտնուում, միայն շատ նուրբ միջնորմով է բաժանուում այն մաղային անօթների արիւնից, որոնք ահագին քանակութեամբ են գտնուում խողովակի պատերի մէջ: Մարսողութեան խողովակը, ինչպէս դուք գիտէք,

երկայն խողովակ է, միայն ստամոքսի մէջ լայն, իսկ միւս մասերում նեղ: Խողովակը իւր ամբողջ երկայնութեամբ ներսից մաղասամաշկով է ծածկուած, իսկ նորա արտաքին մասերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ մկնակներ, որոնք մարմնի և սրտի մկնակներից փոքր ինչ զանազանուած են, բայց կուչ գալու նոյնպիսի յատկութիւն ունին և իրանց կուչ-գալու ժամանակն էլ խողովակի մէջ պարունակածը բոլորովին այնպէս են դուրս մղում, ինչպէս որ սրտի մկնակները արիւնը նորա խորշերից են հանում: Մկնակները, և մանաւանդ մաղասամաշկը արիւնատար անօթներով լցուած են:

Թէև մաղասամաշկի վերնափառը շատ նուրբ է, այնուամենայնիւ մաղասամաշկը ինքը շատ հաստ է, մի քանի տեղերում այնքան հաստ, ինչպէս և մարմնի վերայի կաշին: Նորան հաստատութիւն են տալիս շատ գեղձեր, որոնցով նա միանգամայն լիքն է: Աաշուի մէջ քրտնագեղձերը սովորաբար նոյնպէս մէկը միւսից փոքրիկ տարածութեան վերայ են գտնուում. բայց ստամոքսի և աղիքների մաղասամաշկի մէջ գեղձերը մէկը միւսի մօտ այնպէս խիտ են դասաւորուած, որ մաշկը բոլորովին գեղձերից կազմուած է երեւում: Խողովակի զանազան մասերում գեղձերը զանազան ձևի են լինում: Նոցանից ոչ մէկը բոլորովին նման չէ բըրտնագեղձերին, որովհետև նոցանից ոչ մինը ծայրին կծիկ ուրրուած երկար նուրբ խողովակ չէ ներկայացնում և նոցանից ոչ մէկն էլ չպէտք է վերնամաշկի հաստ շերտով անցնի: Նոցա մեծ մասը կազմուած է միայն կարճ, բաւականին լայն խողովակից. միքանիսները ծայրին ձիւղաւորուած են: Այնուամենայնիւ նոքա բոլորը նման են քրտնագեղձերին նորանով, որ իրանք այնպիսի խողովակներ կամ պարկեր են, որոնք մէկ ծայրին փակած են, իսկ թաղանթի մակերևոյթը դուրս եկող միւս ծայրում—բաց. նոքա սահմանափակուած են մէկ շարք բջիջներից կազմուած փոքրիկ պատերով և շրջապատուած են արիւնատար մազային անօթներով: Մազային անօթներից ջրալի հեղուկը խողովակների մէջ է անցնում, իսկ խողովակներից էլ մարսողութեան խողովակը մտնում: Բայց և այնպէս այդ ջրալի հեղուկը խողովակի

զանազան մասերում միատեսակ չէ լինում: Այն հեղուկը, որ ստամոքսի պատերում գտնուած գեղձերով է արտաթորուում, թթու է և կոչուում է ստամոքսահիւթ, իսկ այն որը արտաթորուում է աղիքների գեղձերով—ալկալեան հեղուկ է և անուանուում է աղիքային հիւթ:

48). Բայց բացի բերանի, ստամոքսի և աղիքների մաղասամաշկերի մէջ գտնուած այդ գեղձերից, դարձեալ ուրիշ գեղձեր ևս կան, որոնք առաջին հայեացքից մաղասամաշկի հետ ոչինչ ընդհանուր բան չունին: Աաշուի տակ, իւրաքանչիւր ականջի ներքև, անմիջապէս ծնօտի յետև, մի փափուկ մարմին է գտնուում, որը սովորաբար չենք կարող շոշափել, բայց և՛ որպիսին խղճամ կոչուած հիւանդութեան ժամանակ բորբոքուելով, շատ սաստիկ ուռչում է: Այնտեղի գլխի մէջ դուր նոյն իսկ այդպիսի մի մարմին կ'գտնէք. զըննելով, դուք նորան մի այնպիսի մսոտ թել կպած կ'նկատէք, որը ժապաւէնի նման է և կաշուի տակով էլ դէպի բերանն է գնում: Գորան կտրելով դուք կ'տեսնէք, որ այդ կարծեցած թելը իսկապէս նեղ խողովակ է պատկերացնում, որը այն փափուկ մարմնից է գալիս, որի մասին մենք այժմ խօսեցինք, և միւս ծայրով էլ բերանի մէջ բացուում: Այդ խողովակը նոյն իսկ փափուկ մարմնի մօտ բաժանուում է նախ՝ երկու մանր, և ապա դարձեալ փոքր ձիւղերի, իսկ դուք ևս կրկին ամենափոքր ծառի ձիւղերի նման են ձիւղաւորում. այսպիսով սոքա, միշտ աւելի և աւելի փոքրագոյն ձիւղերի բաժանուելով. վերջապէս, խուլ, փոքրիկ ուռած ծայրեր ունեցող խողովակներով են վերջանում: Բոլոր թէ՛ մեծ և թէ՛ փոքր խողովակները ներսից ծածկուած են վերնափառով և փաթաթուած արիւնատար անօթներով. միացնող անկուածով միմեանց հետ խիտ միացած լինելով, նոքա մի փափուկ մարմին են գոյացնում, որի մասին խօսել ենք: Այդ մարմինը նոյնպէս գեղձ է և կոչուում է թրագեղձ: Ինչպէս դուք տեսնում էք, դա քրտնագեղձերի նման հասարակ գեղձ չէ, միայն շատ նոյնանման խողովակաձև գեղձերից է կազմուած, որոնք միմեանց հետ միացած են, և այդ պատճառով էլ կոչուում է բարդ գեղձ: Բերանից հե-

ուս զեւեղուած լինելով, նա նորա հետ երկոյն խողովակով է միանում, որը ծորան է կոչուում: Դուք չէք կարող չ'նկատել, թէ՛ այդ գեղձը իւր կազմակերպութեամբ մեր թոքերին ինչպէս նման է: Թոքերը իսկապէս ածխածնուտ արտաթորող գեղձեր են ձեռացնում. թոքերի ծորանը շնչափող է կոչուում: Ականջի տակ գտնուած թքագեղձերը կոչուում են առականջեայ գեղձեր. դոցա շատ նման երկու գեղձեր ևս կան, որոնք ծնօտի տակ են գտնուում, իւրաքանչիւր կողմից, և կոչուում են ենթածնօտեայ գեղձեր: Այդ գեղձերից իւրաքանչիւրով ջրալի հեղուկ է արտաթորուում, որը բերանի մէջ է թափուում և, խառնուելով բերանի միւս գեղձերով արտաթորուած հիւթի հետ, կոչուում է թուր: Որովայնի խոռոչում, անմիջապէս ստամոքսի տակ, տեղաւորուում է աւելի մեծ ծաւարով, բայց բոլորովին մեր զննած գեղձերի նման — ենթաստամոքսեայ կամ պանկրէասական գեղձը, որը իւր պանկրէասական հիւթ կոչուած արտաթորումը մարսողութեան խողովակն է թափում, այն էլ նորա հենց այն տեղը, ուր նուրբ աղիքներն են սկսուում. (նրկար 17, ն. ա): Լեւարդ կոչուած մեծ գործարանը, թէ և նորա կազմութիւնը բոլորովին ենթաստամոքսեայ և թքի գեղձերի նման չէ, ինչպէս դուք յետոյ կ'տեսնէք, այնումենայնիւ՝ կարող է ահագին գեղձ անուանուել, որը այն մազային անօթների արիւնից, որոնցով դոներակը ձիւղաւորուում է (§ 28 յօդ. V), այնպիսի հեղուկ է արտաթորում, որպիսին լեղի է կոչուում և լերդածորանով աղեքային խողովակի վերին մասը թափուում. (այդ պատճառով էլ դա լեղածորան է անուանուում — նկար 17 լեղ. ծոր.): Երբ որ լեղին հարկաւոր չէ, ինչպէս, օր. այն ժամանակ, երբ մենք երկար միջոց ոչինչ չենք կերել, նա կողքի ծորանով լեղապարկի մէջ է մտնում (նկար 17 լեղ. ծ.) և այնտեղ հաւաքուում, մինչև որ կ'հարկաւորուի:

49). Այդ բոլոր հիւթերը և արտաթորուածները ինչ բանի համար են — նորա մեր ընդունած կերակուրը լուծում են: Մենք ամեն տեսակ կերակուր ենք ուտում. բայց իւրաքանչիւր ուտելիքի մէջ, որը ուտելու համար օգտակա

է, մենք միեւնոյն տեսակ նիւթերի ենք պատահում, որոնք սննդարար նիւթեր են անուանուում: Մենք զանազան տեսակ միս ենք ուտում, միայն նորա բոլոր տեսակները գլխաւորապէս երկու նիւթից են կազմուած՝ այսինքն մկնակային նրբաթելերի նիւթից, որը, ինչպէս արդէն գիտենք, բորակածին պարունակող սպիտակուցային նիւթ է (պրոտէին), և ճարպից, որը ճարպ չպարունակող մկնակներն (միսն) է պարփակում. բայց սպիտակուցային նիւթերը, երբ որ նոցա եփում են, ջրի մէջ չեն լուծուում (տես § 24, յօդ. IV), իսկ ճարպը, ինչպէս դուք կարելի է գիտէք, մինչև անգամ ջրի հետ չի էլ խառնուում: Մտի այդ երկու մասերը, ինչպէս և միւս սննդարար նիւթերը՝ այն պատճառով պէտք է մշակուին, որ կարողանան մազասամաշկի վերնափառով մարսողութեան խողովակի ներսից արիւնատար մազային անօթների մէջ անցնել: Բացի մտից՝ մենք հաց ենք ուտում: Հացը գլխաւորապէս կազմուած է օսլայից. միայն բացի օսլայից նորա մէջ բորակածին պարունակող և մկնակների ու արեան սպիտակուցային նիւթին շատ նման մի նիւթ ևս կայ: Գետնախնձորը (կարտոֆիլը) շատ օսլայ է պարունակում, շատ քիչ քանակութեամբ սպիտակուցային նիւթի հետ միասին, և գրեթէ այն բոլոր բոյսերը, որոնց մենք ուտում ենք՝ շատ կամ քիչ սպիտակուցային նիւթերի հետ միասին՝ օսլայ են պարունակում: Յետոյ մենք շատ կամ քիչ քանակութեամբ շաքար ենք ուտում, թէ՛ մաքուր գրութեամբ, և թէ՛ իբրև քաղցր պտուղներ: Մենք ուտելիքների հետ նոյնպէս գործենք ածում աղ և համարեա՛ թէ կենդանական ու բուսական իւրաքանչիւր կերակրի՝ այսինքն մտի, հացի, կարտոֆիլի, պտուղների և այլոց մէջ մենք քիչ քանակութեամբ հանքային նիւթեր, այսինքն զանազան տեսակ աղեր ենք կուտալիս (ինչպիսիք են՝ կալքաւոր, կիր, մագնէզիայ, երկաթ), ծծմբային, քլորաջրածնային, լուսակրային և ուրիշ թթուութեան ներքին հետ միասին: Իւրաքանչիւր կերակրի մէջ, որը մենք ուտում ենք և ինչով էլ ապրում — շատ կամ քիչ քանակութեամբ հետեւեալ կերակրային նիւթերն են գտնուում՝ սպիտակուցային (կամ պրոտէինեան), օսլայ կամ շաքար և ճարպ —

մի քանի հանքերի (միներալների) և ջրի հետ միասին: Մենք այդ նիւթերով ենք ապրում: Իւրաքանչիւր առարկայ, որը պարունակում է կամ սպիտակուցային նիւթ, կամ ճարպ, կամ օսլայ՝ կերակրի համար պիտանի է: Իւրաքանչիւր առարկայ, որը յիշեալ նիւթերից ոչ մէկը չէ պարունակում, կերակրին պէտքական չէ, և եթէ երբեմն կերակրի համար գործ է ածուում, այն էլ միայն նորա մէջ պարունակուող հանքային նիւթերի կամ ջրի պատճառով:

Մեզ հարկաւոր չէ անպատճառ այդ բոլոր նիւթերը ուտել, միայն սպիտակուցային նիւթերը պէտք է միշտ գործ ածենք: Դոքա միակ սննդարար նիւթերն են, որոնք իրանց մէջ բորակածին են պարունակում: Միայն նոքա կարող են արեան սպիտակուցային նիւթը, հետևապէս և մարմնի սպիտակուցային նիւթերը—նորոգել:

Մենք կարող էինք ապրել միայն սպիտակուցային նիւթեր գործածելով, որովհետև նոքա իրանց մէջ ոչ թէ միայն բորակածին են պարունակում, այլ և ածխածին ու ջրածին, և նորանով էլ, հանքային բիչ նիւթեր ևս գործածելու ժամանակ, մենք կարող էինք ամբողջ արիւնը, իսկ նորա միջոցով էլ մարմնի իւրաքանչիւր մասը նորոգել: Բայց, ինչպէս դուք աւելի ուշ կ'իմանաք, այդպէս վարուելը անտեսարար և խոհական չէր լինել: Օսլան, շաքարը և ճարպերը՝ առանց բորակածնի՝ ածխածին և ջրածին են պարունակում. այդ պատճառով մենք չենք կարող միայն նոցանով ապրել, եթէ նոցա վերայ մի որևէ քանակութեամբ սպիտակուցային նիւթեր չ'աւելացնենք:

50). Այդ կերակրային նիւթից, հանքայինները չ'հաշուելով, միայն շաքարն է իսկապէս լուծուում, որի շատ տեսակները կան, (եղեգնեայ, եաղողեայ և այլն), և հեշտութեամբ էլ ծծման միջնորդութեամբ նուրբ թաղանթների միջով անցնում (տես § 35, յօդ. V): Եթէ դուք վերցնէք մի որևէ քանակութեամբ ձուի սպիտակուց, կամ արեան շիճուկ, միս կամ բնաթելիտ, կամ մի որևէ քանակութեամբ եփած, կամ հում օսլայ, վերջապէս, իւր կամ ճարպ—յետոյ փամփուշտի մէջ տեղաւորէք և նորան մաքուր ջուրը ընկղ-

մէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ այդ նիւթերից ոչ մէկը փամփուշտով ջրի մէջ չի անցնիլ, ինչպէս շաքարի և աղի հետ եղաւ: Այսպէս և՛ մեր մարտողութեան խողովակում տեղաւորած միտը, օսլան կամ ճարպը, երբէք մազային անոթներից խողովակի ներսի մասը բաժանող մաշկով չէին անցնել և սննդառութեան համար էլ բոլորովին անօգուտ կը մնային, եթէ նոքա չ'մշակուէին: Երբ կերակուրը մարտողութեան խողովակի ներսն է գտնուում, այն ժամանակ կարելի է ասել, որ նա իսկապէս մեր մարմնի դուրսն է: Միայն այն միջոցին կարելի է նորա մասին ասել, թէ՛ մարմնի ներսն է, երբ որ մեր արեան մէջ կ'մտնի:

Այն առարկաների մէջ, որոնց մենք ուտում ենք, սննդարար նիւթերը մեծ քանակութեամբ խառնուած են լինում կերակրին բոլորովին անպէտք նիւթերի հետ. սննդարար նիւթերը պարունակուած են զանազան տեսակ փոքրիկ պարկերի մէջ, որոնք նոյնպէս անպէտք են կերակրի համար, ինչպէս այն արկղիկները և թղթերը, որոնց մէջ են դրած լինում մեր գնած բաղցրեղէնները: Անհրաժեշտ է սննդարար նիւթերը այդ պարկերից և փաթեթներից ազատել: Գեղձերով արտաթորուած հիւթերը, որոնց մասին մենք խօսեցինք, այդ սննդարար նիւթերին լուծում են և այդպիսով նոցա արեան մէջ մտնելու ընդունակ դարձնում. իսկ բոլոր փաթեթները չեն լուծուում և, իբրև անպէտք նիւթ, մարտողութեան խողովակից դուրս են գցուում, արեան մէջ չ'մտնելով, ուստի և իսկապէս մարմնի կազմութեանը չ'մասնակցելով: Ընդունած կերակրի այդ մշակումը և լուծումը մարտողութիւն է անուանում: Մարտողութեան խողովակի զանազան մասերում զանազան նիւթեր են մշակուում: Թուրք բերանի մէջ օսլան շաքար դարձնելու զարմանալի յատկութիւն ունի: Եթէ դուք բերանի մէջ մի ումպ եփած օսլայ ընդունէք, որը եփած դրութեամբ թանձր, մածուցիկ, խմորային ու անհամ է լինում և նորան բերանում մի քանի ակնթարթ պահէք, այն ժամանակ նա հեղուկ և ջրալի դրութիւն կը ստանայ և բոլորովին կ'բաղցրանայ—օսլան շաքար կ'դառնայ: Դուք գիտէք, որ շաքարը թաղանթներով հեշտու-

Թեամբ է անցնում, իսկ օսլան — ոչ: Ստամոքսի մէջ ստամոքսեայ հիւթը օսլայի վերայ թոյլ է ներգործում, բայց արագութեամբ է լուծում բոլոր սպիտակուցային նիւթերը: Եթէ դուք մի կտոր եփած միս վերցնէք, նորան ստամոքսեայ հիւթի մէջ դնէք և տաքացնէք, այն ժամանակ շատ կարճ միջոցում միւր հետզհետէ կ'անյայտանայ: Բոլոր սպիտակուցային նիւթերը կ'լուծուին, միայն մկնակային նրբաթելերի մաշկերը և ճարպը անլուծելի կ'մնան: Դուք մի մի այնպիսի լուծուածք կ'ստանաք, որը (տարօրինակ կ'լինի ասել) թաղանթով հեշտութեամբ անց կ'կենայ, հետևապէս և՛ կարող է արեան փոխարկուիլ:

Պանկրէասական, և թէ՛ աղիքներով արտաթորած հեւթը, երկուսն էլ, ինչպէս և՛ թուրքը, օսլան մշակում են, իսկ սպիտակուցային նիւթերի վերայ արած նոցա ներգործութիւնն էլ շատ նման է ստամոքսեայ հիւթի ներգործութեանը:

51). Աղին և պանկրէասական հիւթը միասին բոլոր ճարպերը շատ զարմանալի կերպով են մշակում: Դուք գիտէք, որ՝ եթէ իւղը և ջուրը միմեանց հետ հարէք, այն ժամանակ թէ և զօրեղ հարելով նոցա կարելի է լաւ խառնել, բայց հէնց որ հարելը վերջացնէք, նոքա իսկոյն և եթէ կըրկին կ'բաժանուին և իւղը դէպի վերև կ'լողայ: Այն ինչ՝ եթէ դուք իւղը պանկրէասական հիւթի և լեղիի հետ սկսէք հարել, այն ժամանակ իւղը՝ հարելուց յետոյ՝ նոցանից չի բաժանուիլ: Դուք սերի մի տեսակ խառնուրդ կ'ստանաք և պէտք է շատ էլ երկար սպասէք, որ իւղը վերև լողայ: Դուք գիտէք, որ կաթը իւր մէջ ճարպ է պարունակում, որը սովորաբար կովի իւղ է կոչուում: Եթէ կաթը խոշորացոյցի տակ զննէք, այն ժամանակ կ'նկատէք, որ ճարպը նորա մէջ ամենափոքրիկ կաթիլների է բաժանուած: Այսպէս էլ եթէ զննենք ձէթը կամ կովի իւղը, կամ մի որևէ ուրիշ ճարպ, լեղիի և պանկրէասական հիւթի հետ հարելուց յետոյ, այն ժամանակ կերևայ, որ ճարպը, կամ իւղը ամենափոքրիկ կաթիլների կ'բաժանուին: Այդ բաժանուիլը ի՞նչ նշանակութիւն ունի:

Եթէ դուք մի որևէ կենդանու նուրբ աղիքների ներսի

կողմը նայէք, այն ժամանակ կ'նկատէք, որ նա հարթ և փայլուն չէ ինչպէս աղիքների դրսի կողմը, այլ խորտ ու բորտ, կամ աւելի ճիշտ, թաւշանման է: Նա այն պատճառով է այսպէս, որ աղիքների բոլոր մաղասամաշկը ծածկուած է աղիքների ներսը կախընկած շատ փոքրիկ լեզուակների նման փոքրիկ ձիւղերով: Այդ լեզուակները կոչուում են թաւեր: Նոքա փոքր ինչ նման են կաշուի պտուկներին (նկար 15), որոնք կ'երևան, եթէ կաշուի ամբողջ վերնամաշկը հանենք, իսկ պտուկներն էլ փոքր ինչ վերև քաշենք: 18-դ նկարի վերայ երկու թաւի կազմութիւնն է պատկերացրած: Աերնափառը (վ. փ), ինչպէս դուք տեսնում էք, մէկ շարք բլիջներից է կազմուած: Աերնափառի տակ, բոլորովին այնպէս, ինչպէս և կաշուի պտուկների մէջ, արիւնատար մաղային անոթներից կազմուած ցանցիկ ևս կայ. յարմարութեան համար այդ անոթները միայն մէկ թաւի մէջ են պտուկերացրած, որը և՛ աջ կողմն է գտնուում: Միայն թէ բացի մաղային արիւնատար անոթներից՝ իւրաքանչիւր թաւի մէջ մի ուրիշ մաղային անոթ ևս կայ, (յարմարութեան համար ձախ թաւի մէջ է ցոյց տուած), ինչպիսին կաշուի պտուկներում չի գտնուում: Այդ մաղային անոթը արիւն չի պարունակում, ո՛չ մէկ զարկերակի կամ երակի հետ չի միանում և միայն թաւի մէջ է սկսուում: Դա — կաթնային անոթն է: Ես դեռ այդ անոթների մասին ձեզ ոչինչ չեմ ասել: Մարմնի շատ մասի մէջ մենք, բացի արիւնատար մաղային անոթներից, դարձեալ այնպիսի նուրբ անոթներ ենք գտնում, որոնք շատ նման են մաղային անոթներին, միայն ո՛չ թէ արիւն են պարունակում, այլ՝ անգոյն հեղանիւթ: Բացի դորանից, նոքա մեծ անոթների ձիւղեր չեն կազմում, այն ինչ մաղային անոթները զարկերակների ձիւղաւորութիւններն են: Նոքա սկսում են այնտեղ, որտեղ նոցա գըտնում են, ինչպէս որ հողի մէջ բարակ թելերով բոյսերի արմատներն են սկսուում: Միայն նոքա արիւնատար անոթներին նորանով են նման, որ միմեանց հետ միանում են, և, երակների պէս, շատ մեծ անոթներն են գոյացնում: Անգոյն հեղանիւթը այս նուրբ անոթներից դէպի այդ մեծ խողովակ-

ներն է հօսուած: Այդ անգոյն հեղանիւթը կոչուած է աւիշ (լիմֆայ): Նա արիւնային կարմիր գնդակներից զրկուած արեանը շատ նման է. այն անօթները, որոնց միջով նա հօսուած է, կոչուած են՝ աւշանօթներ: Համարեա թէ մարմնի բոլոր մասերի աւշանօթները վերջը այնպիսի մէկ մեծ խողովակ են կազմում, որը կրծքի ծորան է կոչուած և աւիշը պարանոցի մեծ երակը թափում, ինչպէս որ ցոյց է տուած Յ նկարի վերայ (ա. ա. կաթ. ա. կ. ծ.):

Աւշային շատ անօթներ անթիւ աղիքային թաւերի մէջ են ծնունդ առնում. և այն ժամանակ կաթնանօթներ են կոչուած (նկար Յ, կաթ. ա), այսինքն կաթնանօթները կարող են աւշանօթներ անուանուել, որոնք իրանց սկիզբը աղիքային թաւերի մէջ են առնում:

Բայց այդ բոլորի մէջ ճարպի մարսուելու հետ միասին ի՞նչ ընդհանուր բան կայ: Աղիքների թաւերից եկող աւշանօթները կաթնային են կոչուած այն պատճառով, որ նոցա մէջ պարունակուող հեղանիւթը, թափանցիկութիւնից, ինչպէս մնացած աւշանօթների մէջ է լինում, մարսողութեան ժամանակ սպիտակ, կաթնային գոյնի է դառնում: Նա ի՞նչու է այսպէս լինում:— Այն պատճառով, որ ճարպի ամենափոքրիկ մասնիկներով լիքն է, որոնք աղիքներից նորա մէջ են անցնում: Գորա հէնց այն մասնիկներն են, ինչ մասնիկների որ լեղին և պանկրէասական հիւթը կերակրի հետ ընդունած ճարպը բաժանեցին: Մենք այդ նորանից գիտենք, որ երբ կերակրի մէջ ճարպ չէ լինում, այն ժամանակ կաթնանօթների միջի հեղանիւթը կաթնային չէ լինում. եթէ ինչ ևիցէ պատճառներով լեղին և պանկրէասական հիւթը չեն կարողանում աղիքները մտնել, այն ժամանակ ճարպը՝ ինչքան էլ որ նոյն միջոցին կերակրի մէջ մեծ քանակութեամբ է ընդունուած լինում, բոլորովին կաթնանօթները չի անցնում, այլ մեծ կտորներով աղիքների ներսն է մնում և վերջապէս, որպէս անօգուտ նիւթ, դուրս է գցուում:

52). Այսպէս ուրեմն՝ սննդարար նիւթերը հետևեալ կերպով են մշակուում: Ճարպերը լեղիով և պանկրէասական հիւթով ամենափոքր մասնիկների են բաժանուում: Մենք իս-

կապէս չգիտենք, թէ այդ ամենափոքրիկ մասնիկները ի՞նչպէս են թաւերի վերնափառով կաթնանօթները գնում. կաթնանօթներից ճարպի մասնիկները կրծքի ծորանն են գնում, իսկ նորանից էլ՝ սնամէջ երակը: Այդպիսով ճարպերը, որոնց մենք ուտում ենք, արեան մէջ են ընկնում: Օսլան բերանի մէջ շաքար է դառնում՝ նորա վերայ թքի արած ներգործութեամբ, իսկ աղիքներում — պանկրէասական հիւթով. լուծուած շաքարը թաղանթներով հեշտութեամբ է անցնում, ուտի և մարսողութեան խողովակի փոքրիկ պատերի արիւնատար մազային անօթների մէջ մտնում: Այդպիսով մեր բոլոր կերած շաքարը և մեր ընդունած օսլայի էլ բոլոր օգտաւէտ նիւթերը արեան մէջ են մտնում: Ապիտակուցային նիւթերը լուծուած են ստամոքսի մէջ ստամոքսեայ հիւթով, իսկ վերջնականապէս էլ աղիքներն անցնելով և, այդպիսով, թաղանթների միջով անցնելու ընդունակ դառնում, որի պատճառով էլ կարող են արեան մէջ մտնել: Փոքր ինչ շաքար և սպիտակուցային նիւթեր ևս, շատ հաւանական է որ, նոյնպէս կաթնանօթները գնան:

Հանքային նիւթերը լուծուած են՝ կամ բերանում, կամ ստամոքսում, կամ աղիքներում, որից յետոյ կարող են արեան մէջ անցնել, իսկ ջուրը մարսողութեան խողովակի ամեն տեղերում հեշտութեամբ է արեան մէջ մտնում: Երբ որ մենք մի կտոր հաց ենք ուտում, այն ժամանակ ծամելու միջոցին նա խոնաւանում է և բերանի մէջ թքի հետ խառնուում: Այդ պատճառով նորա օսլային մասը շաքար է դառնում, ուտի և նա ամբողջապէս փափկանում է և հեղուկանում: Ստամոքսի մէջ նորա անցնելու ժամանակ սպիտակուցային նիւթերի մի որևէ մասը ստամոքսեայ հիւթով լուծուած է և արեան մէջ մտնում, իսկ ամբողջ մնացած հացը խախցանման (փուփ) զանգուած է դառնում: Այն, որը աղիքների մէջ խախցի անցնելու ժամանակ օսլայից մնաց, պանկրէասական հիւթով շաքար է դառնում և իսկոյն կամ կաթնանօթների, կամ ուղղակի արեան մէջ է ծծուում: Այն, որը ստամոքսի մէջ սպիտակուցային նիւթերից է մնում, աղիքներում է լուծուած, այնպէս որ այդ ամենափոքրիկ բջիջ-

ներից միայն կեղևն է մնում, որոնց մէջ օսլան և սպիտակուցային նիւթերը բոյսի աճելու ժամանակ են հաւաքուում:

Երբ որ մի կտոր միս ենք ուտում, այն ժամանակ նա ստամոքսով մանրանում է և լաւ թաց է լինում թքով, միայն թէ բերանի մէջ բաղադրութեամբ քիչ է փոխուում:

Այնուամենայնիւ ստամոքսի մէջ սպիտակուցային նիւթերը ստամոքսեայ հիւթի ներգործութիւնից արագապէս են լուծուում: Մտի կտորները փափկանում են, մկնակների նրբաթելերը կտրուում են և մէկը միւսից բաժանուում. ճարպը ազատուում է բջիջներից, որոնց մէջ է հաւաքուում եղան կամ ոչխարի կեանքի ընթացքում և, ստամոքսի տաքութիւնով հալուած, լողում է կիսամարս կերակրի մանրացած խախտանման զանգուածի վերևով: Այդ զանգուածը մի քանի ժամանակ շարժուում է ստամոքսի ներսը և նորա պատերի երկայնութեամբ գնացող այն մկնակների կուչ գալու պատճառով պտտուում, որոնք ստամոքսի պատերն են կազմում. այդ ժամանակ մըշտապէս քաղցած արիւնը մեծ քանակութեամբ սպիտակուցային նիւթեր է կլանում: Արջապէս արդէն շատ փոխուած միսը գէպի աղիքներն է մղում: Այստեղ լեղին և պանկրէասական հիւթը ճարպը ամենափոքրիկ կտորների բաժանելով, հարկադրում են ճարպին, մսին, դատարկ մաշկերին, հիւթերին և ջրին վերջնականապէս թանձր, պղտոր, դեղնագոյն զանգուած դառնալ: Աղիքների մէջ նոցա մկնակային պատերի կծկուելուց մղուած այդ զանգուածը փոքր առ փոքր իւր մէջ պարունակած սննդարար նիւթերը կորցնում է: ճարպը կաթիլ կաթիլի, մասնիկ մասնիկի յետևից կաթնանօթներն է գնում, իսկ յետոյ էլ արեան մէջ. սպիտակուցային նիւթերը աւելի և աւելի են լուծուում, ինչքան որ աղիքների երկայնութեամբ շարժուում են, և ապա արիւնատար կամ կաթնային անօթների մէջ ծծուում: Աղբը և ջուրը միևնոյն ճանապարհով են հետևում, մինչև որ, վերջապէս, մարսած կերակրից չկլանուին բոլոր սննդարար նիւթերը և կերակրից էլ ոչինչ չ'մնայ, բացի անմարս մաշկերից և, գուցէ, մկնակային նրբաթելերի կամ ճարպի մի քանի բաժան-բաժան եղած կտորներից. այդ մնացորդները մարսու-

ղութեան խողովակից դուրս են գցուում, ինչպէս ոչինչ բանի անպէտք իրեր:

Այսպիսով բոլոր սննդարար նիւթերը, փոքր ինչ փոփոխուած, բայց իրանց սննդարար բաղադրիչ մասերը պահպանած, կամ ուղղակի արիւնն են գնում, կամ առաջ՝ կաթնային անօթները, իսկ յետոյ—արիւնը, իսկ կերակրային նիւթերի անպէտք մաշկերն էլ դուրս են գցուում: Մարսողութեան ժամանակ արիւնը, չ'գադարելով, աւագ զարկերակի ճիւղերով, փոքրիկ զարկերակներով և ստամոքսի ու աղիքների մազային անօթներով, դոներակի ճիւղերով, հետևապէս և լեարդով արագութեամբ յետ է հոսում գէպի սերտը. մի քանի վայրկեան աղիքներով հոսելով, նա մարսողութեան խողովակից սննդարար նիւթեր է ստանում և իւրաքանչիւր շրջանառութեան ժամանակ նոցանով միշտ աւելի և աւելի հարստանում: Մարսողութեան ժամանակ կրծքի ծորանը պարանոցի մեծ երակների մէջ կաթիլ-կաթիլ հարուստ կաթնային հեղուկ է թափում, որը աղիքային խողովակից նորա մէջ են բերել կաթնանօթները. և արիւնը, կրծքի ծորանի անցքի մօտով անցնելով, պարանոցից գէպի սիրտը տանող ամբողջ ճանապարհի վերոյ այդ սննդարար հեղուկը իւր հետն է տանում, իսկ սիրտն էլ նորան ամբողջ մարմնով է ուղարկում: Այսպէս ուրեմն՝ արիւնը կերակրում է մեր ընդունած կերակրով, իսկ մարմինը—արիւնով:

VIII.

ԱՐԻՒՆԸ ԻՐ ՀԱՄԸ ԱՆՊԻՏՔ ՆԻՒԹԵՐԻՑ ԻՆՉՊԻՍ Է ԸՂՍՏՈՒՄ:

53). Արիւնը ինչպէս որ միշտ սննդարար նիւթերով է հարստանում, այնպէս և պէտք է միշտ իւր մէջ գտնուած նիւթերից ազատուի. մանաւանդ որ այն նիւթերը, որոնց նա արտաթորում է, զանազանուում են նոցանից, որոնց նա իւր հետ է տանում: Արիւնը, ինչպէս մենք արդէն ասացինք, վա-

ուելիք է մկնակների, ուղեղի և մարմնի ուրիշ մասերի համար: Մարմնի մասերը այրում են արեանը, այրում են նորան, տաքութիւն յառաջացնելով, բայց առանց բոցի: Այրման ժամանակ միայն նիւթերն են փոխուում, բայց չեն կործանուում. այրուելու միջոցին ոչինչ չի կորչում: Եթէ մկնակը արեանը այրում է, նա պէտք է ուրիշ բանի փոխուի. այդ վերջինը, իբրև արդէն այրուած առարկայ, կրկին անգամ չի կարող այրուել, ուստի և մկնակը պէտք է նորանից ազատուի:

Մարմնի այրուելու ժամանակ, նորա կեանքի ընթացքում, ինչպիսի նիւթեր են ստացուում: Ես արդէն ասել եմ, որ եթէ դուք մի կտոր միս, կամ մի որ և է քանակութեամբ արիւն վերցնէիք, նոցա չորացնէիք և յետոյ այրէիք, այն ժամանակ կ'տեսնէիք, որ նորա փոխարկուում են չորս նիւթերի՝ ջրի, մոխրի, ածխածնի և ամմեակի: Մարմինը կազմուած է բորակածնից, ածխածնից, ջրածնից և, ծծումբի, լուսակրի և մի քանի ուրիշ տարրների հետ խառն, թթուածնից: Բորակածնի և թթուածնի այրուելու ժամանակ գոյացնում են ամմեակ, ջրածինը թթուածնի հետ գոյացնում են ջուր, ածխածինը — ածխային թթոււտ. լուսակրը, ծծումբը և ուրիշ տարրները գոյացնում են լուսակրա — թթոււտային, ծծմբաթթոււտային և ուրիշ աղեր: Ինչ եղանակով էլ որ մարմինը թթուանար, վառարանի մէջ արագութեամբ այրուելով արդեօք, կամ մահից յետոյ ծանր թթուելով, քայքայուելով հողի վերայ, կամ հողի մէջ, կամ կենդանի զարկերակային արիւնով կեանք ունեցած ժամանակ արագաբար թթուած լինելով — այդ բոլոր դէպքերում նիւթերը, որոնց նա այրուելու կամ թթուելու ժամանակ փոխարկուում է, միևնոյնն են երևում: Թթուելու միջանկեալ աստիճանները ինչպիսի էլ որ լինէին, միշտ վերջը մնում են՝ ջուր, ածխային թթոււտ, ամմեակ և աղեր: Այդ նիւթերը միշտ արեան մէջ մարմնի թթուելու պատճառով են գոյանում, ուստի և նա հէնց այդ նիւթերից էլ պէտք է միշտ ազատուի:

Բացի այն ջրից, որը մարմնի մէջ է գոյանում նորա պինդ մասերի թթուելու ժամանակ, մենք միշտ դարձեալ

ասհագին քանակութեամբ ջուր ենք կլանում, որը մեզ անհրաժեշտ է մեր մարմնի ներսը միշտ խոնաւ մնալու համար, մասամբ էլ այն պատճառով, որ կերակուրը այլապէս չի կարող արեան փոխարկուել, եթէ ոչ ջրի մէջ լուծուած դրութեամբ, վերջապէս, մասամբ այն պատճառով, որ մենք միշտ ներքին, ինչպէս և արտաքին լուացուելու կարիք ենք զգում. եթէ մեր մարմնի ներսը միշտ ջուր չ'մտնէր, որը փորոտիքն է լուանում և նոցա իւրաքանչիւր անմաքրութիւնից էլ մաքրում, այն ժամանակ մենք շուտով վերջիններով կ'ազատուէինք բոլորովին այնպէս, ինչպէս որ մեքենան աղտոտուում է մոխրից և մրից, եթէ նորան վատ են սրբում: Այդ պատճառով մենք պէտք է իւրաքանչիւր օր մեզ լուանող ջրի ասհագին քանակութիւնից՝ ազատուինք, բացի նորանից, որը մեր կերակրի ջրածնի այրուելուց է գոյանում: Մենք արդէն տեսանք, որ թոքերով շատ ածխածնի և արտաթորում այն ժամանակ, երբ նոցա մէջ թթուածին է մտնում: Մեծ քանակութեամբ ջուր է արտաթորում և՛ հէնց միևնոյն ճանապարհով: Գուր ինքներդ լաւ գիտէք, որ ինչքան էլ չոր լինէր այն օդը, որը շնչում էք, նա ձեր մարմնի ջրով խոնաւացած է դուրս գալիս: Մենք տեսանք նոյնպէս, որ արիւնը քրտինք է արտաթորում կաշուի քրտնագեղձերի միջոցաւ: Քրտինքը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ ջուր, որի մէջ քիչ աղ է լուծուած: Այդ պատճառով կաշին քրտնագեղձերի միջոցաւ արեան մաքրուելուն օգնում է. դոցա օգնութեամբ արիւնը ջրից ազատուում է փոքր ինչ քանակութեամբ աղի հետ միասին: Գուր պէտք է յիշէք, որ առանց ձեր գիտութեան, ձեր կաշուով շատ ջուր է դուրս գնում: Իբրև քրտնքի կաթիլներ՝ փոխանակ կաշուի վերայ նստելու, նա ուղղակի իբրև գոլորչի անյայտանում է, հետեւապէս և անտեսանելի դառնում: Կաշուի միջոցաւ արիւնից նոյնպէս փոքր ինչ քանակութեամբ ածխածնի և արտաթորում:

54). Մեզ միայն մնում է ասել, թէ՛ արիւնը ի՞նչ եղանակով է ազատում ամմեակից և աղերի մնացած մասից, որոնք կաշուի միջոցաւ չեն դուրս գալիս: Մեծ քանակու-

Թեամբ ջրի մէջ լուծուած այդ նիւթերը արիւնից երիկամունքներով արտաթորուում են իբրև մեզ: Ի՞նչ բան է երիկամունքը: Գուրբ այս գործարանի մասին մանրամասնաբար յետոյ կ'իմանաք, այժմ բաւական է ասել, որ երիկամունքը ներկայացնում է մի այնպիսի երկար խողովակաձև գեղձերից կազմուած փունջ, որոնք փոքր ինչ նման են քրտնագեղձերին և միմեանց հետ միացած են իբրև կլոր զանգուած, որի ձևը ձեզ յայտնի է: Արիւնը այդ գեղձերի միջի մէջը արտաթորում է բոյորովին սյնպէս, ինչպէս որ նա քրտագեղձերի միջի քրտինքն է արտաթորում: Պարունակած նիւթը երկու երիկամունքներից մէկ ընդհանուր խողովակով կամ ծորանով միզապարկ անուանուած ընդունարանի մէջ է թափուում, որտեղից և՛ կարևորութեան համեմատ՝ դուրս է վիժուում: Ի՞նչ բան է մէզը: Մէզը իսկապէս ջուր է, որը լուծուած դրութեամբ շատ աղեր է պարունակում, առաւելապէս ամմեակ: Ամմեակը մէզի մէջ մի առանձին դրութեամբ է գտնուում, որը փոքր ինչ քանակութեամբ ածխածինութեամբի հետ է միացած և կոչուում է միզաինիւթ — (միզիտ): Եթէ միզանիւթը իսկական ամմեակ չէ կազմում, գոնեա՛նորան շատ մօտիկ է:

Այսպէս ուրեմն՝ արիւնը մաքրուում է, իրան համար անպէտք նիւթերը արտահանելով՝ 1) թորերով, 2) երիկամունքներով և 3) կաշուով: Թորերով արտաթորուում են ածխածինութեամբը և ջուրը. երիկամունքներով — ջուրը, ամմեակը, և իբրև միզանիւթ էլ զանազան աղեր, կաշուով — ջուրը և մի քանի աղեր:

Արիւնը անցնելով թորերով, երիկամունքներով և կաշուով, իրանից փոքր առ փոքր դուրս է գցում իրան ծանրաբեռնող անմաքրութիւնները, մէկ նիւթը մի տեղ, իսկ միւսը մի ուրիշ տեղ, և մարմնի յիշեալ իւրաքանչիւր մասից աւելի մաքուր և աւելի թարմ է դուրս գալիս: Ածխային թթուութից ազատուելու և թթուածնի թարմ պաշար ստանալու պահանջը աւելի հարկաւոր է, քան թէ ամմեակի և աղերի արտաթորման պահանջը: Այդ պատճառով ձախ սրտատխորչից դուրս եկած ամբողջ արիւնը, նախ քան ձախ

սրտատխորչի մէջ վերադառնալը, պէտք է թորերով անցնի, իսկ երիկամունքներով անցնում է միայն նորա քիչ մասը, այսինքն այնքան, որքան հարկաւոր է սրտի իւրաքանչիւր բաւական ժամանակ փոքրիկ զարկերակները լցնելու համար, որոնք այդ գործարանների մէջ են տանում: Արիւնը միանգամից մեծ քանակութեամբ թթուածին է կլանում և նոյնպէս նշանաւոր քանակութեամբ էլ ածխածինութեամբ արտաշնչում. բայց ամմեակ և աղեր արտաթորելը նա միայն փոքրիկ կաթիլներով կարող է, այն էլ մասնիկ մասնիկի յետևից: Արեանը մաքուր և թարմ պահպանելու աշխատանքը յիշեալ երեք ճանապարհների մէջ է բաժանուում. նորա արեան մաքրութեան համար սաստիկ աշխատում են, երբ որ մենք շատ կերակուր կամ ջուր ենք ընդունած լինում և կամ՝ երբ որ շատ ենք աշխատում. իսկ, ընդհակառակը, հանգըստանում են. և դանդաղ գործում — քիչ կերակուր ընդունելուց յետ, կամ մարմնի հանգստութեան ժամանակ:

IX.

ԲՈՒՐ ԲՆՅԱՆՐԱԾԻ ՀԱՄԱՌՈՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ:

55). Այժմ դուք արդէն կարող էք հասկանալ, թէ մենք մեր ընդունած կերակրով ի՞նչպէս ենք ապրում: Կերակուրը իւր այրուելու ընդունակութեամբ զօրութեան աղբիւր է կազմում: Նա այրուելով՝ տաքութիւն է զարգացնում, իսկ տաքութիւնը զօրութիւն է: Գուրբ կարող էիք վառարանի մէջ այն նիւթերը այրել, որոնց իբրև կերակուր ենք ուտում. այն ժամանակ այն տաքութիւնով, որը դուրս միջոցին դուրս է գալիս, դուք կարող էիք շոգեկառքը կամ ջրաղացը շարժել. կարելի էր նոյնպէս այդ նիւթերը վառօգ դարձնել և վերջինով թնդանօթներ արձակել, կամ ժայռեր ճայթեցնել: Այդ բոլորի փոխանակ դուք ընդունած կերակուրը ձեր սեպհական մարմինների մէջ այրում էք և դորանով զօրութիւն ձեռք բերում:

Վերակուրը՝ մարտոգութեան խողովակի մէջ ընկնելով, այնտեղ մարսուում է. սննդարար նիւթերը շատ փոքր փոփոխութիւնից յետ լուծուում են և անսնունդ նիւթերից բաժանուում, իսկապէս, արեան մէջ մտնելով, նորա մասը դառնում: Սրտի անընդհատ հարուածներով մղուած արիւնը ամբողջ մարմնով անցնում է և նեղ մազային անոթների մէջ համարեալ թէ մարմնի բոլոր մասերի ամենափոքր մասնիկները լուանում: Արիւնը միշտ դիւրավառ նիւթով հարուստ լինելով (կերակրի յաճախ մատակարարելու պատճառով) իւրաքանչիւր իւր շրջանառութեան ժամանակ թոքերի օդից թթուածին է ծծում. այդպիսով արիւնը անդադար ամբողջ մարմնով շարժուում է, բերելով՝ մկնակներին, ուղեղին, ոսկրներին, նեարդերին, կաշուին և գեղձերին նիւթ՝ այրուելու համար և թթուածին՝ այդ նիւթը վառելու համար: Ամենայն տեղ, յայտնի ժամանակում, թթուումն և այրումն է լինում, մի քանի տեղերում աւելի սաստիկ, իսկ ուրիշ տեղերում կամ ուրիշ ժամանակ—աւելի թոյլ. այդ այրուելու թթուածնով հարուստ զարկերակային արեանը թթուածնով պակաս երակային արեան է փոխում:

Շատ տեղերից, ուր թթուումն է յառաջանում, երակային արիւնը բաւականին տաքացած է գնում, եկող զարկերակային արիւնից աւելի տաքանալով. այդ տաք արիւնը, խառնուելով մնացածի հետ և արագապէս էլ ամբողջ մարմնով անցնելով, նորա մէջ տաքութիւն է պահպանում. անդադար մազային անոթներով անցնելով, ինչպէս անթիւ փոքրիկ օջախների միջով, արիւնը անշուշտ պէտք է տաք լինի: Ահա թէ՛ մենք ի՞նչու համար ենք տաք: Բայց մի քանի տեղերից երակային արիւնը աւելի սառն է դուրս գալիս, քան թէ այնտեղ եկող զարկերակային արիւնը, ինչպէս օրկաշուից, որովհետեւ կաշուի մազային անոթներով անցնելու ժամանակ արիւնը շատ տաքութիւն է տալիս այն բոլոր առարկաներին, որոնց կաշին կպչում է, իսկ նոյնպէս շատ տաքութիւն է կորցնում՝ հեղուկ քրտնքի բոլորչի դառնալու ժամանակ: (Այդ պատճառով և՛ մենք մեր հագած շորը և անկողինը տաքացնում ենք, երբ քնում ենք): Ահա թէ՛ ի՞նչու

համար, մենք քանի որ առողջ ենք, մեր մարմնի տաքութեան աստիճանը այն յայտնի աստիճանից, որը արեան տաքութեան աստիճան է կոչուում, երբէք բարձր չէ լինում (20 ֆ. կամ 37 Ց.): Թթուիլը ամենայն տեղ է լինում, նոյնիսկ արեան և թէ՛ նորանով լուացուած մարմնի մասերի մէջ, որոնց ունեցած կորուստները նա պէտք է վարձատրէ: Ամենայն տեղ փոփոխութիւններ են յառաջանում: Փոքր առփոքր, կտորը կտորի յետեւից, մէկ տեղում արագ, միւսում ծանր, բայց և այնպէս՝ մարմնի իւրաքանչիւր մասը քայքայուում է և միւսնոյն ժամանակ արիւնով անդադար նորոգուում, այն էլ նորոգուում է իւր բնական կազմակերպութեան համաձայն: Թէ և միւսնոյն արիւնը մազային անոթներով է անցնում, բայց մարմնի զանազան մասերում նա զանազան իրեր է արտադրում: Մկնակի մէջ նա արտադրում է մկնակ, նեարդի մէջ—նեարդ, ոսկրի մէջ—ոսկր, գեղձերում—հիւթ: Թէ և արիւնը ամբողջ մարմնում միւսնոյն է, բայց նա նորա զանազան մասերին զանազան յատկութիւններ է տալիս—մէկ գեղձի մէջ նորանից թուր է պատրաստուում, միւսում—ստամոքսեայ հիւթ, ոսկրները նա ամրացնում է, ուղեղին տալիս է զգալու, մկնակին էլ կուչ գալու ընդունակութիւն: Երբ որ երկգլխեան մկանը կուչ է գալիս և ձեռքը բարձրացնում, այն ժամանակ նա աշխատանք է կատարում: Այդ աշխատանքը կատարելու համար հարկաւոր եղած զօրութիւնը մկանը ստանում է արիւնից, իսկ արիւնը—կերակրից: Այդ պատճառով բոլոր աշխատանքը, որը մենք կատարելու ոյժն ունենք, յառաջանում է մեր կերակրով, նորա թթուելու ժամանակ, այնպէս, ինչպէս որ շոգեմեքենայի զօրութիւնը ստացւում է վառելիքի թթուելուց: Բայց դուք գիտէք, որ շոգեմեքենայի մէջ միայն զօրութեան կամ գործունէութեան—էներգիայի, ինչպէս նորան անուանում են, փոքր մասն է անիւի շարժման վերայ գնում: Նորա աւելի մեծ մասը անօգուտ կորչում է նոյն իսկ մեքենայի թէ՛ շըրջապատող օդի և թէ՛ ուրիշ առարկաների տաքացնելու վերայ: Նոյնը լինում է մեր մարմնի հետ. այն զօրութեան վերայ, որին կարող է մեր մարմինը զարգացնել, միայն կերակրով

զարգացած զօրութեան փոքր մասն է գնում. զօրութեան
 փնացած մասը մեր մարմնի տաքութեան պահպանելու վերայ
 է գործադրուած: Միայն մարմնի այդ տաքանալը անօգուտ չէ,
 նա անհրաժեշտ է մեր կեանքի պահպանման համար:

Արեան հոսանքը, մարմնի բոլոր մասերը անցնելով, նո-
 ցա նորոգելով և թարմացնելով, իւր հետ իւրաքանչիւր գոր-
 ծարանից նոյնպէս կ'տանի այն նիւթերը, որոնք արդէն նո-
 րա համար անպէտք են դարձել: Ինչպէս որ իւրաքանչիւր
 մասը կամ գործարանն առանձին յատկութիւններ ունի և
 զանազան գործարաններ էլ զանազան աշխատանք են կա-
 տարում, այնպէս էլ զանազան գործարաններում գոյացած,
 գործածմանն անպէտք նիւթերը, բոլորովին միանման չեն,
 թէ և բոլորը նման են մէկը միւսին նորանով, որ այրման
 (թթուելու) արտադրութիւններ են ներկայացնում: Մկնակի
 թթուելուց փնացածները նման չեն գլխի ուղեղի կամ լեար-
 դի թթուելուց փնացածներին: Վարող է լինել և՛ այնպիսի
 գէպը, որ արիւնով մէկ գործարանից տարուած անպէտք նիւ-
 թերը դարձեալ օգտաւէտ կ'լինին միւսի համար և այդպիս-
 օով կարող են երկապատիկ աշխատանք անել, բոլորովին այն-
 պէս, ինչպէս որ գալ հայթայթելու ժամանակ ստացած և
 գաղային գործարաններից դուրս գցուած խէժը թանգ գին
 ունի ներկարարական գործարանների համար: Այն ինչ մարմ-
 նի զանազան մասերի արդէն գործածմանն անպէտք նիւթե-
 րը, մէկ տեղից միւսը անցնելով, վերջապէս շատ հասարակ
 նիւթերից կազմուած են երևում, նոցա բոլոր զօրութիւնը
 անյայտանում է, կորչում է գրեթէ՛ այրուելու բոլոր ըն-
 դունակութիւնը. նորա, իբրև ո՛չ մի բանի համար անպէտք
 առարկաներ, մարմնից արտահանուած են միզանիւթի կամ
 ամմեակի, ածխածիւթուտի և կամ աղերի ձևով: Այդ գրու-
 թեամբ կերակուրը, մարմնի մէջ շատ կամ քիչ միջոց մնա-
 լուց յետ, անզօրացած նորանից հողը կամ օդն է դուրս
 գալիս, որտեղից որ վերցնուած էր: Սորա վերայ և՛ առայժմ
 կանգ առնենք:

X.

ՄԵՆՔ Ի՞ՆՉՊԷՍ ԵՆՔ ԶԳՈՒՄ ԵՒ ՅԱՆԿՆԵՐԸ:

56). Մենք մէկ բան ևս պէտք է հետազննենք այն
 պատճառով, որ վերջացնենք այս հետեւեալ հարցի պատաս-
 խանը, թէ՛ ի՞նչու ենք շարժուում: Մենք շարժուում ենք,
 ինչպէս ասուած էր, այն պատճառով, որ մեր մկնակները կուչ
 են գալիս. սովորաբար մկնակները կուչ են գալիս գլխի ու-
 ղեղի մէջ ծագած մի որ և է բանից, որը մեր կամքով գլխի
 ուղեղից անցնում է ողն ուղեղը, իսկ վերջնով, և յետոյ
 էլ յայտնի նեարդերով՝ մկնակները գնում: Այդ ինչ մի բա-
 նը, որին մենք կարող ենք նեարդային գրգռումն անուա-
 նել, մկնակին կուչ-գալ է ստիպում: Բայց մեր կամքը վար-
 ժեցնելու համար մեզ ի՞նչն է գրգռում: Ի՞նչն է յառաջաց-
 նում նեարդային գրգռումն: Մարմնի բոլոր նեարդերը մկնակ-
 ների մէջ չեն վերջանում: Նոցանից շատերը վերջանում են,
 օր., կաշուի մէջ, այն պտուկներում, որոնց մասին մի քիչ
 առաջ խօսեցի: Վերջին նեարդերը նեարդային գրգռումները
 գլխի ուղեղից չեն կարող կաշուին տալ: Մեր կամքի ուժով
 մենք կարող ենք մեր մկնակներին ստիպել կուչ գալ, միայն
 թէ կամքի ոչ մի ջանք չի կարող մեր կաշուի մէջ փոփոխու-
 թիւն յառաջացնել: Այդ նեարդերը ի՞նչի համար են ծա-
 ույում: Եթէ դուք ձեր մատը ծակէք, կամ նորան դիպչեք,
 այն ժամանակ կ'զգաք թէ՛ դիպչելը և թէ՛ ծակոցը. դուք
 կ'ասէք, որ ձեր մատի մէջ զգացողականութիւն կայ: Են-
 թագրեցէք, որ դուք կտրեցիք այն նեարդերը, որոնք ձեր
 մատի կաշուից, ձեռքի երկայնութեամբ, մինչև գլխի ուղեղն
 են գնում. այն ժամանակ ի՞նչ կ'պատահէր: Եթէ մատը կըր-
 կին ծակէիք, կամ նորան դիպչէիք — այն ժամանակ չէիք ըզ-
 գալ ո՛չ ծակոց և ո՛չ շոշափումն: Գուր այն ժամանակ կ'ա-
 սէիք, որ մատի միջի զգացողականութիւնը կորցրել էր: Հե-
 տեւապէս, մատի մէջ այդ վերջացած նեարդերը միւսնոյն նը-
 պատակի համար չեն ծառայում, ինչպէս և մկնակների մէջ
 վերջացած նեարդերը: Վերջինները գրգռման հարուածները

գլխի ուղեղեց մկնակին են տալիս և, շարժումներ արտադրող գործիքներ լինելով, կոչում են շարժող նեարդեր: Առաջիններն էլ գրգռման հարուածները կաշուից գլխի ուղեղն են անցկացնում և, զգացմունքներ յանձնելու գործիքներ լինելով, կոչում են զգացողական նեարդեր: — Կաշուի բոլոր մասերը այդ զգացողական նեարդերով են մատակարարուած, միայն ո՛չ միատեսակ բանակութեամբ: Կաշուի այն մասերը, ուր նոքա շատ են, խիստ զգացողական են անուանուում, ինչպէս որ մեր մատներն են, իսկ որտեղ նոցանից քիչ կայ, քիչ զգացողական են կոչուում: Բացի կաշուից, զգացողական նեարդեր գտնուում են նա և՛ մարմնի ուրիշ մասերում:

Շարժող նեարդերը ամեն տեղ միանման են — նոքա բոլորը միայն մէկ աշխատանք են կատարում — այսինքն մկնակներին հարկադրում են կուչ գալ: Բայց զգացողական նեարդերը մի քանի տեսակ են և նոցա իւրաքանչիւր տեսակն էլ միայն մէկ առանձին աշխատանք է կատարում: Աշխատանքի զանազան տեսակները, որոնք զանազան տեսակ զգացողական նեարդերով են կատարուում, զգայարանք են անուանուում: Ամբողջ մարմնի մէջ կաշուի նեարդերով կատարուած աշխատանքը շօշափողական զգայարանք է կոչուում: Շօշափմամբ մենք իմանում ենք, — առարկաները հա՞րթ են, թէ խորտ ու բորտ, թա՞ց են, թէ չոր, տա՞ք են թէ սառն, և այլն: Բայց շօշափման միջնորդութեամբ չի կարելի աղը շաքարից զանազանել: Բերանի մէջ աղ և շաքար գնելով, դուք իսկոյն նոցա համով կ'ընկէք. այն ժամանակ մեզ ճաշակի (համի) զգացմունք տուող ուրիշ տեսակ զգացողական նեարդեր գործ կ'ածէք: Մենք ունինք նոյնպէս՝ հոտոտելեաց, լսելեաց եւ տեսանելեաց նեարդեր: Շօշափման նեարդերի մօտ, կաշուի այն տեղում, ուր նոքա վերջանում են, կամ աւելի լաւ է ասել, սկսուում են, երբեմն լինում են (իսկ երբեմն և՛ չեն լինում) նեարդերի ծայրերին կպած փոքրիկ առանձին գործարաններ — շօշափման փոքրիկ գործարաններ: Ճաշակելեաց և հոտոտելեաց նեարդերը նոյնպէս վերջանում են, կամ աւելի ճիշտն ասած, սկսուում են առանձին գործարան-

ներով: Լսելեաց և տեսանելեաց նեարդերի սկզբին մենք աւելի զարգացած և բաղադրեալ գործարանների ենք հանդիպում — ականջին և աչքին: Բոլոր այդ զգայարանաց գործարանների հետ դուք յետոյ կ'ծանօթանաք. առայժմ ես ձեզ կասեմ միայն, որ զանազան զգացողական նեարդերի օգնութեամբ մենք, քանի որ արթուն ենք և չենք քնել, արտաքին աշխարհից տպաւորութիւններ ենք ստանում — զգացմունք դիպչելուց (զգացմունք խորտուբորտութեան և հարթութեան, տարութեան և ցրտութեան), զգացմունք ակտիւ և անակտիւ հոտերի, զգացմունք զանազան տեսակ համի, զգացմունք բոլոր տեսակ ձայների, զգացմունք առարկաների գոյների և ձևի: Կաշուով, քթով, լեզուով և քիմքով, ականջներով և, ամենից առաւել, աչքերով՝ արտաքին աշխարհի տպաւորութիւնները զգացողական նեարդերով միշտ գլխի ուղեղին են տրուում: Նորան նոյնպէս տրուում են մեր սեպհական մարմնով մեզ վերայ գործած տպաւորութիւնները, որոնք մեզ իմաց են տալիս, թէ՛ որտե՞ղ են գտնուում մեր անդամները և ի՞նչ են անում մեր մկնակները: Ուղեղի մէջ տպաւորութիւնները զգացմունքների են փոխուում, այսինքն գիտակցական են դառնում: Նոքա ուղեղին զրգուում են գործել, իսկ ուղեղը նոցա վերայ ներգործում է մեզ համար անյայտ եղանակով, կառավարում է մարմնին, և նորա գործողութիւններն էլ գիտակցական, խոհուն կամքի ձևով են արտայայտուում:

ԲՆԱԽՍԵՍՈՒԹԵԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ ԲԵՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ:

Կ Մ Ա Խ Ք:

I և **II** կ. **n**—կրծոսկր. կ,կ,կ—կողեր. կ,կ—կողա-
յին կռճիկներ. թ—թիակ. ա—անրակ. ծ—ծնօտ. ք—բա-
զուկ. ծղ—ծղիկ. ա—արմունկի ոսկր. ա—ազդր. մ: **n**—
մեծ ոլոգ. վ. **n**—փոքր ոլոգ:

Պատկեր 1. Ճագարի փորոտիքը, ինչպէս նոքա երե-
ւում են, եթէ կծքի և որովայնի խոռոչը առանց մի որևէ
ուրիշ կտրուածքի բացանենք: Ս—ստոծանի. ս. խ—սըր-
տախորչեր. ն—նախասրտեր. թ. գ—թոքային զարկերակ. ա.
գ—աւագ զարկերակ (աօրտայ). թ.թ—թոքեր, որոնք իջած
են և բռնում են միայն կրծքի յետևի մասը. լ—լանջամաշ-
կի կողքի մասերը. կ—կռճիկ՝ կրծոսկրի ծայրին. ալ.ալ—մար-
մնի այն փոքրիկ պատի մասը, որը կրծքի և որովայնի մէջ
անկտրել է մնացել. կ.կ.կ—կողերի կտրուած ծայրերը. լե-
արգը այս գէպքում աւելի մարմնի ձախ կողմին մօտիկ է
ընկած, քան թէ աջ կողմին. ստամոքսը, ձախ կողմից նախ-
աղերը. ն. ա—նուրբ աղերները. կ. ա—կշր աղիքը, որը
սաստիկ զարգացած է թէ այս և թէ ուրիշ խոտակեր կեն-
դանիների մէջ. հ. ա—հաստ աղիքը:

Պատ. 2—**A**—մարդուս մարմնը, երկայնութեամբ կէս
արած. ու. խ—գլխի և մէջքի ուղեղի խորշերը. ք. խ—բը-
թախորչը. ք—բերանը. մ. խ—մարտողութեան խողովակը,
ուղիղ ձևով ներկայացրած. ս—սիրտը. ստ—ստոծանին:

B—գլխի լայնութեամբ արած ուղղահայեաց կտրուած-
քը, **AB** գծի ուղղութեամբ. տառերը նոյնն են ցոյց տա-
լիս, ինչ որ նախընթաց նկարի մէջ:

B—բնի տրամագծօրէն կտրուածքը, **ΓΔ** ուղղութեամբ.
տառերը նոյնն են ցոյց տալիս, ինչ որ նախընթաց նկա-
րի մէջ:

Պատ. 3—Վերին անդամների ոսկրները երկգլխեան մը-
կանի հետ միասին: Երկու ջլերը, որոց միջնորդութեամբ
այդ մկնակը թիակին է կպած, ջ—ի մէջ են երևում. մ.
կ.—ցոյց է տալիս՝ մկնակի կցուիլը ծղիկ ոսկրին, հետևա-
պէս և զօրութիւն գործածելու կետը. ք. **n**—յենման կեան
է՛ բազկի ստորին ծայրը, որի վերայով է շարժւում ծղոսկրի
վերին ծայրը (արմնկոսկրի հետ միասին). ծ—ձեռքը (բարձ-
րացնելու ծանրութիւն):

Պատ. 4—Արեան կարմիր և սպիտակ գնդակները—մե-
ծացրած. **A**—չափաւոր մեծացրածները: Վարմիր գնդակները
կարգ-կարգ են դասաւորուած, ինչպէս դրամների շարքերը.
a **a**—ի մէջ արեան երկու սպիտակ գնդակներ են երևում:
B—արեան կարմիր գնդակներն են, որոնք աւելի շատ են
մեծացրած և էլ երևում են առջևի կողմից. **C**—միւսնոյն
գնդակներն են, միայն կողքից երեւացող. **Δ**—միւսնոյն գըն-
դակներ են, շարք-շարք դասաւորուած, միայն աւելի ևս մե-
ծացրած. **E**—կարմիր գնդակն է, որը ջրով մատակարարուե-
լուց ուռել է և կըր գունդ դարձել: **F**—մեծացրած սպի-
տակ գնդակ է, ինչպէս և **B**-ի մէջ. **G**—ևս այդպիսի գըն-
դակ է, միայն մի քանի կոշտ դուրս ընկած ոստերով. **E**—
նոյնպիսի գնդակ է, որը զարգացած է քացախաթթուտով
և ցոյց է տալիս միջուկը. մեծացրած է այնքան, ինչքան որ
Δ-ի մէջ: **H**—արեան կարմիր գնդակն է բոլոր կողմերից
դուրս եկած ոստերով: **J**—նոյնպիսի գնդակ է՝ միայն ծայրե-
րի ոստերով:

Պատ. 5—Ոչխարի սիրտը, ինչպէս նա երևում է, երբ
որ մարմնից հանած է և երկու թոքերի մէջ է գտնուում:
Սրտի շապիկը հանած է, բայց էլ ուրիշ բան չկայ կտրած.
ա. ա. ն—աջ նախասրտի յաւելուածն կամ ականջն է. ա.
ձ. ն—ձախ նախասրտի յաւելուածն կամ ականջն է. ա. **u**.—
աջ սրտախորշը. ձ. **u**—ձախ սրտախորշը. վ. **u**. **ե**—վերին
սնամէջ երակը. **ս. ս.** **ե**—ստորին սնամէջ երակը. թ. **գ**—

Թորային զարկերակը ա. զ—աւագ զարկերակը—աօրտայ. սի. զ'—աւագ զարկերակի անանուն ճիւղը, որը ենթանրակի և բներակի զարկերակների է բաժանուում. Թ. Թ—Թոքերը. շ. փ—շնչափողը. 1—անընդմիջուող կապը—Թորային զարկերակի և աւագ զարկերակի մէջ առաջուայ եղած հաղորդակցութեան մնացորդը. 2, 2—սրտախորշերի հիմքի մօտ գտնուած ճարպի խմբերը, որոնք նախասրտերի մեծ մասն են ծածկում. 3—այն ճարպի շերտը, որը երկու սրտախորշերի միջի սահմանն է ցոյց տալիս. 4—շնչափողը ծածկող ճարպի խմբերը:

Պատ. 6—Սրտի և անոթների մօտաւորապէս գծած պատկերը, արեան շրջանաւորութիւնը ցոյց տալով, եթէ յետեից նայենք, այնպէս որ տեսնողի ձախ կողմը նկարի մէջ սրտի ձախ կողմին է համապատասխանում. 6. ն—ձախ նախասիրտը. 6. ս—ձախ սրտախորշը. ա. զ—աւագ զարկերակը՝ աօրտայ. զ'—մարմնի վերին մասը գնացող զարկերակները. լ. զ—լեարդային զարկերակը, որը լեարդին մատակարարում է իւր արեան մի մասով. ե'—մարմնի վերին մասի երակները. ե''—մարմնի ստորին մասի երակները. դ. ե—գունեակը. լ. ե—լերդային երակը. ս. ս. ե—ստորին սնամէջ երակը. վ. ս. ե—վերին սնամէջ երակը. ա. ն—աջ նախասիրտը. ա. ս—աջ սրտախորշը. Թ. զ—Թորային զարկերակը. Թ—Թոքերը. Թ. ե—Թորային երակը. կաթ. ա—կաթնանոթները. աւ. ա.—աւանոթները. կ. ծ—կրծքի ծորանը. մ. խ—մարտողութեան խողովակը. լ—լեարդը: Սլաքները ցոյց են տալիս արեան, աւշային հիւթի և կերակրային հիւթի հոսանքի ուղղութիւնը: Զարկերակային արիւն պարունակող անոթները հաստ գծերով են քաշած, այն ինչ երակային արիւն տանող անոթները բարակ գծերով են նկարած:

Պատ. 7—Երակների կտրուածքը փականների հետ միասին: Աերեի նկարի մէջ արիւնը դէպի սիրտն է հոսում սըլաքների ուղղութեամբ, իսկ ներքեի նկարում դոցա հակառակ: **B B**—դէպի մաղային անոթները դարձած կողմն է, իսկ **C C**—դէպի սրտը դարձած կողմն:

Պատ. 8—Ոչխարի սրտի աջ կողմը. ա. ն —աջ նախասրտի

խորշը. վ. ս. ե—վերին սնամէջ երակը. ս. ս. ե—ստորին սնամէջ երակը (նոցա իւրաքանչիւրի մէջ կէտի ընչացքի կըտոր է մղած). Զ—կէտի ընչացքի մի կտորը, որը նախասրտի և սրտախորշի մէջ գտնուած անցքով նախասրտից սրտախորշն է մտցրած. Ծ—կէտի ընչացքի մի կտորը, որը պսականման երակի մէջ է մղած ա. ս—աջ սրտախորշը. եփ. եփ—եռփեղկեան փականի երկու փեղկերը. երրորդը նոցա միւս կողմից հաղիւ է երևում, Զ—նոցա մէջ դրած կէտի ընչացքի կտորը: Երկու փեղկերի մէջ ջլային լարերի միջնորոնորդութեամբ նոցա կպած պ. մ'—պտկածե մկնակնէ երեւում, որը սրտախորշի պատի այն մասին կցուելու տեղից է կտրած, ինչպիսին որ հանած է: Աերեից սրտախորշը ձագարած է վերջանում և փոխարկուում Թորային զարկերակի. տ. զ—կիսալուսնաձև կ. փ—փականի գրպաններից մէկն է, որը բոլորովին է երևում, իսկ միւսը—միայն մասամբ է ցոյց տուած. 1—սրտախորշի կտրուած պատը. 2—նախասրտի և սրտախորշի մէջ գտնուած օղակի դրութիւնը. 3—նախասրտի պատը. 4—նախասրտի և Թորային զարկերակի մէջ գտնուած ճարպի խմբերը:

Պատ. 9—Սրտի անցքերը, ինչպէս որ նոքա վերեից երևում են, երբ նախասրտերը և մեծ արիւնատար անոթները կտրուած են. Թ. զ—Թորային զարկերակը՝ իւր կիսալուսնաձև փականներով. ա. ն. ս—աջ նախասրտի և սըլտախորշի մէջ գտնուած անցքը—եռփեղկեան փականի երեք փեղկերի հետ միասին (եփ. եփ. եփ'). 6. ն. ս—ձախ նախասրտի և սրտախորշի մէջ գտնուած անցքը՝ երկփեղկեան փականի երկու փականների հետ միասին. կ. ը. պսակաձև երակի մէջ մղած կէտի ընչացքի մի կտորը: Զախ կողմի վոյս 6. ն. ս—հատուածը նախասրտի ականջովն է արած. դորանից և՛ ատամաւոր տեսք ստացուեցաւ, որը կըտրուած երևացող մասներից յառաջացաւ:

Պատ. 10—Սրտի անցքերի ձևը ներքեից, երբ որ սըլտախորշերը կտրուած են. ա. ն. ս—նախասրտից դէպի սըլտախորշը տանող աջ անցքը, որը եռփեղկեան փականի եփ. եփ և եփ—երեք փեղկերով է շրջապատուած. նոքա ձգուած

են ինչ մի ծանրութիւնով, որը ջլային լարերին է կպած. 6. ն. ս — նախասրտի և սրտախորշի մէջ գտնուած ձախ անցքը, որը նոյն կերպով երկփեղկեան փականի երկի եւ երկի երկու փականներով է շրջապատուած թ. զ — թոքային զարկերակի անցքը, որի մօտ կիսալուսնաձև փականները մօտեցան և կպնուեցան են. ա. զ — աւագ զարկերակի անցքը՝ իւր կիսալուսնաձև փականներով միասին: Նկարի չ'ստուերացրած մասը, սկսած ա. ն. ս — ից մինչև 6. ն. ս — ձագար է ձևազնուում, ինչպիսին որ տեսանք 8-դ պատկերի վերայ:

Պատ. 11 — Ոչխարի սրտի ձախ կողմը (բացարած). թե. թ — թոքային երակներն են, որոնք չորս անցքերով ձախ նախասրտի մէջ են բացուում, ինչպէս ցոյց են տալիս նոցա մէջ դրած կետի ընչացքի ձողերը. Զ — նախասրտից դէպի սրտախորշը մղած ձողն է, որը անց է կացրած նոցա մէջ եղած անցքով. Ծ — պսականման երակի մէջ դրած ձողն է, որը թէ և ձախ նախասրտի հետ կապ չ'ունի, այնուամենայնիւ այնպիսի տեղ է գտնուում, որ և՛ նորան հարկաւոր է կտրել, եթէ ցանկանում ենք նախասիրտը բաց անել. երկի. երկի — երկփեղկեան փականի երկու փեղկերն են (երկփեղկան փականը իսկականին մօտաւորապէս է գծագրած). պ. մ. պ. մ — սրտախորշի կտրած մասին պատկանող պտկաձև մկաններն են. 6. 6 — սրտախորշից դէպի աւագ զարկերակն գնացող ձողն է. ա. զ — աւագ զարկերակի ճիւղն է (տե՛ս պատ. 5). թ. զ — թոքային զարկերակը. վ. ս. ե — վերին սնամէջ երակը. 1 — Սրտախորշի կտրած պատը. 2 — նախասրտի պատը, որը նախասրտից դէպի սրտախորշը տանող անցքի մօտ կտրուած է. 3, 3 — նախասրտի կտրած պատի միւս մասերը. 4 — սրտախորշի հիմքը շրջապատող ճարպի կումբը (տե՛ս պատ. 5):

Պատ. 12 — Շան ստոծանին, եթէ նորա վերայ նայենք ներքեից, կամ փորի կողմից. ս. ս. ե — ստորին սնամէջ երակը. որ — որկորը. ա. զ — աւագ զարկերակը. ս. ջ — լայն, պայծառ ջլային միջավայրն է, որը սաստիկ զանազանուում է ճառագայթաձև գնացող մկանային նրբաթելերից մ. ն. մ.

ն — որոնք գնում են դէպի կողերը և ողերի առաջին մասերը, (Զ, Ծ):

Պատ. 13 — Մարմնի մօտաւորապէս արած կտրուածքը՝ Ա — ներշնչման Ժամանակ. Բ — արտաշնչութեան Ժամանակ. 2. փ — շնչափողը. կ. ո — կրծոսկրը. ս — ստոծանին. պատ. ո — որովայնի պատերը: Նկարի վերայ, ստուերացրած մասերը կանգնած օդն են ներկայացնում իսկ չ'ստուերացրած մասը, որը միայն Ա-ի մէջ է գտնուում, վերեից եկող օդն է ցոյց տալիս:

Պատ. 14 — Շան չորս կողերի ձևը՝ մէջկողեան մրկ-նակների հետ միասին. կ. կ. կ — կողերը. կ. կ — կռճիկները. մ. մ. մ — կողերի միաւորութիւնները կրճիկների հետ. ա. ո — անոսկր մասը. ո — կրծոսկրի ոսկրային մասը. ա. մ. ա. մ — արտաքին մէջկողեան մկանը. ն. մ — ներքին մէջ-կողեան մկանը: Կողերի մէջտեղի միջի արանքումն եղած արտաքին մկանը հանած է, նորա տակ գտնուած ներքին մկանը ցոյց տալու համար:

Պատ. 15 — Սաստիկ մեծացրած կաշուի կտրուածքը. ե. մ — եղջիւրանման վերնամաշկը. փ. 2 — աւելի փափուկ շերտը ս. 2 — վերնամաշկային բջիջների ամենաստորին շերտը. ք — քրտնածորան կազմող բջիջները. այդ ծորանը շարունակուում է և՛ վերնամաշկային բջիջների մէջ. ծոր — բըրտ-նածորանի պտուտաձև մասը: Քրտնածորանի աջ կողմում կաշին բարձրանում է և պտուկ կազմում, որի մէջ փոքրիկ զարկերակը, զ — փոխարկուում է մազային անոթների, և վերջը ե — երակը գոյացնում:

Պատ. 16 — Քրտնագեղձի գալարուած ծայրը. այստեղ վերնափառը ցոյց չէ տուած. կ — գալարուած կծիկը. ծոր — խողովակը կամ ծորանը. ա. ց — մազային անոթների ցանցը, որի ներսն է գտնուում գեղձը:

Պատ. 17 — Ստամոքսը յետեի կողմից բաց արած. որ — որկորը. Ժ. ս — ստամոքսի մէկ ծայրը. մ. Ժ — աղիքների հետ միացնող նորա մի ուրիշ ծայրը. լեղ. ծոր — լեղածորանը. լեղ. պ — լեղապարկը. պ. Ժ — պանկրէասական ծորանը. ն. ա — նուրբ աղիքները:

Պատ. 18 - Նուրբ աղիքների երկու թաւերի կէս ա-
րած ձևը (Մեծացրած մտաւորապէս 50 անգամ). [Թ. Ն—
թաւի նիւթը. վ. փ—նորա վերնափառը, որի մի քանի ա-
ռանձին բջիջները ներկայացրած են վ. փ-ի մէջ. զ. Ե—
զարկերակը և երակը, նոցա միացնող մազային անոթների
ցանցի հետ միասին, որոնք շրջապատում են և ծածկում կ.—
կաթնանոթը, որը թաւի միջին մասն է բռնում և կաթնա-
նոթների ցանցով էլ՝ վերևումը — սկսում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՍՈՔ:

I. Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք.

- | | |
|---|----|
| 1) Ի՞նչ բան է բնախօսութիւնը | 9 |
| 2) Կենդանիները իրանց սեպհական կամբով են շարժ-
ւում | 9 |
| 3) Կենդանիները տաք են | 11 |
| 4) Կենդանիները տաք են, որի պատճառով և՛ շարժ-
ւում են | 12 |
| 5) Կենդանիների համար թթուածնի անհրաժեշտու-
թիւնը | 13 |
| 6) Մարմնի համար անպէտք զարձած նիւթերը | 13 |

II. ՄԵՐ ՄԱՐՄԻ ՄԱՍԵՐԸ:

- | | |
|---|----|
| 7) Անկուածները | 15 |
| 8) Կրծքի և որովայնի խոռոչները | 17 |
| 9) Ողնաշարը | 19 |
| 10) Գլուխը և պարանոցը | 21 |
| 11) Նեարդերը | 23 |
| 12) Այդ մասերի ընդհանուր դասաւորութիւնը | 25 |

III. ԵՐԲՈՐ ՄԵՆՔ ՀԱՐԺԻՈՒՄ ԵՆՔ, Ի՞ՆՉ Է ՅԱՌԱ- ՋԱՆՈՒՄ:

- | | |
|------------------------------|----|
| 13) Չեռքի ոսկրները | 26 |
|------------------------------|----|

14) Արմունկի յօդի կազմութիւնը	28
15) Մարմնի ուրիշ յօդերը	30
16) Երկգլխեան մկանի կուչ գալու պատճառով ձեռքը ծալում է	30
17) Կամքը ի՞նչպէս է ստիպում երկգլխեան մկանին կուչ գալ	36
18) Մկնակի կուչ գալու ընդունակութիւնը կախուած է նորան արիւնով մատակարարելուց	38
19) Մկնակին արեան մէջ մտած կերակուրն է զօրութիւն տալիս	40
20) Մարմնի համար անհրաժեշտ է միշտ կերակուր ստանալ	41

VI. ԱՐԵԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

21) Արիւնը մաղային անօթների մէջ	44
22) Արեան գնդակները	46
23) Արեան մակարդուիլը	48
24) Արեան շիճուկի մէջ եղած նիւթերը	51
25) Արեան միջև հանքային (միներալական) նիւթերը	53

V. ԱՐԻՒՆԸ Ի՞ՆՉՊԷՍ Է ՇԱՐԺՈՒՄ:

26) Ջարկերակները, մաղային անօթները և երակները	55
27) Ոչխարի սիրտը	59
28) Արեան շրջանառութիւնը	60
29) Արիւնը ի՞նչու համար է միայն մէկ ուղղութեամբ շարժուում. երակների միջև փականները	65
30) Սրտի միջև եռփեղկեան փականը	67
31) Թոքային կիսալուսնաձև խփները	69
32) Սրտի ձախ կողմը	70
33) Սրտի բարախումը բոլոր արեանը ստիպում է շարժուիլ	72
34) Սրտի գործունէութիւնը	75
35) Մաղային անօթները և անկուածները	79

VI. ՕԳԸ ԱՐԵԱՆԸ Ի՞ՆՉՊԷՍ Է ՓՈԽՈՒՄ. ՇՆՁԱ ՌՈՒԹԻՒՆ:

36) Երակային և զարկերակային արիւն	82
37) Ջարկերակային արեան փոփոխիլը երակային և երակայինինն էլ զարկերակային արեան	84
38) Թոքեր	85
39) Օդի նորոգուիլը թոքերի մէջ: Ոտոծանու իջնելը թոքերին ի՞նչպէս է լայնացնում	86
40) Թոքերի իսկական ծաւալը: Ներշնչում: Արտաշնչում	87
41) Ստոծանին ի՞նչպէս է իջնում	91
42) Կողերի և կրծոսկրի շարժուելու պատճառով կրծքի արկղը նոյնպէս լայնանում է	92
43) Շնչառութիւնը ակամայ գործողութիւն է	94
44) Ընդհատուող օդը. թոքերի անշարժ օդը	95

VII. ԿԵՐԱԿՈՒՐԸ ԱՐԵԱՆԸ Ի՞ՆՉՊԷՍ Է ՓՈԽՈՒՄ. ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ:

45) Ի՞նչու համար բերանի ներսը միշտ կարմիր է և խոնաւ	96
46) Կաշին ի՞նչու համար երբեմն խոնաւ է լինում: Քրտնագեղձեր	99
47) Մարսողութեան խողովակի մաղասամաշկը և նորա գեղձերը	101
48) Թքագեղձերը, ենթասամոքսայ գեղձը և լեարդը	103
49) Սննդարար նիւթերը	104
50) Սպիտակուցային նիւթերը և օսլան ի՞նչպէս են փոխուում	106
51) Կաթնային և աւշային անօթները	108
52) Սննդարար նիւթերի հետ ի՞նչ է լինում	110

VIII. ԱՐԻՒՆԸ ԻՒՐ ՀԱՄԱՐ ԱՆՊԷՏՔ ՆԻԹԵՐԻՑ Ի՞ՆՉՊԷՍ Է ԱԶԱՏՈՒՄ:

53) Արիւնից անպէտք նիւթեր հեռացնելու անհրա-

ժեշտութիւնը 113

54) Երկամունքները արիւնից միզանութի ձևով ամ-
 մեակ են հեռացնում 115

IX. ԲՈՂՈՐ ԲԱՅԱՏՐԱԾԻ ՀԱՄԱՌՕՏ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ . 117

X. ՄԵՆՔ ԻՆՉՊԷՍ ԵՆՔ ԶԳՈՒՄ ԵՒ ՑԱՆԿԱՆՈՒՄ . 121

Նկարների բացատրութիւնը 124

10) Բարձր արիւնի ճեղքումը 124

11) Բարձր արիւնի ճեղքումը 124

12) Բարձր արիւնի ճեղքումը 124

13) Բարձր արիւնի ճեղքումը 124

14) Բարձր արիւնի ճեղքումը 124

VII. ԲՈՂՈՐ ԲԱՅԱՏՐԱԾԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ . 117



15) Բարձր արիւնի ճեղքումը 124

16) Բարձր արիւնի ճեղքումը 124

17) Բարձր արիւնի ճեղքումը 124

18) Բարձր արիւնի ճեղքումը 124

19) Բարձր արիւնի ճեղքումը 124

20) Բարձր արիւնի ճեղքումը 124

21) Բարձր արիւնի ճեղքումը 124

22) Բարձր արիւնի ճեղքումը 124

VIII. ԲՈՂՈՐ ԲԱՅԱՏՐԱԾԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ . 117

23) Բարձր արիւնի ճեղքումը 124



813, 814

2013

« Ազգային գրադարան



NL0071869

« Ազգային գրադարան



NL0071868

